ԱԼԲԵՐՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ, ՀԱՅԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

ՀԱՄԱՀԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ԱՇԽԱՐՀ

6-ՐԴ
ԴԱՍԱՐԱՆ

Դասագիրք հանրակրթական
հիմնական դպրոցի համար

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2013

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

ՀՏԴ 373.167.1:931(075)
ԳՄԴ 63.3(0)3գ72
Հ 202

Խմբագիր՝ ԱԼԲԵՐՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հեղինակներ՝ ԱԼԲԵՐՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր
(ներածություն, §§ 13–27)

ՀԱՅԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր
(§§ 1–3)

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ
Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր
(§§ 4–12)

Մեթոդական մասի հեղինակ՝ ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ
Պատմաբան, մանկավարժ
(մեթոդական ապարատ, I–V բաժինների ամփոփումներ, ժամանակագրություն, բառարան)

Հ 202 Համաշխարհային պատմություն: Հին աշխարհ: Դասագիրք 6–րդ դասարանի համար/ Ա. Ստեփանյան, Հ. Ավետիսյան, Ա. Քոսյան. — Եր.: «Զանգակ» հրատ., 2013.— 160 էջ:

ՀՏԴ 373.167.1:931(075)
ԳՄԴ 63.3(0)3գ72

ISBN 978–9939–68–181–8

© «Զանգակ–97» ՍՊԸ, 2013

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատանի՛ բարեկամներ, դուք սկսում եք ծանոթանալ համաշխարհային պատմությանը: Պատմությունը գիտելիք է տալիս տարբեր ժամանակաշրջանների հետաքրքիր և արժեքավոր իրադարձությունների, պատմական դեմքերի և դեպքերի, մարդկանց ապրելակերպի, կրոնական հավատալիքների և այլնի մասին: Այս ամենի իմացությունը հարստացնում է մեր մտահորիզոնը, հնարավորություն տալիս խորությամբ ընկալելու մեր օրերի իրողությունները և անգամ ուրվագծելու ապագայի որոշ կողմեր:

Մարդկության անցած ուղին, թողած ժառանգությունը ուսումնասիրող գիտությունը կոչվում է **պատմագիտություն:**

Անցյալի քիչ թե շատ ամբողջական պատկերը վերականգնելու համար պատմագետներն օգտվում են **պատմական սկզբնաղբյուրներից:**

Դրանց մի մասը բացահայտում է անցյալի նյութական հետքերը՝ շինությունները (տներ, պալատներ, տաճարներ, ամրոցներ), աշխատանքային գործիքները, զենքերը: Այդ գործով զբաղվում է **հնագիտությունը:**

Սկզբնաղբյուրների մեկ այլ խումբ ներկայացնում է ժողովուրդների բարքերը, սովորույթները, ծեսերը, հավատալիքները: Դրանց ուսումնասիրությամբ զբաղվում է **ազգագրությունը:**

Սկզբնաղբյուրների երրորդ խումբն առնչվում է հասարակության տնտեսական կյանքի ուսումնասիրությանը՝ ապրանք, դրամ, շուկայական գներ, առևտուր և այլն: Այդ դիտանկյունից մեծ կարևորություն ունի գիտության մեկ այլ բնագավառ, որը կոչվում է **դրամագիտություն:**

Սակայն առավել կարևոր են **գրավոր սկզբնաղբյուրները՝** արձանագրություններ, գրական, գիտական և այլ բնույթի ստեղծագործություններ: Դրանցից առանձնակի կարևորություն ունեն **բուն պատմական սկզբնաղբյուրները՝** ականատեսների վկայություններ, հուշագրություններ, տարեգրություններ, պատմագրություններ և այլն:

Սկզբնաղբյուրների փաստերը կապակցելով՝ մենք հնարավորություն ենք ստանում բացահայտելու անցյալի ամբողջական պատկերը: Հասկանում ենք **պատմական տարբեր դարաշրջաններում** տեղի ունեցածի բովանդակությունն ու զարգացման արդյունքները:

Պատմական իրար հաջորդող դարաշրջանները միասին կազմում են **համաշխարհային պատմությունը:**

Այս դասագիրքը նվիրված է **համաշխարհային պատմության** առաջին խոշոր շրջանին՝ **Հին աշխարհի պատմությանը:** Այն սկսվել է մեզնից մոտ երեք միլիոն տարի առաջ:

Հնագույն շրջանում հասարակական կյանքի կազմակերպման առաջին ձևը մարդկային հոտն էր: Պատմության այդ շրջափուլի ավարտին մարդկությունը հասավ զարգացման բարձր մակարդակի: Առաջացան քաղաք–պետություններ և համաշխարհային տերություններ: Տպավորիչ են տեխնիկական ձեռքբերումները՝ քարե կացնից մինչև բրոնզե և երկաթե գործիքներ ու սարքեր: Զարգացման մակարդակի մասին են վկայում եգիպտական բուրգերը, Չինական մեծ պարիսպը, հունական տաճարները, հռոմեական ճանապարհները:

Ակնառու են նաև հոգևոր նվաճումները՝ պարզագույն հավատալիքներից մինչև բազմաստվածություն և միաստվածային կրոններ՝ բուդդայականություն, քրիստոնեություն:

Մարդկության առաջընթացի կարևորագույն ցուցանիշներից է գրի ստեղծումը: Գրային համակարգը պարզագույն պատկերագրերից հասնում է մինչև գաղափարագրեր (հիերոգլիֆ և սեպագիր) և այբուբեն:

Դասագրքում Հին աշխարհի պատմությունը ներկայացված է երեք մասով՝ **Նախնադարի պատմություն, Հին Արևելքի պատմություն, Հին Հունաստանի** և **Հին Հռոմի պատմություն:**

Ձեզ արդեն ծանոթ է, որ պատմական ժամանակը բաժանվում է տարբեր միավորների՝ տարի, տասնամյակ, դար (հարյուրամյակ) և հազարամյակ: Պատմական իրադարձությունները դրան համապատասխանեցնելու համար ստեղծվել է հատուկ **ժամանակագրական սանդղակ** (ծանոթացեք դասագրքի վերջում տրված պատկերազարդ ժամանակագրական սանդղակին)**:** Դրա մեկնակետը եվրոպացիներն ընդունել են 1 թվականը՝ Հիսուս Քրիստոսի ծննդյան տարեթիվը: Դրանից առաջ ընկած պատմական ժամանակն անվանում են Քրիստոսից առաջ (Ք. ա.), իսկ հետո ընկած ժամանակը՝ Քրիստոսից հետո (Ք. հ.):

Քրիստոսից առաջ ընկած ժամանակը հաշվարկվում է յուրահատուկ ձևով՝ տարեթվերի նվազման կարգով: Ք.ա. 200 թվականից մինչև 101 թվականը Ք. ա. II դարն է, 100 թվականից մինչև 1 թվականը՝ Ք. ա. I դարը: Ինչպես տեսնում եք, 1 թվականը չեզոք է՝ վերաբերում է թե՛ Քրիստոսից առաջ, թե՛ Քրիստոսից հետո թվարկություններին:

Սրանք են այն ընդհանուր պատկերացումները, որոնց մանրամասն կանդրադառնանք այս ուսումնական տարվա ընթացքում:

I
ԲԱԺԻՆ

ՆԱԽՆԱԴԱՐ

§1. ՀԻՆ ՔԱՐԻ ԴԱՐ (ՊԱԼԵՈԼԻԹ)

Պատմության վաղնջական ժամանակները

Հնագույն մարդկանց պատմությունը համաշխարհային պատմության առաջին շրջանն է: Այն անվանում են **նախնադար**: Մարդկության պատմության այդ վաղ շրջանն անվանում են նաև **քարի դար,** քանի որ այդ ժամանակ մարդու պատրաստած և օգտագործած պարզունակ գործիքները հիմնականում քարից (կայծքար, վանակատ և այլն) էին: Քարի դարը բաժանվում է երեք փուլի՝ **հին քարի դար (պալեոլիթ), միջին քարի դար (մեզոլիթ) և նոր քարի դար (նեոլիթ):**



Հին քարի դարն ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև Ք.ա. XII հազարամյակն ընկած ժամանակաշրջանը:

Հնագույն մարդիկ

Մարդկությունն ավելի քան 3 միլիոն տարվա պատմություն ունի: Հնագույն մարդիկ ապրել են երկրագնդի տարբեր վայրերում: Նրանց **աշխատանքային գործունեությունը** սկիզբ է առել ու զարգացել հազարամյակների ընթացքում:

Հնագույն մարդիկ ապրում և աշխատում էին խմբերով: Նրանք հաղորդակցվում էին գլխի, ձեռքերի, մատների շարժումներով՝ դրանք ուղեկցելով իմաստավորող հնչյուն-

Հինքարեդարյան մարդու բնակատեղիներ են հայտնաբերվել Եվրոպայում, Աֆրիկայում, Ասիայում, Ավստրալիայում: Այդպիսի հնագիտական բազմաթիվ վայրեր կան նաև Հայաստանում: Հատկապես հայտնի են **Ազոխի** և **Արտին** լեռան կացարանները:



Քարե հատիչ

ներով: Այդ հնչյունների հիման վրա էլ ձևավորվեց **լեզուն (խոսքը),** որն ավելի համախմբեց մարդկանց: Լեզուն մարդու կարևորագույն նվաճումներից էր:

Հնագույն շրջանում տեղի են ունեցել կլիմայի մեծ փոփոխություններ: Ամենանշանակալին **մեծ սառցակալումն** էր: Այն սկսվեց մոտ 1 միլիոն տարի առաջ: Սառցադաշտերը Հյուսիսային բևեռից տարածվեցին մինչև Եվրոպայի, Ասիայի և Ամերիկայի միջին շրջանները: Վերացան անտառներն ու բուսառատ տափաստանները: Անհետացան կենդանիների շատ տեսակներ: Այդ դաժան պայմանները ստիպեցին մարդկանց և կենդանիներին շարժվել դեպի հարավ: Միջավայրին հարմարվելու իրենց ընդունակության շնորհիվ մարդիկ կարողացան դիմանալ այդ փորձությանը:

Մեզնից մոտավորապես 100 հազար տարի առաջ կլիման կրկին սկսեց տաքանալ: Հողը նորից ծածկվեց բուսականությամբ: Կենդանիները և մարդիկ աստիճանաբար շարժվեցին դեպի հյուսիս:

Մարդկանց զբաղմունքները



Հնագույն մարդու քարե գործիքներ

Սկզբում մարդիկ ապրում էին 15–20 հոգուց կազմված փոքրիկ խմբերով՝ **նախնադարյան հոտերով**: Դրանք բնակության մշտական տարածք չունեին. սնունդ հայթայթելու համար անընդհատ տեղաշարժվում էին:

Հնագույն մարդկանց հիմնական զբաղմունքները **հավաքչությունը և որսորդությունն** էին: Հավաքչությամբ զբաղվում էին կանայք և երեխաները: Նրանք հավաքում էին վայրի ցորեն, գարի, արմատներ, հատապտուղներ, մրգեր և այլն: Որսորդությամբ զբաղվում էին

տղամարդիկ: Նրանք որսում էին մանր և խոշոր կենդանիներ՝ այծյամ, վարազ, մամոնտ և այլն: Գետերի, լճերի և ծովերի ափերին զբաղվում էին նաև **ձկնորսությամբ**: Նախնադարյան հոտերն ապրում էին քարանձավներում:

Մարդու **առաջին գործիքը հատիչն** էր: Այն քարի մի կտոր էր, որի երեք ծայրը սրված էր: Հատիչով կտրում էին, տաշում, հղկում: Հետագայում գործիքներ էին պատրաստում նաև փայտից ու ոսկորից: Ստեղծվեցին նոր գործիքներ՝ **կտրիչ, քերիչ, ծակիչ** և այլն:

Մեծ նշանակություն ունեցավ **կրակի ստացման գյուտը:** Սկզբում մարդիկ ծանոթ էին միայն կայծակից կամ հրաբխից բռնկված կրակին: Հետագայում սովորեցին կրակ ստանալ՝ փայտի կտորները շփելով կամ կայծքարի հարվածով: Կրակով տաքացնում էին կացարանը, կերակուր պատրաստում, պաշտպանվում վայրի գազաններից:

ԻՆՉՊԵՍ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵՑ ՔԱՐԱՆՁԱՎԱՅԻՆ ՈՐՄՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

XIX դարի վերջին մի հնագետ հետազոտում էր Իսպանիայի Ալտամիրա քարանձավը: Նա իր հետ տարել էր նաև դստերը: Հանկարծ աղջիկը բղավեց. «Ցուլեր, ցուլեր»: Հայրը ծիծաղեց, բայց երբ գլուխը բարձրացրեց, քարանձավի առաստաղին նկատեց բիզոնների բազմաթիվ ներկանկար պատկերներ: Բիզոններից մի քանիսը կանգնած էին, իսկ մյուսները եղջյուրներով նետվում էին թշնամու վրա: Գիտնականները չէին հավատում, որ նախնադարյան մարդիկ կարող են ստեղծել արվեստի այդպիսի գործեր: 20 տարի հետո այլ վայրերում ևս հայտնաբերվեցին նախնադարյան արվեստի մեծաքանակ գործեր:

Տոհմական համայնքը

Հին քարի դարի վերջում կատարվեցին հասարակական կարևոր փոփոխություններ: Ձևավորվեց ժամանակակից **բանական մարդը (մոտ 40–35 հազար տարի առաջ):** Մարդկանց հարաբերություններն աստիճանաբար կայունացան: Ձևավորվեցին մարդկանց հասարակական նոր միավորումներ՝ **տոհմական համայնքներ:** Տոհմական համայնքը միասին ապրող արյունակից ազգականների (150–200 մարդ) խումբ էր: Ի տարբերություն հոտի՝ համայնքն ուներ բնակության մշտական տարածք: Համայնքի անդամների պատկերացմամբ՝ իրենք ծագում էին միևնույն նախնուց և պարտավոր էին հոգ տանել ու պաշտպանել մյուսներին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Մարդկության պատմության ո՞ր ժամանակաշրջանն է կոչվում քարի դար և ինչո՞ւ: Քանի՞ շրջանի է այն բաժանվում:
2. Ե՞րբ է սկսվել երկրագնդի մեծ սառցակալումը: Ի՞նչ հետևանքներ է ունեցել այն:
3. Ի՞նչ են անվանում հնագույն մարդկանց խմբերը:
4. Ինչո՞վ էին զբաղվում հնագույն մարդիկ:
5. Թվարկե՛ք աշխատանքային առաջին գործիքները:
6. Ե՞րբ է ձևավորվել բանական մարդը:
7. Ի՞նչ սկզբունքով է կազմավորվել տոհմը: Ինչո՞վ էր այն տարբերվում հոտից:

Քննարկման հարց

Ինչպե՞ս կարող էր ձևավորվել լեզուն (խոսքը), և ի՞նչ դեր էր կատարում այն մարդկանց կյանքում:

Նոր հասկացություններ, անուններ

Քարի դար, հին քարի դար (պալեոլիթ), մեծ սառցակալում, նախնադարյան հոտ, հավաքչություն, որսորդություն, ձկնորսություն, կրակի ստացում, հատիչ, կտրիչ, քերիչ, ծակիչ, տոհմ, բանական մարդ, տոհմական համայնք

§ 2. ՄԻՋԻՆ ԵՎ ՆՈՐ ՔԱՐԻ ԴԱՐԵՐ. ԱՆՑՈՒՄ ՆՍՏԱԿԵՑՈՒԹՅԱՆ

Միջին քարի դար (մեզոլիթ)

Միջին քարի դարը տևել է Ք. ա. XII հազարամյակից մինչև Ք. ա. X հազարամյակը: Այդ շրջանում մարդու սննդի հիմնական աղբյուրը դեռևս վայրի կենդանիներն էին: Կարևոր նվաճում էր **նետ ու աղեղի** հայտնագործումը: Ստեղծվեցին նաև զենքի այլ տեսակներ՝ տեգ, պարսատիկ: Դրա շնորհիվ հեշտացավ կենդանիներ որսալը:

Մարդիկ սկսեցին ընտելացնել վայրի կենդանիներին: Առաջին ընտելացված կենդանին շունն էր: Մարդիկ քարանձավներից աստիճանաբար տեղափոխվեցին գետերի և լճերի ափամերձ շրջանները: Այդտեղ ավելի հեշտ էր աշխատանքային գործունեությամբ զբաղվելը և ապրելու միջոցներ ստեղծելը:

Նորքարեդարյան բնակավայրերն առաջին անգամ ստեղծվել են Մերձավոր Արևելքում և տարածվել Պաղեստին–Իրան կորագծով: Գիտնականները դա անվանում են Բարեբեր կիսալուսնի տարածք, որն ընդգրկել է նաև պատմական Հայաստանը: Այդ առումով հատկանշական է Աղձնիքում՝ Տիգրանակերտից ոչ հեռու, հայտնաբերված բնակավայրը:

Նոր քարի դար (նեոլիթ). անցում արտադրող տնտեսության

Նոր քարի դարը տևել է Ք. ա. X հազարամյակից մինչև Ք. ա. VI հազարամյակի կեսերը:

Նոր քարի դարի կարևոր նվաճումը **անցումն էր յուրացնող տնտեսությունից արտադրող տնտեսության:** Որսորդության և հավաքչության ժամանակ մարդիկ օգտվում էին միայն բնության պատրաստի բարիքներից, այսինքն՝ վարում էին յուրացնող տնտեսություն: Նոր քարի դարում մարդիկ սկսեցին նաև իրենց աշխատանքով ստեղծել անհրաժեշտ բարիքներ: Միջին քարի դարից սկսած՝ պահում էին տարբեր կենդանիներ, նրանց



Ոսկորից պատրաստված սաեղ և ձկնորսական կարթ. Ֆրանսիա, Ք. ա. XVIII–XV հազարամյակներ

խնամում և բազմացնում էին՝ մշտապես կաթ, բուրդ, միս, կաշի ունենալու համար: Այսպես սկիզբ առավ **անասնապահությունը**:

Մարդիկ սկսեցին զբաղվել նաև **երկրագործությամբ**: Նրանք նկատեցին, որ վայրի բույսերի սերմերը ցանելով՝ կարելի է կայուն բերք ապահովել: Ստացված բերքով համայնքի անդամները ամբողջ տարին կերակրվում էին: Հետագայում նրանք սովորեցին նաև մշակել պտղատու ծառեր:

Նոր քարի դարում առաջացավ **արհեստագործությունը**: Ի հայտ եկան արհեստների կարևոր տեսակներ՝ ջուլհակություն, փայտամշակում, կաշեգործություն, խեցեգործություն և այլն:



Անասնապահության, երկրագործության և արհեստագործության զարգացման արդյունքում մարդիկ ավելի շատ բարիքներ էին ստեղծում, քան կարող էին սպառել: Բացի այդ՝ նույն համայնքը ստեղծում էր մի քանի տեսակի բարիքներ: Դա աշխատանքի արդյունքները փոխանակելու անհրաժեշտություն առաջացրեց: Մարդիկ իրենց արտադրանքը փոխանակում էին ուրիշների այլ արտադրատեսակով: Այսպես առաջացավ առևտրի սկզբնական ձևը՝ **պարզ փոխանակությունը**:

Առաջին երկրագործները

Արտադրող տնտեսությանն անցնելու շնորհիվ նստակեցությունը դարձավ կենցաղավարության հիմնական ձևը: Մարդիկ բնակվում էին որոշակի տարածքում և կավաշեն կացարաններից բնակավայր կառուցում: Բնակավայրի կենտրոնում նրանք անցկացնում էին հավաքույթներ, կատարում առևտուր: Անվտանգության նպատակով բնակատեղին պարսպապատում էին:

Նորքարեդարյան շրջանում մարդկանց քանակը կտրուկ աճեց, նրանք բնակվեցին երկրագնդի գրեթե բոլոր ծագերում:

Մարդկային հասարակության կյանքում կատարված այս փոփոխությունները անվանում են **նորքարեդարյան հեղափոխություն**:



Կավե ամանի մեջ լցված մետաղաքարը, կրակի վրա հալեցնելով, լցնում էին կավից կամ քարից պատրաստված կաղապարի մեջ և ստանում ցանկալի ձև ունեցող առարկա:

Հասարակական կյանքի կազմակերպման ձևերը

Տոհմական համայնքի կյանքի կազմակերպումը աստիճանաբար մեծացնում էր տոհմի ավագի և նրա մերձավորների դերը: Նրանք էին կայացնում համայնքի համար կարևոր որոշումները և հետևում դրանց կատարմանը:

Նոր քարի դարի ընթացքում սերտացան նույն տարածքում ապրող ազգակից և հարևան տոհմերի միջև կապերը: Տոհմերը սկսեցին միավորվել: Այսպես առաջացան **ցեղերը**:

Տոհմերի ավագներից կազմվում էր ցեղի խորհուրդը: Նրանցից մեկին ընտրում էին **ցեղի առաջնորդ**:

Ցեղի տարածքը նրա անդամների ընդհանուր սեփականությունն էր: Ցեղի անդամները խոսում էին միևնույն լեզվով: Կենցաղում առաջնորդվում էին դարերով մշակված սովորույթներով ու բարքերով:



Թրծված կավե ամանը շատ հարմար էր կրակի վրա կերակուր պատրաստելու, ինչպես նաև մթերք պաշարելու համար: Կավից պատրաստված ամանները թրծում էին վառարաններում:

Մարդկանց կրոնական պատկերացումները

Հնագույն մարդիկ բնության երևույթներին և ուժերին վերագրում էին գերբնական զորություն: Նրանց կրոնական պատկերացումները տարբեր էին:

Տոտեմապաշտությունը հավատն էր այն կենդանու, բույսի, բնության երևույթի հան-

Եվրոպայի դարաձքում կան բազմաթիվ մեծաքար (մեգալիթյան) դամբարաններ, որոնք թվագրվում են Ք. ա. V–IV հազարամյակներով:

դեպ **(տոտեմ),** որից, մարդկանց պատկերացմամբ, ծագում է տվյալ տոհմը: Տոհմը կրում էր իր տոտեմի անունը:

Ոգեպաշտությունը (անիմիզմ) հավատն էր որևէ մարմնի մեջ ամփոփված կամ ինքնուրույն գործող գերբնական ոգիների նկատմամբ:

Ֆետիշապաշտությունը անշունչ առարկաների (ծառերի, ժայռերի, քարանձավների, պաշտամունքային տարբեր իրերի) գերբնական հատկությունների նկատմամբ հավատն էր: Պաշտամունքի առարկա՝ **ֆետիշ,** կարող էին լինել, օրինակ՝ նիզակը, դաշույնը, որոնք մարդկանց համար ունեին կենսական նշանակություն:

Հմայապաշտությունը մարդկանց, կենդանիների, բույսերի, բնության երևույթների վրա ներգործելու մարդու ունակության նկատմամբ հավատն էր:

Երկրագործական համայնքներում պաշտամունքի գլխավոր առարկան արարող

Նեոլիթյան դարաշրջանից պահպանված Սկարա Բրեյ բնակավայրը Մեծ Բրիտանիայում

Երկիրն էր, որի խորհրդանիշը **Մեծ մայրն** էր: Յուրաքանչյուր տոհմ և ցեղ ուներ իր սրբատեղին: Այնտեղ էին անցկացվում ծիսական արարողությունները: Ժամանակի ընթացքում սրբազան ծեսերը սկսեցին կատարել որոշակի մարդիկ: Նրանք նաև պահպանում և սերունդներին էին փոխանցում հին ասքերն ու առասպելները: Նրանցից հետագայում ձևավորվեց կրոնի սպասավորների հասարակական խումբը՝ **քրմությունը:**

Հարցեր և առաջադրանքներ

1. Նշե՛ք միջին և նոր քարի դարերի ժամանակագրական սահմանները:
2. Ի՞նչ ձեռքբերումներ ունեցավ մարդը միջին քարի դարում:
3. Փորձե՛ք բացատրել «արտադրող տնտեսություն» հասկացությունը:
4. Ինչպե՞ս են առաջացել անասնապահությունը և երկրագործությունը:
5. Թվարկե՛ք արհեստագործության սկզբնական տեսակները: Ի՞նչ է պարզ փոխանակությունը:
6. Նախնադարյան մարդկանց հասարակական միավորման ի՞նչ ձևեր կային:
7. Ինչպե՞ս են ձևավորվել ցեղերը: Որո՞նք են ցեղին բնորոշ հատկանիշները:
8. Ներկայացրե՛ք հնագույն մարդկանց կրոնական պատկերացումները: Երկրագործական համայնքներում ո՞վ էր պաշտամունքի խորհրդանիշը:
9. Ինչպե՞ս է առաջացել քրմությունը:
10. Ի՞նչ տերմինով են բնորոշում նոր քարի դարում մարդկային հասարակության կյանքում տեղի ունեցած փոփոխությունները:

Գործնական աշխատանք

«Տրամագիր» վարժության միջոցով համեմատե՛ք հասարակության զարգացման ընթացքը միջին և նոր քարի դարերում:

Նոր հասկացություններ, անուններ

Միջին քարի դար (մեզոլիթ), նետ ու աղեղ, տեգ, պարսատիկ, նոր քարի դար (նեոլիթ), արտադրող տնտեսություն, անասնապահություն, երկրագործություն, արհեստագործություն, պարզ փոխանակություն, նստակեցություն, տոհմի ավագ, ցեղ, ցեղի առաջնորդ, Մեծ մայր, քրմություն

§ 3. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Մետաղի օգտագործումը

Ք. ա. VI հազարամյակում մարդկության պատմության մեջ տեղի ունեցավ խոշոր նվաճում: Մարդիկ սովորեցին արդյունահանել և օգտագործել մետաղը:

Մարդու օգտագործած առաջին մետաղը **պղինձն** էր: Այն փափուկ մետաղ է, այդ պատճառով քարե գործիքները լիովին դուրս չեկան գործածությունից: Դրանով պայմանավորված՝ նախնադարի պատմության այդ փուլն անվանում են **պղնձի–քարի դար (էնեոլիթ):** Այն տևել է Ք. ա. VI հազարամյակի կեսերից մինչև Ք. ա. V հազարամյակի վերջերը:

Ք. ա. IV հազարամյակում հայտնաբերվեց **բրոնզը**՝ պղնձի և անագի համաձուլվածքը: Այն ավելի ամուր էր ու կարծր: Բրոնզից պատրաստում էին տարբեր առարկաներ՝ կացին, սուր և այլն:

Բրոնզե գործիքները նպաստեցին արհեստների, երկրագործության և անասնապահության զարգացմանը: Առաջացան արհեստների նոր ճյուղեր՝ **դարբնություն, զինագործություն** և այլն:

Կարևորագույն հայտնագործություն էր նաև բրոնզե ծայրակալով **արորը**: Դրա շնորհիվ մարդիկ մշակում էին ավելի մեծ հողատարածքներ և ստանում ավելի շատ բերք:

Զարգացան փոխադրամիջոցները: Դրանցից էր **անիվավոր սայլը**:

Մեսոպոտամիայի դարում ներկայիս Շուրլանդիայի տարածքում բնակվող մարդիկ կառուցում էին ամրոցաձիգ կլոր տներ:

Հասարակության կյանքում հեղաշրջում առաջացրեց **երկաթի** մշակումը: Երկաթը սկսեց լայնորեն կիրառվել Ք. ա. II հազարամյակից:

Հասարակության շերտավորումը

Բրոնզի դարում նույնպես տեղի ունեցան հասարակական մեծ փոփոխություններ: Նախնադարյան հոտը, տոհմական համայնքը և ցեղը ունեին մեկ ընդհանուր հատկանիշ. չկար **մասնավոր սեփականություն,** և բոլոր մարդիկ **հավասար** էին: Սակայն աշխատանքային գործիքների և զենքի կատարելագործումը, տնտեսության և առևտրի զարգացումը

Բարձրաքանդակում պատկերված է անիվավոր սայլ, որով մարդիկ մշակում էին իրենց հողատարածքները: Նյու Յորքի արվեստի Մետրոպոլիտեն թանգարան

Բրոնզեդարյան ժամանակաշրջանի գրահահանդերձանք

փոխեցին հասարակության պատկերը: Սկսեց մեծ դեր խաղալ **նահապետական ընտանիքը**: Յուրաքանչյուր ընտանիքում ապրում էր մի քանի սերունդ՝ հայր, մայր, որդիներ, թոռներ, ծոռներ: Այն աշխատանքը, որը մի ժամանակ կատարում էր ողջ տոհմը, այժմ կարող էր կատարել մեկ ընտանիքը: Այդ ընտանիքն էլ յուրացնում էր իր աշխատանքի արդյունքները: Աստիճանաբար նահապետական ընտանիքին հատկացվեցին այն հողակտորները, անասունները և իրերը, որոնց նա տնօրինում էր սերնդեսերունդ: Այդ ճանապարհով ձևավորվեց **մասնավոր (ընտանեկան) սեփականությունը**:

Որոշ ընտանիքներ հարստացան՝ օգտագործելով իրենց բազմանդամությունը և հեղինակությունը: Հարուստ էին տոհմի և ցեղի առաջնորդները և նրանց մերձավորները: Իսկ մյուսներն ապրում էին համեստ կենցաղով: Աստիճանաբար **խաթարվեց մարդկանց հավասարությունը, որ բնորոշ էր նախնադարին**: Նախկին **միատարր հասարակությունը շերտավորվեց**: Ի հայտ եկան հասարակական տարբեր խմբեր՝ **տոհմացեղային ավագանի, քրմություն, զինվորներ, ցեղի շարքային անդամներ**:

Պետության առաջացումը

Շերտավորված հասարակությունը կարիք ուներ կառավարման նոր համակարգի: Ցեղերն սկսեցին միավորվել՝ կազմելով **ցեղային միություններ**: Դրանցում իշխանությունը կենտրոնացավ վերնախավի ձեռքում:

Հետագայում ցեղային միություններից ձևավորվեց **պետությունը**: Այն համախմբում էր

մարդկանց և կազմակերպում հասարակական աշխատանքներ: Դրանցից էին ջրանցքների, ճանապարհների, բնակավայրերի կառուցումը, վար ու ցանքի, բերքահավաքի կազմակերպումը և այլն: Պետությունը ապահովում էր **երկրի պաշտպանությունը թշնամիներից,** նաև կարգավորում էր նույն տարածքում ապրող **մարդկանց համատեղ կյանքը: Առաջին պետությունները ձևավորվել են Ք. ա. IV հազարամյակի վերջերին՝** խոշոր գետերի ավազաններում (Եգիպտոս, Միջագետք):

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ պղինձը չկարողացավ կիրառությունից լիովին դուրս մղել քարը:
2. Ե՞րբ է սկսվել բրոնզի դարը: Որո՞նք են բրոնզի առավելությունները:
3. Բրոնզի օգտագործումը ի՞նչ հետևանքներ ունեցավ տնտեսության մեջ և հասարակական կյանքում:
4. Ի՞նչ է նահապետական ընտանիքը:
5. Հասարակական ի՞նչ խմբեր առաջացան նախնադարյան հասարակության քայքայման շրջանում:
6. Ինչպե՞ս են ձևավորվել ցեղային միությունները: Ովքե՞ր էին ղեկավարում դրանք:
7. Ինչպե՞ս է առաջացել պետությունը: Թվարկե՛ք պետության հիմնական գործառույթները:

Քննարկման հարց

Փորձե՛ք պարզաբանել պետության նշանակությունը հասարակության համար:

Նոր հասկացություններ, անուններ

Պղնձի–քարի դար (էնեոլիթ), բրոնզի դար, նահապետական ընտանիք, մասնավոր սեփականություն, հասարակության շերտավորում, տոհմացեղային ավագանի, ցեղային միություն, հասարակական աշխատանք, պետություն

Ի ԲԱԺԻՆ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Մարդկությունն ավելի քան 3 միլիոն տարվա պատմություն ունի: Հարյուր հազարավոր տարիների ընթացքում զարգացել են մարդկանց աշխատելու, մտածելու և խոսելու հիմնարար հատկանիշները: Մարդիկ հաստատուն քայլերով առաջադիմել են կյանքի բոլոր ասպարեզներում:

   Քանի՞ փուլերի է բաժանվում քարի դարը: Որո՞նք էին հնագույն մարդկանց հիմնական զբաղմունքները: Աշխատանքային ինչ գործիքներ էին նրանք օգտագործում:

2. Միջին և նոր քարի դարերում մարդկանց կյանքում տեղի ունեցան մեծ փոփոխություններ: Յուրացնող տնտեսությունից անցում կատարվեց արտադրող տնտեսության: Երկրագործությունը, անասնապահությունը և արհեստագործությունը դարձան մարդկանց հիմնական զբաղմունքները: Մարդիկ թափառական և կիսաթափառական կյանքից անցան նստակեցության:

   Ժամանակագրական սանդղակի տեսքով ցո՛ւյց տվեք քարի դարի փուլերը: Ինչ է արտադրող տնտեսությունը: Ինչ է կոչվում և ինչպե՞ս է առաջացել առևտրի սկզբնական ձևը: Որտե՞ղ հիմնվեցին մարդկանց առաջին բնակավայրերը:

3. Միջին և նոր քարի դարերում մարդկությունն անցում կատարեց հասարակության կազմակերպման ավելի բարձր մակարդակի: Մարդկանց հասարակական համախմբման առաջին ձևը նախնադարյան հոտն էր, երկրորդը տոհմական համայնքն էր, երրորդը՝ ցեղը: Նոր քարի դարում ձևավորվեցին ցեղերը: Ի հայտ եկան կրոնական հավատալիքներ: Մարդիկ սկսեցին ուսումնասիրել շրջապատող աշխարհը՝ փորձելով ներազդել նրա վրա:

   Ինչ է տոհմական համայնքը, ինչո՞վ է այն տարբերվել մարդկային հոտից: Բնութագրե՛ք ցեղը, գծապատկերի տեսքով ներկայացրե՛ք նրա կառավարման համակարգը:

4. Ք.ա. VI հազարամյակի կեսերին մարդկության պատմության մեջ տեղի է ունեցել ևս մի կարևոր իրադարձություն: Մարդիկ հայտնագործեցին մետաղը, որով պատրաստում էին աշխատանքային գործիքներ, զենքեր, զարդեր և կենցաղային իրեր: Մարդու օգտագործած առաջին մետաղը պղինձն էր:

> *Ինչ փոփոխություններ առաջացրեց մետաղի օգտագործումը մարդկանց կյանքում:*

5. Փոփոխությունները նշանակալից էին նաև հասարակական կյանքում: Խախտվեց վերջինիս ավանդական միատարրությունը և մարդկանց հավասարությունը: Այս նոր հասարակությունը կառավարելու համար ստեղծվեց պետությունը:

> *Ինչ է ցեղային միությունը: Հասարակական ինչ մեծ խմբեր ձևավորվեցին: Թվարկեք պետության գործառույթները:*

ՀՆԱԳՈՒՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 4. ԵԳԻՊՏՈՍ

Նեղոսի պարգևը

Եգիպտոսը Աֆրիկայի հյուսիս–արևելքում է՝ **Նեղոս** գետի ափերին: Այդտեղ է ձևավորվել ու զարգացել Հին Եգիպտոսի պետությունը: Նեղոսն աշխարհի ամենաերկար գետն է (երկարությունը՝ մոտ **6700 կմ**): Հորդառատ անձրևներից և ձնհալից Նեղոսի մակարդակն ամռանը բարձրանում էր և ողողում ափերը՝ պարարտացնելով հողը: Ողողվող հողերից արևելք և արևմուտք անծայրածիր անապատ էր, որտեղ անձրևներ չէին տեղում: Նեղոսը ջրի միակ աղբյուրն էր և կյանք էր պարգևում շրջակայքում ապրող մարդկանց: Պատահական չէ, որ հույն պատմիչ **Հերոդոտոսը** Եգիպտոսն անվանել է **«Նեղոսի պարգև»**:

Բնակավայրեր էին առաջանում այնտեղ, որտեղ մարդկանց հաջողվում էր կառուցել ջրանցքներ և ամբարտակներ: Նեղոսի վարարումների դեմ մշտական պայքարը, համատեղ կատարվող աշխատանքները պահանջում էին ուժերի համախմբում և կառավարում: Այսպես Եգիպտոսում առաջացավ ուժեղ պետություն:

Տախտակի վրա պատկերված է փարավոն Մինայի հաղթանակը Ստորին Եգիպտոսի թագավորության նկատմամբ:

Ք. ա. IV հազարամյակի վերջին Նեղոսի ափերին ստեղծվել էր շուրջ 40 փոքր պետություն: Դրանց միավորումից շուտով կազմավորվեցին **Վերին և Ստորին Եգիպտոսների**

թագավորությունները: Իսկ **Ք. ա. XXXI դարում** այդ երկու թագավորությունների միավորումից **Եգիպտոսում ստեղծվեց միացյալ թագավորություն:** Հիմնադիրը **Մինա** արքան էր: Թագավորության մայրաքաղաք հռչակվեց **Մեմֆիսը** (եգիպտերեն Մինֆի՝ Սպիտակ պարիսպ):

Աստծո որդին

Եգիպտոսում արքային անվանում էին **փարավոն**, որ նշանակում էր «մեծ տան (պալատի) տեր»: Կենդանության օրոք փարավոնին երկրպագում էին՝ ինչպես աստվածներին: Արքան համարվում էր աստծո որդի՝ կենդանի աստված: Երկրային կյանքին հրաժեշտ տալուց հետո փարավոնը պետք է միանար մյուս աստվածներին և վայելեր հավերժական կյանք: Այդ պատճառով փարավոնների համար կառուցում էին շքեղ դամբարաններ՝ **բուրգեր:**

Թութմոս III փարավոն

Եգիպտական աշխարհակալ պետությունը

Եգիպտոսը շուտով դարձավ Հին Արևելքի հզոր պետություններից մեկը: Մինչև Ք. ա. XV դարը ոչ մի փարավոնի չէր հաջողվել նվաճել Ասորիքը և հասնել **Եփրատ գետին:** Առաջինը դա արեց **Թութմոս III–ը** (Ք. ա. 1467–1413 թթ.): Նա, մեկը մյուսի հետևից պարտության մատնելով բոլոր հակառակորդներին, իր զորքով անցավ Եփրատը և հասավ մինչև Հայկական Տավրոսի լեռները: Պատերազմների ավարտին Եգիպտոսի տերության տարածքը հյուսիսից հարավ ձգվում էր շուրջ **3200 կմ:**

«Հավերժ բարեկամներ»

Եգիպտոսը և **Խեթական տերությունը** (տե՛ս §7–ը) շուրջ երկու դար անհաշտ թշնամիներ էին: **Ք. ա. 1274 թ.** Ասորիքում նրանց միջև տեղի ունեցավ խոշոր ճակատամարտ, սակայն կողմերից ոչ մեկը չկարողացավ հասնել վճռական հաջողության:

Դրանից տասնվեց տարի անց **Ռամզես II** փարավոնը (Ք. ա. 1279–1213 թթ.) և խեթական արքան կնքեցին **«Հավերժական բարեկամության» պայմանագիր**: Ըստ պայմանագրի՝ բոլոր վիճելի հարցերը պետք է լուծվեին խաղաղ բանակցությունների ճանապարհով: Եթե որևէ թշնամի սպառնար դաշնակիցներից մեկին, մյուսը պարտավոր էր նրան անմիջապես օգնել զորքով: Պայմանագիրն ամրապնդվեց Ռամզեսի և խեթական արքայադստեր ամուսնությամբ:

Պապիրուսի վրա պատկերված է Ռամզես II փարավոնը՝ իր մարտակառքով, դեպի Քադեշ արշավանքի ժամանակ

Արու Սիմբել, Մեծ տաճար

Ռամզես II փարավոնը արշավանքի ժամանակ

ՀԱՏՎԱԾՆԵՐ ԵԳԻՊՏԱ-ԽԵԹԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ

• «Ռամզեսը՝ մեծ արքան՝ Եգիպտոսի արքան, խաղաղության և եղբայրության մեջ է Խաթթուսիլիսի՝ Խաթթիի մեծ արքայի հետ: Ամոն աստծու սիրելի՝ Եգիպտոսի արքա Ռամզեսի որդիներն ընդմիշտ պիտի մնան խաղաղության մեջ և եղբայրներ լինեն մեծ արքա՝ Խաթթիի արքա Խաթթուսիլիսի որդիների հետ»:

• «Ռամզեսը՝ մեծ արքան՝ Եգիպտոսի արքան, երբեք թշնամություն չպիտի անի Խաթթիի դեմ՝ նրանից որևէ բան վերցնելու նպատակով: Եվ Խաթթուսիլիսը՝ մեծ արքան՝ Խաթթիի արքան, երբեք թշնամություն չպիտի անի Եգիպտոսի դեմ՝ նրանից որևէ բան վերցնելու նպատակով»:

• «Եթե որևէ մեկը որպես թշնամի գա Խաթթիի դեմ, և Խաթթուսիլիսը՝ մեծ արքան՝ Խաթթիի արքան, գրի ինձ՝ «Արի՛ ինձ մոտ օգնության՝ նրա դեմ», ապա Ռամզեսը պիտի ուղարկի իր հետևակ զորքը և մարտակառքերը, և նրանք կհաղթեն այդ թշնամուն և վրեժ կլուծեն Խաթթիի համար»:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որտե՞ղ է Եգիպտոսը:
2. Ինչո՞ւ է հույն պատմիչ Հերոդոտոսը Եգիպտոսն անվանել «Նեղոսի պարգև»:
3. Եգիպտոսում ե՞րբ և ո՞ւմ կողմից ստեղծվեց միացյալ թագավորություն: Ո՞րն էր դրա մայրաքաղաքը:
4. Ի՞նչ էին անվանում արքաներին Եգիպտոսում: Ի՞նչ է դա նշանակում:
5. Նշե՛ք, թե որ արքաների օրոք է Եգիպտոսը եղել հզոր պետություն:

Գործնական աշխատանք

Տետրում գծե՛ք և լրացրե՛ք «Հավերժական բարեկամության» պայմանագրի վերաբերյալ աղյուսակը.

Ո՞ւմ միջև է կնքվել	Պայմանագրի բովանդակությունը	Պայմանագրի նշանակությունը

Նոր հասկացություններ, անուններ

Եգիպտոս, «Նեղոսի պարգև», Մինա, Մեմֆիս, փարավոն, բուրգ, աշխարհակալ պետություն, Թութմոս III, Ռամզես II, «Հավերժական բարեկամության» պայմանագիր

§ 5. ՄԻՋԱԳԵՏՔԻ ԱՌԱՋԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շումերական պետությունները

Միջագետքը, ինչպես նաև Եգիպտոսը, Հայաստանը, Հնդկաստանը և այլն, աշխարհի քաղաքակրթական կենտրոններից էր: Այդպես է կոչվել Եփրատ և Տիգրիս գետերի միջև ընկած տարածքը: Այն սկսվում էր Հայկական լեռնաշխարհի հարավից և ձգվում մինչև Պարսից ծոց:

Եփրատ գետի ստորին հոսանքի շրջանում ապրում էին **շումերները**: Միջագետքում առաջինը նրանք Ք. ա. IV հազարամյակում ստեղծեցին արհեստական ոռոգման համակարգ:

Մինչև **Ք. ա. XXIV դարը** շումերները միասնական պետություն չստեղծեցին: Փոխարենը գոյություն ունեին մի քանի տասնյակ մանր

Սարգոն I Աքքադացի

Նարամսինի հուշակոթողը

Այս արքան վերանվաճեց Սարգոնի մահից հետո անկախացած բոլոր երկրները: Բարձրաքանդակում պատկերված է զորքը դեպի լեռան գագաթն առաջնորդող արքան:

քաղաք–պետություններ: Քաղաք–պետությունն ընդգրկում էր քաղաքը՝ հարակից մշակովի հողերով: Դրանցից աչքի էին ընկնում **Ուրը, Ուրուկը, Լագաշը** և այլն: Պատերազմներն այդ պետությունների միջև սովորական երևույթ էին:

Աքքադ

Ք. ա. XXIV դարում Միջագետքում հաստատվեցին արևմուտքից ներթափանցած սեմական ցեղերը: Շուտով դրանցից մեկի առաջնորդ **Սարգոնը (Ք. ա. 2330–2295 թթ.)** նվաճեց Շումերի քաղաքները և հիմնադրեց **Աքքադ պետությունը:** Նա դարձավ ամբողջ Միջագետքի արքա:

Սարգոնը մի քանի խոշոր արշավանքներ կազմակերպեց նաև դեպի Ասորիք և Փոքր Ասիա թերակղզի: Նա շատ տարածքներ նվաճեց, որի համար ստացավ **«Աշխարհի չորս կողմերի արքա»** տիտղոսը:

Սարգոնի գործն արժանիորեն շարունակեց նրա թոռը՝ **Նարամսինը:**

Օրինաստեղծ արքան

Միջագետքի կենտրոնում Ք. ա. II հազարամյակի սկզբներին ստեղծվեց **Բաբելոնի** թագավորությունը: Այն մեծ վերելք ապրեց Հին աշխարհի նշանավոր արքաներից մեկի՝ **Համմուրապիի (Ք. ա. 1792–1750 թթ.)** օրոք: Նա շուրջ 30 տարի մարտնչում էր հարևան երկրների դեմ: Համմուրապին կարողացավ հնազանդեցնել նրանց: Սակայն արքան լավ գիտակցում էր, որ զենքով նվաճվածը միայն զենքով պահպանել հնարավոր չէ:

Նորաստեղծ պետությունում անհրաժեշտ էր կարգուկանոն հաստատել: Այդ նպատակով Համմուրապին հավաքել տվեց բոլոր գործող օրենքները և ստեղծեց միասնական **օրենսգիրք**: Այն **բաղկացած էր 282 հոդվածից:** Այնուհետև օրենսգիրքը փորագրվեց յոթ քարակոթողների վրա: Դրանք տեղադրվեցին երկրի տարբեր շրջաններում, որպեսզի օրենսգիրքը հասանելի լինի բոլորին:

Ստեղծվեցին դատարաններ: Արքան ինքը պետության գերագույն դատավորն էր: Մարդիկ արդեն կարող էին օրենքով պաշտպանվել ազնվականության ոտնձգություններից:

Գուդեա արքան Լագաշից.
Ք. ա. 2060 թ., Փարիզ, Լուվր

Բարձրաքանդակում պատկերված են Համմուրապին և արևի աստված Շամաշը: Օրենսգիրքը պարունակող այսպիսի յոթ հսկա քարակոթողներ էին կերտվել: Քարակոթողներից պահպանվել է միայն սա:

Համմուրապին օրենսգրքի ստեղծման անհրաժեշտությունը բացատրում է այսպես. «Աստվածները հանձնարարեցին Համմուրապիին երկրում արդար կառավարում մտցնել, ոչնչացնել չարագործներին, որպեսզի ուժեղը չվնասի թույլին, որպեսզի արքան մարդկանց կառավարի արևի աստծո պես՝ և՛ լուսավորի, և՛ ավելացնի նրանց բարօրությունը»:

ՀՈԴՎԱԾՆԵՐ ՀԱՄՄՈՒՐԱՊԻԻ ՕՐԵՆՍԳՐՔԻՑ

- Եթե դատավորը որոշում կայացնի և այն հաստատի կնիքով, բայց հետո փոխի իր որոշումը, ապա նրան պետք է հեռացնել իր պաշտոնից, և նա երբեք չի կարող դատավոր դառնալ:
- Եթե մարդը գողանա տաճարի կամ պետության սեփականությունը, ապա նա պետք է սպանվի, իսկ նա, ով գողացածը ստացել էր այդ մարդուց, նույնպես պետք է սպանվի:
- Եթե մարդու տունն այրվում է, և մեկ ուրիշը, ով գնացել է այնտեղ՝ կրակը մարելու, աչք դնի նրա ունեցվածքի վրա, ապա այդ մարդուն պետք է նետել հրդեհի մեջ:
- Եթե մարդը վկաների ներկայությամբ արծաթ, ոսկի կամ որևէ իր է տվել այլ մարդու՝ պահպանելու, և այդ մարդը ժխտում է դրանք վերցնելու փաստը, ապա նա պետք է վճարի կրկնակի:
- Եթե որդին հարվածել է հորը, ապա նրա ձեռքը պետք է կտրվի:
- Եթե բժիշկը վիրահատում է ազատ մարդուն, և նա մահանում է, նրա ձեռքը պետք է կտրել:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որտեղ է Միջագետքը: Ինչո՞ւ է այդպես կոչվում:
2. Միջագետքի ո՞ր մասում էին ապրում շումերները:
3. Թվարկե՛ք Շումերի քաղաք–պետություններ:
4. Միջագետքի ո՞ր առաջնորդն էր ընդունել «Աշխարհի չորս կողմերի արքա» տիտղոսը: Ե՞րբ է նա կառավարել:
5. Ե՞րբ և որտեղ էր ստեղծվել Բաբելոնի թագավորությունը: Ո՞ւմ օրոք այն հզորացավ:
6. Քանի՞ հոդվածից էր բաղկացած Համմուրապիի օրենսգիրքը:
7. Ինչո՞վ են նշանավորվել Միջագետքի պատմության մեջ Շումերը, Աքքադը և Բաբելոնը:

Քննարկման հարց

Համմուրապին ինչո՞ւ ստեղծեց միասնական օրենսգիրք: Այն կարո՞ղ է մեր օրերում կիրառվել:

Նոր հասկացություններ, անուններ

Միջագետք, շումերներ, Շումեր, Աքքադ, Սարգոն, Նարամսին, «Աշխարհի չորս կողմերի արքա», Բաբելոն, Համմուրապի, օրենսգիրք

§ 6. ՄԻՋԱԳԵՏՔԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ասորեստանի վերելքը

Հյուսիսային Միջագետքում Ք. ա. XX դարում Աշշուր քաղաքի շուրջը ստեղծվեց նոր պետություն՝ Ասորեստանը: Ժամանակի ընթացքում Ասորեստանն ամրապնդվեց, իսկ **Ք. ա. XIII–XII դարերում** վերելք ապրեց: Նրա արքաները արշավանքներ էին ձեռնարկում տարբեր ուղղություններով: Ասորեստանի սահմանները հասան մինչև **Ասորիք** և **Բաբելոն**: Ասորեստանցիները չափազանց դաժան էին վերաբերվում իրենց հակառակորդներին: Նվաճված քաղաքները հիմնահատակ ավերվում էին, իսկ բնակիչները սպանվում կամ ստրկության էին վաճառվում:

Թիգլաթպալասար III և Սարգոն II

Ասորեստանը միաժամանակ թուլացավ: Հատկապես դա ակնառու էր Ք. ա. VIII դարում՝ Վանի թագավորության հետ մրցակցության պայմաններում: Սակայն նույն դարի վերջին Ասորեստանը կրկին հզորացավ:

Դա սկսվեց **Թիգլաթպալասար III** արքայի օրոք: Նա կատարեց **ռազմական բարեփոխում:** Ստեղծեց **արհեստավարժ բանակ,** որն ամբողջությամբ պահվում էր պետության հաշվին: Զինվորները ստանում էին աշխատավարձ և ռազմավարի մի մասը: Ստեղծվեց սակրավորների զորամաս, որի գործը ճանապարհաշինությունն էր: Իսկ ամրոցի գրավման ժամանակ սակրավորները կառու-

Սարգոն II–ը և Շամաշ աստվածը

Թիգլաթպալասար III
Բարձրաքանդակ Նեմրութից

ցում էին պաշարողական մեքենաներ: Կար նաև հետախուզական ծառայություն:

Այս բարեփոխումների շնորհիվ Թիգլաթպալասար III–ը կարողացավ կանգնեցնել իր գլխավոր ախոյանի՝ **Վանի թագավորության** առաջընթացը: Իսկ **Սարգոն II–ը** (Ք. ա. 721–705 թթ.) արշավանք ձեռնարկեց դեպի Հայկական լեռնաշխարհ: Սարգոնը նվաճեց Սիրիան և Փոքր Ասիայի արևելքը: Ասորեստանը կարողացավ նույնիսկ նվաճել և հարկատու դարձնել Եգիպտոսը:

Ասորեստանի հանդեպ հարևան ժողովուրդների մոտ դարեր շարունակ ատելություն էր կուտակվել: Այդ էր պատճառը, որ երբ Բաբելոնը և Մարաստանը **Ք. ա. 612 թ.** նվաճեցին Ասորեստանի մայրաքաղաք **Նինվեն,** այդ իրադարձությունը ժամանակակիցներն ընդունեցին որպես փրկություն:

Բաբելոնի Նոր թագավորությունը

Երկար ժամանակ Բաբելոնը հարևան Ասորեստանի տիրապետության տակ էր: Բաբելոնցիները բազմիցս փորձեցին անկախանալ, սակայն ապարդյուն: Նրանց ապստամբությունները ճնշելիս ասորեստանյան արքաները հաճախ ավերում էին քաղաքը և գերեվարում մարդկանց:

Այնուամենայնիվ, Ք. ա. VII դարի վերջերին Բաբելոնը հզորացավ: Նա դաշնակցեց Ասորեստանի հակառակորդ **Մարաստանի** հետ: Նրանց միացավ նաև հայոց թագավոր **Պարույր Հայկազունը**: Դաշնակիցները, ինչպես արդեն ասվել է, գրավեցին մայրաքաղաք **Նինվեն** և վերջ տվեցին Ասորեստանին:

Բաբելոնը հզորագույն պետության վերածվեց **Նաբուգոդոնոսոր արքայի** օրոք (Ք. ա. 605–562 թթ.): Այն տարածվում էր Իրանական սարահարթից մինչև Միջերկրական ծով:

Նաբուգոդոնոսոր արքան հայտնի է նաև իր շինարարական գործունեությամբ: Նա մայրաքաղաք Բաբելոնը դարձրեց Ասիայի ամենախոշոր և գեղեցիկ քաղաքը: Հին աշխարհի հրաշալիքներից երկուսը՝ **Բաբելոնի աշտարակը** և **Շամիրամի կախովի այգիները,** ստեղծվել են նրա օրոք:

91 մետր բարձրություն ունեցող այս հսկա տաճարն Աստվածաշնչում հայտնի է որպես Բաբելոնի աշտարակ: Սա աստիճանաձև կառույց էր, որի վերևում Բաբելոնի գլխավոր աստծու՝ Մարդուկի սրբավայրն էր: Քառանկյուն այս տաճարի յուրաքանչյուր կողմի երկարությունը 400 մետր էր:

Այս եզակի կառույցը, որը ստացել է «Կախովի այգիներ» անունը, արքան ստեղծեց իր կնոջ՝ Մարաստանի արքայադստեր համար: Նա Մարաստանից բերել տվեց այդ երկրին հատուկ ծառեր և կենդանիներ, որպեսզի թագուհին իրեն զգա ինչպես հայրենիքում:



Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ և որտեղ է ստեղծվել Ասորեստանը: Ո՞ր դարերում այն վերելք ապրեց:
2. Ռազմական ինչ բարեփոխում կատարեց Թիգլաթպալասար III–ը:
3. Ինչ հաջողություններ և ո՞ւմ օրոք ձեռք բերեց Ասորեստանն այդ բարեփոխումների շնորհիվ:
4. Երբ և ո՞ւմ կողմից գրավվեց Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն:
5. Բաբելոնն ո՞ւմ օրոք վերածվեց հզոր պետության: Մինչև ո՞ւր էին տարածվում նրա սահմանները:
6. Աշխարհի հրաշալիքներից որո՞նք են ստեղծվել Բաբելոնում:

Քննարկման հարց

Ձեր կարծիքով Ասորեստանի տերությունն ինչո՞ւ կործանվեց:

Նոր հասկացություններ, անուններ

Ասորեստան, Կիլիկիա, Վանի թագավորություն, Թիգլաթպալասար III, արհեստավարժ բանակ, Սարգոն II, Բաբելոնի Նոր թագավորություն, Պարույր Հայկազուն, Նաբուգոդոնոսոր, Բաբելոնի աշտարակ, Կախովի այգիներ

§ 7. ՀԻՆ ՓՈՔՐ ԱՍԻԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԸ

Խեթական տերությունը

Փոքր Ասիա թերակղզում ապրող խեթերը Ք.ա. III հազարամյակի վերջին ստեղծեցին փոքր պետություններ: Դրանք աշխույժ առևտրական կապեր ունեին Միջագետքի հետ:

Ք.ա. XVII դարում խեթերի պետությունների միջև սկսված պայքարն ավարտվեց **Լաբարնա** արքայի հաղթանակով: Մայրաքաղաք հռչակվեց **Խաթթուսասը**: Հաջորդ արքան նվաճեց ամբողջ Փոքր Ասիա թերակղզին: Այսպես ստեղծվեց Խեթական մեծ թագավորությունը:

Մայրաքաղաք Խաթթուսասի հիմնադիր արքան իրեն անվանում էր Առյուծ արքա:

Խեթերը կառուցում էին հզոր և անմատչելի ամրոցներ, որոնք աչքի էին ընկնում շինարարական բարձր տեխնիկայով: Դրանց շինարարության ժամանակ օգտագործվում էին վիթխարի հղկված քարաբեկորներ: Ամրոցների ներսում փորվում էին գաղտնի գետնանցումներ՝ պաշարման ժամանակ օգնություն ստանալու նպատակով:

Խեթական պետության մայրաքաղաք Խաթթուսասի գլխավոր մուտքը՝ առյուծի քանդակներով

Խեթական պետությունը երկար ժամանակ թշնամական հարաբերությունների մեջ էր Հայկական լեռնաշխարհի պետությունների հետ: Խեթերի յուրաքանչյուր արշավանքից հետո վերջիններս ապստամբում էին և անցնում հակահարձակման: Հետագայում արևելքից եկող սպառնալիքը կանխելու նպատակով խեթական արքան իր քրոջը կնության տվեց Հայասայի արքա Խուկանային: Նրանց միջև կնքվեց դաշնակցային պայմանագիր:

Բարիդրացիական հարաբերություններ հաստատվեցին նաև Իսուվա երկրի (հետագայում՝ Ծոփք) հետ: Իսուվայի արքայի կինը խեթական արքայադուստրն էր:

Ք. ա. XIV–XIII դարերում Խեթական տերությունը հասավ իր հզորության գագաթնակետին: Խեթերը նվաճեցին **Միտաննին,** այնուհետև հասան մինչև Եգիպտոսի սահմանները: Նրանք կարողացան իրենց տիրապետությունը հաստատել նաև Փոքր Ասիայի արևմուտքում:

Եգիպտոսի փարավոն Ռամզես II–ի հետ կնքած բարեկամության պայմանագիրը (հիշեք §4–ը) կարևոր նշանակություն ունեցավ Խեթական տերության համար: Տերության արևմուտքում շուրջ կես դար շարունակվում էին պատերազմները՝ ընդդեմ Էգեյան ծովի արևմտյան ափի երկրների: Ք. ա. XII դ. Խեթական պետությունն անկում ապրեց:

Միտաննի

Խուռիներն Առաջավոր Ասիայի զարգացած մշակույթ ունեցող ժողովուրդներից էին: Նրանք տարածված էին Միջագետքում, Փոքր

Ասիայում, Ասորիքում և Հայկական լեռնաշխարհի մի մասում:

Ք. ա. XVI դարում Ասորիքի և Միջագետքի հյուսիսում խուռիները հիմնեցին **Միտաննի** պետությունը: Միտաննին հաջողությամբ պայքարում էր եգիպտացիների և խեթերի դեմ և շուտով իրեն ենթարկեց ողջ Ասորիքը: Իսկ հարևան Ասորեստանը դարձավ նրա հարկատուն:

Միտաննիի առաջխաղացումը կանգ առավ եգիպտական փարավոն Թութմոս III–ի արշավանքների հետևանքով: Ավելի ուշ երկու երկրների միջև հաստատվեցին բարիդրացիական հարաբերություններ:

Փյունիկյան արքաներից մեկը ծովափից ոչ հեռու երկու ժայռոտ կղզիները միացրել էր և կառուցել մի անմատչելի քաղաք–ամրոց՝ Տյուրոսը: Առաջինը այդ ամրոցը նվաճեց Ալեքսանդր Մակեդոնացին (Ք. ա. IV դար): Ալեքսանդրը հրամայեց քարերով և հողով լցնել ցամաքը կղզուց անջատող մոտ 600 մետր տարածությունը, որից հետո միայն գրավեց ամրոցը և դաժան հաշվեհարդար տեսավ բնակչության հետ:

Փյունիկյան պետությունները

Փյունիկյան քաղաքները սփռված էին Միջերկրական ծովի արևելյան ափին: Դրանք մեծ էին ու գեղեցիկ: Փյունիկյան քաղաքներից իրենց հզորությամբ աչքի էին ընկնում **Բիբլոսը, Սիդոնը** և **Տյուրոսը:** Վերջինս ծովափից ոչ հեռու ընկած մի կղզու վրա էր և անմատչելի էր հակառակորդների համար:

Ք. ա. IX դ. վերջին փյունիկեցիները Աֆրիկայի հյուսիսում հիմնեցին նշանավոր **Կարթագեն** քաղաքը: Այն շուտով վերածվեց հզոր պետության:

Փյունիկեցիներն **աշխարհում առաջինը ստեղծեցին ինչյունագիրը** (այբբենական գիր): Այդ գիրը նրանցից փոխ առան հույները և մյուս ժողովուրդները: Հին Հունաստանի առաջին մաթեմատիկոս և փիլիսոփա **Թալես Միլեթացին** ծագումով փյունիկեցի էր:

Բարձրաքանդակ՝ փյունիկյան նավի պատկերով

Հարցեր և առաջադրանքներ

1. Որտեղ է ստեղծվել Խեթական պետությունը:
2. Երբ Խեթական պետությունը հասավ իր հզորության գագաթնակետին, ինչ նվաճումներ իրականացրին խեթերը:
3. Երբ և որտեղ է կազմավորվել Միտաննի պետությունը:
4. Որտեղ էին տեղակայված փյունիկյան քաղաքները: Դրանցից որո՞նք էին առավել հզոր:
5. Երբ և որտեղ է հիմնվել Կարթագեն քաղաքը:
6. Առաջին այբբենական գիրը որտեղ է ստեղծվել:

Գործնական աշխատանք

Հիմնավորե՛ք, որ Խեթական տերությունը Ք.ա. XIV–XIII դարերում հասավ իր հզորության գագաթնակետին:

Քննարկման հարց

Առաջավոր Ասիայի ժողովուրդների կյանքում ինչո՞ւ էր առևտուրը կարևոր դեր խաղում:

Նոր հասկացություններ, անուններ

Փոքր Ասիա, Խաթթուսաս, Լաբարնա, Խեթական տերություն, խուռիներ, Միտաննի, Փյունիկիա, Բիբլոս, Սիդոն, Տյուրոս, հնչյունային գիր, Թալես Միլեթացի

§ 8. ՀՆԴԿԱՍՏԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆ

Արիացիները

Հնդկաստանը և Չինաստանը նույնպես Հին աշխարհի քաղաքակրթական կենտրոններից էին:

Արդեն Ք. ա. III հազարամյակում Հնդկաստանում գոյություն ունեին **Մոհենջոդարոյի** և **Խարապպայի** զարգացած երկրագործական հասարակությունները: Կային խոշոր քաղաքներ, որոնք ստեղծել էին սեփական պատկերային գիրը:

Ք. ա. XVII դարում Հնդկաստան ներխուժեցին ռազմատենչ **արիական ցեղերը**: Նրանք հեշտությամբ նվաճեցին տեղի ժողովուրդներին և ստեղծեցին իրենց իշխանությունները: Արիացիները քանակապես զիջում էին տեղացիներին, սակայն ավելի կազմակերպված էին ու մարտունակ: Տեղի մեծաքանակ բնակչության նկատմամբ իշխանությունը պահպանելու համար արիացիներն ապրում էին մեկուսի:

Հին հնդիկների պատկերացմամբ՝ մարդիկ առաջացել էին աստծո ստեղծած առաջին մարդու՝ **Պուրուշիի** մարմնի որևէ մասից: Ըստ այդ պատկերացման՝ մարդիկ բաժանվում էին **վարնաների**՝ հասարակական խմբերի: Դրանցից յուրաքանչյուրն ուներ որոշակի զբաղմունք, իրավունքներ և պարտականություններ:

Քրմերին աստված ստեղծել էր իր շուրթերից, ուստի քուրմը կարող էր խոսել աստծու անունից:

Բրահման. բարձր կաստա

Շրջիկ վաճառող. ցածր կաստա

Աշոկայի սյան գլխամասը. Հնդկաստան

Ռազմիկները ստեղծվել էին աստծու ձեռքերից: Գլխավոր ռազմիկն արքան էր:

Արտադրողները՝ երկրագործները, արհեստավորներն ու առևտրականները, ստեղծվել էին աստծու ազդրերից:

Ստրուկները ստեղծվել էին աստծու՝ ցեխից աղտոտված ոտքերից: Այս խմբի մեջ էին մտնում նաև հողազուրկ աղքատները:

Մաուրյան պետությունը. Աշոկա

Ալեքսանդր Մակեդոնացին Ք. ա. IV դ. վերջերին նվաճեց Հնդկաստանը: Սակայն երբ նա վերադարձավ, հնդիկներն ապստամբեցին և ստեղծեցին մի շարք պետություններ: Դրանցից ամենահզորը **Մաուրյան պետությունն** էր:

Ք. ա. III դարում՝ **Աշոկա** արքայի օրոք, այն հասավ իր հզորության գագաթնակետին: Արքան նվաճեց Հնդկական թերակղզու մեծ մասը: Նա հայտնի է որպես շինարար արքա: Ամենուրեք կառուցում էր պարսպապատ քաղաքներ, ճանապարհներ, ջրանցքներ: Հասարակ մարդկանց համար նա բացեց հիվանդանոցներ: Աշոկան մեծապես աջակցում էր բուդդայական կրոնի տարածմանը:

Մաուրյան ժամանակաշրջանի մետաղադրամ

Չին կայսրությունը

Չինաստանում առաջին պետությունները կազմավորվել էին դեռևս Ք. ա. III հազարամյակում: Սակայն մինչև Ք. ա. III դարը Չինաստանում որևէ մեկին չհաջողվեց միավորել ամբողջ երկիրը: Կային բազմաթիվ ինքնուրույն պետություններ, որոնք մշտապես պատերազմում էին միմյանց դեմ:

Առաջինը **Ցին Շի Հուանդի** (Ք.ա. 246–210 թթ.) **կայսրին** հաջողվեց միավորել ողջ Չինաստանը: Նա վերացրեց ազնվականների ժառանգական տիտղոսները և արտոնությունները: Պետական բարձր պաշտոններ ստանում էին միայն նրանք, ովքեր ունեին արժանիքներ և ծառայում էին կայսրին:

Երկիրը բաժանվեց մարզերի: Սահմանվեցին կայուն հարկեր: Մտցվեցին միասնական դրամ, չափի ու կշռի միավորներ: Երկրի հյուսիսում քոչվոր ցեղերի հարձակումներին դիմակայելու նպատակով սկսվեց **Չինական մեծ պարսպի** շինարարությունը:

Չինաստանը մետաքսի հայրենիքն է: **Ու Դի** կայսրը (Ք.ա. 140–87 թթ.), նվաճելով Չինաստանից արևմուտք ընկած շրջանները, առևտրական ճանապարհ գցեց դեպի Իրան: Այն մոտ 7000 կմ երկարությամբ ձգվում էր Չինաստանից մինչև Սև ծով և հայտնի է **Մետաքսի ճանապարհ** անունով: **Դրա մի հատվածն էլ անցնում էր Հայաստանով:**

1974 թ.՝ ջրհոր փորելու աշխատանքների ժամանակ, պատահաբար հայտնաբերվել է Ցին Շի Հուանդիի դամբարանը՝ նրա բանակի կրկնօրինակով. 7500 կավե արձաններ՝ հետևակ, հեծելազոր, սպաներ, նետաձիգներ, ձիեր, մարտակառքեր՝ իրական չափերով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ն էր Հնդկաստանի վիճակը մինչև արիացիների արշավանքը:
2. Չնայած փոքրաթվությանը՝ ինչո՞ւ արիացիներին հաջողվեց նվաճել և իրենց իշխանությունը պահպանել Հնդկաստանի բնակչության նկատմամբ:
3. Ե՞րբ և ո՞ր արքայի օրոք Մաուրյան պետությունը հասավ իր հզորության գագաթնակետին:
4. Չինաստանում ե՞րբ են կազմավորվել առաջին պետությունները:
5. Ո՞վ է առաջինը միավորել Չինաստանը:
6. Չինաստանից մինչև Սև ծով ձգվող առևտրական ճանապարհին ի՞նչ անուն ստացավ: Որքա՞ն էր դրա երկարությունը:

Գործնական առաջադրանք

Փորձե՛ք գծապատկերի կամ նկարի տեսքով ներկայացնել հին հնդիկների պատկերացումները վարնաների առաջացման մասին:

Նոր հասկացություններ, անուններ

Հնդկաստան, Մոհենջոդարո, Խարապպա, արիացիներ, Պուրուշի, վարնաներ, Աշոկա, Մաուրյան պետություն, Չինաստան, Ցին Շի Հուանդի, Չինական մեծ պարիսպ, Ու Դի, Մետաքսի ճանապարհ

§ 9. ԱՔԵՄԵՆՅԱՆ ԻՐԱՆԸ

Իրանի ժողովուրդները

Իրանական սարահարթի հարավում ապրում էին **էլամցիները**: Նրանք Ք. ա. XXII դարում ստեղծեցին **Էլամ** պետությունը՝ **Շոշ** մայրաքաղաքով: Էլամցիներն Առաջավոր Ասիայի զարգացած ժողովուրդներից էին: Նրանք ունեին պատկերային գիր:

Ք. ա. II հազարամյակում Հայկական լեռնաշխարհից Իրան ներթափանցեցին **արիական ցեղերը**: Նրանց տոհմային ավագանին կոչվում էր **արյա** (ազնվազարմ): Այստեղից էլ առաջացել է այս ցեղերի անունը՝ **արիացիներ**:

Ըստ Հերոդոտոսի, երբ Կյուրոսը սկսեց իր նվաճումները, հեռավոր Լիդիայի արքա Կրեսոսն իր մերձավորներից մեկին ուղարկեց Հունաստանում գտնվող նշանավոր Դելփյան տաճարի պատգամախոսի մոտ: Այն հարցին, թե արդյոք ճիշտ կլինի արշավել պարսիկների դեմ, պատգամախոսն այսպես պատասխանեց. «Եթե Կրեսոսն արշավի պարսիկների դեմ, ապա մի մեծ տերություն կկործանվի»: Կրեսոսը մտածեց, որ այդ մեծ տերությունը Կյուրոսի պետությունն է: Ուստի նա Կյուրոսի դեմ պատերազմ սկսեց, բայց պարտվեց: Պատգամախոսի հիշատակած «մեծ տերությունը», պարզվեց, Լիդիան էր, այլ ոչ Աքեմենյան տերությունը:

Կավե գլանի վրա Կյուրոս Մեծի սեպագիր արձանագրությունն է՝ նրա հաղթանակների և բարեգործությունների մասին:

Գրածոն հայտնաբերվել է Բաբելոնի պեղումների ժամանակ՝ 1879 թ.: Պահվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում:

Պարսիկ զինվորներ.
Պերսեպոլիս, բարձրաքանդակ

Մարաստանը և Կյուրոս Մեծը

Իրանի հյուսիսում էին ապրում իրանական ծագում ունեցող **մարական ցեղերը: Ք.ա. VIII դարում** Իրանում նրանք ստեղծեցին միասնական պետություն՝ **Մարաստանը**: Նինվեի գրավումից հետո **Մարաստանը նվաճեց շատ տարածքներ**՝ հասնելով մինչև Փոքր Ասիայի արևմուտք:

Պարսկական ցեղերը, որոնք ապրում էին Էլամից արևելք, Մարաստանի տիրապետության տակ էին:

Պարսիկների առաջնորդ Կյուրոսը ապստամբեց մարերի դեմ և **Ք.ա. 550 թ.** գրավեց նրանց երկիրը: Կյուրոսն իր առջև նպատակ էր դրել նվաճելու ամբողջ Առաջավոր Ասիան: Նա կարողացավ նվաճել Բաբելոնը և Լիդիայի թագավորությունը: Իսկ Կյուրոսի որդի Կամբյուսեսը նվաճեց նաև Եգիպտոսը:

Սակայն նրա մահից հետո երկրում սկսվեցին ապստամբություններ և պայքար գահի համար: Պայքարում հաղթեց աքեմենյան տոհմի ներկայացուցիչ Դարեհը:

Դարեհ I (Ք.ա. 522–486 թթ.)

Նոր էր **Դարեհ I–ը** արքա հռչակվել, երբ նրա դեմ ապստամբեցին նվաճված երկրները՝ Բաբելոնը, Մարաստանը, Էլամը և մյուսները: Երկու տարի տևեց այդ երկրների վերանվաճումը: Մի քանի փորձերից հետո պարսիկների գերիշխանությունն ընդունեց նաև Հայաստանը: Այնուհետև Դարեհը հեռավոր արշավանք սկսեց դեպի արևմուտք: Այստեղ նա գրավեց Փոքր Ասիա թերակղզին, ապա արշավեց **սկյութների** երկիր և Հունաստան:

Դարեհի արշավանքների արդյունքում **ստեղծվեց նախադեպը չունեցող մի մեծ պետություն:** Այն տարածվում էր Միջին Ասիայից և Հնդկաստանից մինչև Էգեյան ծով և Եգիպտոս:

Դարեհը մի շարք բարեփոխումներ կատարեց: Նա իր տերությունը բաժանեց **մարզերի՝ սատրապությունների:** Դրանցում նա կառավարիչներ նշանակեց իր ազգականներին և մերձավորներին, որոշ երկրներում՝ նաև տեղական արքայատոհմերի ներկայացուցիչների: Բոլոր մարզերի համար սահմանվեցին հարկեր:

Դարեհ I–ի բարձրաքանդակը

Աքեմենյան համաշխարհային տերությունը

Աքեմենյան պետությունը **համաշխարհային տերություն** էր: Այն ներառել էր ամբողջ Առաջավոր Ասիան: Ժամանակի ընթացքում այնտեղ ապրող ժողովուրդների մոտ սկսեցին ձևավորվել ընդհանրություններ կյանքի բոլոր բնագավառներում: Տարբեր ժողովուրդների միջև ընդլայնվեցին տնտեսական և մշակութային կապերը: Միևնույն աստվածներին երկրպագում էին տերության տարբեր շրջաններում:

Իր լայնածավալ տերության հեռավոր շրջանների միջև հաղորդակցությունը հեշտացնելու նպատակով Դարեհը կառուցեց շուրջ 2500 կմ երկարությամբ նշանավոր **Արքայական ճանապարհը:** Այն ձգվում էր Իրանից մինչև Էգեյան ծով:

Աքեմենյան տերությունը գոյություն ունեցավ մինչև Ք.ա. IV դ. վերջերը, կործանվեց Ալեքսանդր Մակեդոնացու կողմից:

Աքեմենյան տերության մայրաքաղաք Պերսեպոլիսի շինարարությունը սկսեց Դարեհ I–ը, իսկ շարունակեցին նրա հաջորդները: Այն տևեց շուրջ 70 տարի: Քաղաքը կառուցվել էր միասնական նախագծով: Ապագա քաղաքի ողջ տարածքը հարթեցվել էր և ծածկվել հսկայական քարաբեկորներով: Այնուհետև կառուցվել էին արքայական պալատները՝ կից շինություններով: Քաղաքի գլխավոր մուտքը աստիճանաձև էր՝ բաղկացած 111 լայն աստիճաններից: Պերսեպոլիսը համաշխարհային ճարտարապետական արվեստի գլուխգործոցներից է:

Դարեհ I–ի ժայռափոր դամբարանը.
Իրան

Հարցեր և առաջադրանքներ

1. Որտեղ էր տեղակայված Էլամը: Ո՞րն էր այդ պետության մայրաքաղաքը:
2. Արիական ցեղերը որտեղի՞ց են ներթափանցել Իրան: Ի՞նչ է նշանակում արիացի:
3. Որտեղ էին ապրում մարական ցեղերը: Մարերը ե՞րբ ստեղծեցին միավորված պետություն:
4. Պարսիկների առաջնորդ Կյուրոսը ե՞րբ նվաճեց Մարաստանը:
5. Ի՞նչ նպատակ էր դրել իր առջև Կյուրոսը: Թվարկե՛ք նրա նվաճած երկրները:
6. Ո՞ր երկրներն ապստամբեցին Դարեհ I–ի դեմ:
7. Թվարկե՛ք Դարեհ I–ի իրականացրած վերափոխումները: Ի՞նչ նշանակություն ունեցան դրանք:
8. Ո՞ւմ օրոք է կառուցվել Արքայական ճանապարհը, որքա՞ն էր երկարությունը: Քարտեզի վրա ցո՛ւյց տվեք այդ ճանապարհը, այն անցնո՞ւմ էր Հայաստանի տարածքով:
9. Բնութագրե՛ք Աքեմենյան տերությունը:

Նոր հասկացություններ, անուններ

Էլամ, Շոշ, Մարաստան, պարսիկներ, Կյուրոս Մեծ, Կամբյուսես, Դարեհ I, սատրապություն, Պերսեպոլիս, սկյութներ, Աքեմենյան համաշխարհային տերություն, Արքայական ճանապարհ

§10. ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԿՐՈՆՆԵՐԸ

Աստվածների պաշտամունքը

Դուք արդեն գիտեք, որ կրոնական հավատալիքների ձևավորման շրջանում տոհմն ուներ իր հովանավոր ոգին կամ աստվածը: Մարդիկ նրա միջոցով էին հաղորդակցվում գերբնական ուժերի հետ: Ոգին էր մարդկանց պաշտպանում դժբախտությունից և տալիս բարօրություն:

Երբ համայնքներն ու ցեղերը միավորվեցին, և առաջացավ պետությունը, մարդիկ նախկին համայնքային աստվածներին օժտեցին որևէ բնագավառի հովանավորի դերով: Պետության բնակչությունը սկսեց երկրպագել բազմաթիվ աստվածների:

Այսպես առաջացավ բազմաստվածությունը: Օրինակ՝ Եգիպտոսում երկրպագում էին շուրջ հազար աստվածների: Նույն վիճակն էր խեթերի և այլ ժողովուրդների մոտ:

Եգիպտական Օսիրիս, Հոր և Իսիդա աստվածները

Դիցարան

Ինչպես պետությունն ուներ իր գլխավորը՝ արքան, այդպես էլ աստվածների մեջ պետք է լիներ գլխավոր: Պետականության հետ միասին ի հայտ եկավ **դիցարանը**: Դիցարանը աստվածների աստիճանակարգված համախումբն էր: Այն ստեղծվում էր պետության առաջին արքաներից մեկի հրամանով, որպեսզի ամրապնդվի իշխող ցեղի կամ քաղաքի գերիշխանությունը: Երբ պետության մայրաքաղաքը փոխվում էր, երբեմն փոխվում էր նաև գլխավոր աստվածը:

Եգիպտական Ռա աստվածը. Նեֆերտարիի դամբարան

Օրինակ՝ Եգիպտոսի Հին թագավորության շրջանում գլխավորը **Ռա** աստվածն էր (արևի աստվածը), որին երկրպագում էին **Մեմֆիս** քաղաքում: Բայց երբ մայրաքաղաք դարձավ **Թեբեն**, գլխավոր աստված հռչակվեց տեղի աստված **Ամոնը**: Ք. ա. XIV դարում փարավոն **Էխնաթոնը** գերագույն աստված հռչակեց նախկինում գրեթե անհայտ **Աթոնին**: Դրանով նա փորձեց Ամոնի տաճարի քրմերին զրկել իրենց մեծ իշխանությունից:

Աշխարհաստեղծման առասպելը

Արևելքի ժողովուրդներն ունեին բնության, մարդկանց, կենդանական և բուսական աշխարհների ծագման մասին տարբեր առասպելներ:

Եգիպտոս: «Սկզբում համատարած ջուր էր: Այնուհետև ջրի մեջ **Պտահ** աստվածը ստեղծեց մի կղզի, որը սկսեց մեծանալ: Հետո աստված երկիրը բաժանեց երկնքից և ստեղծեց օդը: Միայն վերջում նա ստեղծեց մարդուն»:

Շումեր: «Երկիրը ստեղծեց **Էլլիլ** աստվածը: Նա բաժանեց երկիրը երկնքից, որոնք

Թիամաթի և Մարդուկի մենամարտը



սկզբում մեկ միասնություն էին կազմում: Դրանից հետո նա կավից ծեփեց մարդուն՝ իր իսկ նմանությամբ»:

Հնդկաստան: «Սկզբում ոչինչ չկար՝ ո՛չ արև, ո՛չ լուսին, ո՛չ աստղեր: Ջրից ծնվեց կրակը: Տաքությունից ծնվեց **Ոսկե ձուն**: Ոսկե ձվից ծնվեց արարիչ **Բրահման**: Նա ջարդեց ձուն, և այն ճեղքվեց երկու մասի: Վերին կեսը դարձավ երկինք, ստորին կեսը՝ երկիր: Իսկ դրանց միջև Բրահման դրեց օդը: Նա հողը դրեց ջրերի մեջ և ստեղծեց աշխարհամասերը, սկիզբ դրեց ժամանակին»:

Բաբելոն: «Սկզբում համատարած ջրային տարերք էր՝ **օվկիանոս**: Այստեղ իշխում էր հրեշ **Թիամաթը**: Բաբելոնի գլխավոր աստված **Մարդուկը** հաղթեց Թիամաթին: Վերջինիս մարմնի մի կեսից նա ստեղծեց երկինքը, մյուսից՝ երկիրը»:

Հարցեր և առաջադրանքներ

1. Նկարագրե՛ք, թե ինչպես է առաջացել բազմաթիվ աստվածների պաշտամունքը կամ բազմաստվածությունը:
2. Ի՞նչ է դիցարանը:
3. Ձեր կարծիքով դիցարանում ինչո՞ւ էր անհրաժեշտ ունենալ գլխավոր աստված:
4. Եգիպտոսում ինչո՞ւ էր հաճախ փոխվում գլխավոր աստվածը:

Գործնական աշխատանք

Կազմե՛ք աղյուսակ և համեմատե՛ք աշխարհաստեղծման մասին առասպելները՝ նշելով դրանց նմանություններն ու տարբերությունները:

Նոր հասկացություններ, անուններ

Բազմաստվածություն, դիցարան, գլխավոր աստված, Ռա, Ամոն, Էխնաթոն, Պտահ, Էլլիլ, Բրահմա, Թիամաթ, Մարդուկ, աշխարհաստեղծման առասպել

§11. ԳԻՐ ԵՎ ԱՐՎԵՍՏ

Ինչու էր անհրաժեշտ գիրը

Հնադարյան մարդը մտապահում էր այն, ինչ անհրաժեշտ էր իրեն առօրյա կյանքում: Սակայն վիճակը սկսեց փոխվել, երբ առաջացավ պետությունը: Անհրաժեշտ էր հաշվառել ստացված բերքը, պալատների և տաճարների պահեստներում կուտակվող մթերքի և այլ իրերի քանակը, հարկերը և այլն: Այս ամենը հնարավոր չէր հիշել: **Պետությունների ձևավորումով տարբեր երկրներում ստեղծվեցին գրային համակարգեր:**

Հին Արևելքի շատ ժողովուրդներ ունեին իրենց գիրը, որոնք տարբերվում էին ոչ միայն արտաքին տեսքով, այլև նշանների իմաստներով:

Եգիպտական գաղափարագիրը

Եգիպտացի գրագիր

Հույն պատմիչ Հերոդոտոսը Եգիպտոսում տաճարների պատերին տեսել էր բնության տարբեր երևույթներ և առարկաներ պատկերող գրային նշաններ: Քանի որ այդ գրից օգտվում էին տաճարների քրմերը, նա այն անվանեց **հիերոգլիֆ** (սրբազան գիր):

Եգիպտական գիրը ստեղծվել էր Ք.ա. IV հազարամյակի վերջին: Այն բաղկացած էր ավելի քան **700 նշանից:**

Սկզբում յուրաքանչյուր նշան նշանակում էր որևէ բառ կամ նույնիսկ նախադասություն: Հետագայում նշանները սկսեցին արտահայտել վանկեր:

Միջագետքյան սեպագիրը

Ք. ա. IV հազարամյակի վերջին շումերները ստեղծեցին գաղափարագիրը: Այն իր տեսքով և բովանդակությամբ նման էր եգիպտական հիերոգլիֆներին:

Կավի կամ քարի վրա դժվար էր կլորավուն նշաններ նկարելը: Ուստի ժամանակի ընթացքում գաղափարագիրը պարզեցվեց: Նշանները աստիճանաբար կորցրին իրենց սկզբնական տեսքը: Դրանք սկսեցին նմանվել սեպերից բաղկացած նշանախմբերի: Այդ գիրը գիտնականներն անվանել են **սեպագիր:**

Սեպագիրն ուներ մոտ **600 նշան:** Դրանք արտահայտում էին մեկ կամ ավելի բառեր և վանկեր:

Սեպագիրը փոխ առան շատ ժողովուրդներ՝ հարմարեցնելով իրենց լեզուներին:

Ռոզեթյան քարը

Ֆրանսիացի գիտնական Ֆրանսուա Շամպոլյոնը 1822 թ. վերծանեց եգիպտական գաղափարագիրը: Նապոլեոն Բոնապարտի եգիպտական արշավանքի ժամանակ հայտնաբերվել էր մի քար՝ Ռոզեթյան քարը: Դրա վրա փորագրված է արձանագրություն հին հունական այբուբենով և եգիպտական գրերով: Համեմատելով երկու գրերը՝ Շամպոլյոնը կարողացավ ընթերցել Կլեոպատրա և Պտղոմեոս անունները: Հետագայում գիտնականները վերծանեցին եգիպտական գրի մյուս նշանները:

Գրականություն

Ք.ա. III հազարամյակում Շումերում և Աքքադում մեծ ուշադրություն էին դարձնում երեխաների **կրթությանը**: Տաճարներին կից գործում էին **դպրոցներ**, որտեղ երեխաներին սովորեցնում էին գրել, կարդալ, երգել, նվագել: Շրջանավարտը պարտավոր էր տիրապետել այն ժամանակներում հայտնի բոլոր բնական գիտություններին, իմանալ այս կամ այն աշխատանքային գործունեության նրբությունները և կազմակերպել այն: Կարևոր էր անգիր իմանալ բոլոր կրոնական ծեսերը, ինչպես նաև կարողանալ կազմակերպել դրանց անցկացումը:

Հին Արևելքում բարձր զարգացման էին հասել հոգևոր մշակույթի տարբեր ուղղություններ: Այդ շարքում առանձնահատուկ տեղ ուներ **գեղարվեստական գրականությունը**:

Հին աշխարհի մարդկանց պատկերացումները հիմնված էին կրոնի և առասպելների վրա: Ահա թե ինչու ժամանակի գեղարվեստական ստեղծագործություններն առավելապես **կրոնական և առասպելական բնույթ** ունեին: Դրանք պատմություններ են աստվածների և առասպելական հերոսների մասին, ինչպես նաև աղոթքներ:

Օրինակ՝ շումերները պատմություններ էին ստեղծում իրենց աստվածների և նշանավոր արքաների հիշարժան գործերի մասին: Դրանք գրի էին առնվում և կրոնական տոների ժամանակ ներկայացվում տաճարում

Եգիպտացիները գրում էին քարի և պապիրուսի վրա: Պապիրուսը Նեղոսի ափամերձ ճահիճներում աճող եղեգնի մի տեսակ էր, որի ցողունից ստանում էին նյութ և դրա վրա գրում: Գրելուց հետո այն ոլորում և պահում էին կաշվե պատյանի մեջ: Շնորհիվ պատրաստման բարձր որակի՝ պապիրուսը պահպանվել է հազարամյակներ: Այսօր թանգարաններում կան այդպիսի բազմաթիվ արձանագրություններ:

հավաքված մարդկանց: Այդպիսի ստեղծագործություններ ունեին նաև մյուս ժողովուրդները:

Ճարտարապետություն և քանդակագործություն

Հին Արևելքի ճարտարապետական **կառույցներն աչքի են ընկնում իրենց վիթխարի չափերով:** Դրանք ընդգծում էին արքայական իշխանության աստվածային բնույթը և անսասանությունը: Այդպիսի յուրաքանչյուր կառույցի շինարարությունը տևում էր տասնամյակներ:

Շինությունների ներքին հարդարանքն աչքի էր ընկնում մեծ շքեղությամբ: Տաճարներում տեղադրվում էին աստվածների և մահացած արքաների հոյակերտ արձաններ: Իսկ տաճարների պատերը զարդարվում էին բարձրաքանդակներով և որմնանկարներով:

Հայտված Իշտար աստվածուհու տաճարի պարիսպներից

Հին Արևելքի ճարտարապետության շքեղ կառույցներից մեկը՝ զիկկուրատ

Հին Արևելքի երկրներում առանձնահատուկ նշանակություն ուներ **քանդակագործությունը**: Պահպանվել են աստվածների, արքաների, զանազան առասպելական էակների հազարավոր մեծ ու փոքր արձաններ: Դրանցով զարդարված էին արքաների և ազնվականների պալատները, ինչպես նաև տաճարները և պաշտամունքի մյուս կենտրոնները:

Քարե արձանը զարդարվում էր թանկարժեք քարերով և մետաղներով: Աստծու և արքայի արձանը պետք է այնպիսի տեսք ունենար, որ մեկընդմիշտ տպավորվեր տեսնողի մեջ:

Գիլգամեշ արքան

Գիլգամեշը շումերական Ուրուկ քաղաքի արքան էր: Նա իր արժանահիշատակ գործերի համար հետագայում վերածվեց առասպելական կերպարի: Նրա անձի շուրջ հյուսվեց մի վիպերգական պատմություն: Դա աշխարհում առաջին վիպերգն է:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հասարակության զարգացման ո՞ր փուլում է ստեղծվել գիրը:
2. Ինչի՞ հետ է կապված գրի առաջացումը:
3. Ե՞րբ է առաջացել եգիպտական գիրը և քանի՞ նշանից էր բաղկացած: Ի՞նչ էին արտահայտում այդ նշանները:
4. Ի՞նչ է սեպագիրը: Ովքե՞ր են ստեղծել այն:
5. Հին Արևելքի գեղարվեստական ստեղծագործություններն ի՞նչ բնույթ ունեն: Ինչի՞ մասին են դրանք:
6. Ո՞րն է աշխարհի հնագույն վիպերգը:
7. Հին Արևելքի ժողովուրդներն ինչո՞ւ էին վիթխարի չափերի շինություններ ստեղծում:
8. Ո՞ւմ էին նվիրված Հին Արևելքի քարե արձանները:

Քննարկման հարց

Խմբային աշխատանքի միջոցով փորձե՛ք հիմնավորել, որ գրի ստեղծումն անհրաժեշտություն էր մարդկության համար:

Նոր հասկացություններ, անուններ

Հիերոգլիֆ, պապիրուս, գաղափարագիր, սեպագիր, Գիլգամեշի վիպերգ, ճարտարապետություն, քանդակագործություն

§ 12. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գիտության առաջացման նախադրյալները

Հին Արևելքի երկրներում գիտական իմացությունը սկիզբ առավ և զարգացավ մարդկանց առօրյա աշխատանքային գործունեության պահանջներին համապատասխան: Մարդկանց անհրաժեշտ էր հաշվել հողատարածքի մակերեսը, ստացված նյութական բարիքները և այլն: Մետաղներ ձուլելիս, տարբեր համաձուլվածքներ ստանալիս անհրաժեշտ էր իմանալ դրանց քիմիական հատկությունները: Աստղերի ու մոլորակների դիրքն ու շարժումն իմանալն անհրաժեշտություն էր օրացույց կազմելիս:

Մարդիկ գիտակցում էին, որ հնարավոր չէ բուժվել միայն գուշակների և հեքիմների օգնությամբ: Անհրաժեշտ էր մարդու մարմնի կառուցվածքի իմացությունը:

Գիր ստեղծելիս անհրաժեշտ էր իմանալ այս կամ այն լեզվի հնչյունական կառուցվածքը: Գրերի շնորհիվ սերունդների կուտակած փորձն ամփոփվում և պահպանվում էր:

Աստիճանաբար առաջացան գիտության տարբեր բնագավառներին վերաբերող գիտելիքներ: Գիտությունը հին ժամանակներում ուներ **գործնական նշանակություն**: Գիտությամբ զբաղվում էին կրթված քրմերը:

Հատկապես մեծ զարգացում ապրեցին **բնական գիտությունները**: Բնագիտական գիտելիքները մարդկանց անհրաժեշտ էին առօրյա կյանքում: Մարդիկ իրենց իմացությունը փոխանցում էին օժտված երեխաներին: Վերջիններս դպրոցներում ուսանում էին ժամանակի բոլոր հայտնի գիտելիքները:

Մաթեմատիկա

Եգիպտոսում ստեղծվեց հաշվելու **տասնորդական համակարգը** (10, 100, 1000 և այլն), կարողանում էին հաշվել եռանկյան, ուղղանկյան և շրջանի մակերեսը, գիտեին **կոտորակը**:

Հնդկաստանում հայտնագործեցին **զրո թիվը** և դրա նշանակությունը մաթեմատիկական հաշվարկներում: Ստեղծեցին այն թվանշանները, որոնք այսօր հայտնի են որպես **արաբական թվեր**: Դրանցից օգտվում ենք նաև մենք:

Բաբելոնական հնագույն քարտեզ, որտեղ պատկերված են Բաբելոնիան, Հայաստանը, Ասորեստանը

Քիմիա

Եգիպտոսում փարավոնների և ազնվականների մարմինը մումիավորելու ընթացքում ստանում էին այնպիսի քիմիական խառնուրդներ, որոնք մարմինը պահպանում էին քայքայումից:

Չինաստանում ստացան **վառոդը**, որի շնորհիվ հետագայում ստեղծվեց հրանոթը:



Բժշկական սարքավորումների պատկերներ հուշասյան վրա. Եգիպտոս

Աստղագիտություն

Եգիպտոսում ստեղծվեց **12 ամիսներից** և **365 օրից** կազմված **արևային օրացույցը**: Ամիսը բաղկացած էր **30 օրից**, իսկ տարվա վերջին ամսին գումարում էին ևս **5 օր**: Մոլորակները տարբերում էին աստղերից: Կազմեցին **աստղային երկնքի քարտեզ**:

Միջագետքում ստեղծեցին **լուսնային օրացույց**՝ կազմված **354 օրից**: Կարողանում էին հաշվարկել երկնային լուսատուների շարժումները, Արեգակի և Լուսնի խավարումների ժամանակը:

Հնդկաստանում գիտեին, որ **Երկիրը կլոր** է և պտտվում է իր **առանցքի շուրջը**, իսկ

Թղթի արտադրության փուլերը. Չինաստան

Լուսինն իր լույսը ստանում է Արեգակից: Օրացույցը բաղկացած էր **12 ամիսներից,** յուրաքանչյուրը՝ **30 օր** տևողությամբ:

Բժշկություն

Եգիպտոսում գիտեին մարդու ներքին օրգանների ճշգրիտ կառուցվածքը և դրանցից յուրաքանչյուրի նշանակությունը մարդու կյանքի համար: Հիվանդին զննելիս առաջին հերթին ստուգում էին նրա **զարկերակը**: Կատարում էին ներքին օրգանների վիրահատություններ: Կարողանում էին փչացած ատամի փոխարեն նորը տեղադրել: Գոյություն ունեին հիվանդանոցներ, որոնց անվանում էին **«կյանքի տուն»**: Այդտեղ աշխատում էին արհեստավարժ բժիշկներ:

Հնդկաստանում կային արհեստավարժ բժիշկներ, որոնք հիվանդությունները բուժում էին խոտաբույսերի, քսուքների միջոցով, նաև այլ եղանակներով: Նրանք կարողանում էին բուժել աչքի, սրտի, ստամոքսի, թոքերի և մաշկի հիվանդությունները:

Չինաստանում պարզեցին **թեյի** բուժիչ հատկությունները, և այն օգտագործում էին ամենատարբեր հիվանդություններ բուժելու նպատակով:

Գիտական արժեքների նշանակությունը

Հին Արևելքը մարդկությանը տվել է նաև գիտական այլ նվաճումներ: **Չինաստանում** ստեղծեցին **կողմնացույցը, թուղթը, մետաքսը, հրանոթը**: **Հնդկաստանում** ստեղծվեց հին հնդկերենի՝ **սանսկրիտի** քերականությունը:

Ինչպես տեսնում ենք, ակնառու են Հին Արևելքի գիտական ձեռքբերումները: Սակայն այդ ժամանակի գիտնականները չկա-

րողացան հաղթահարել կրոնական նախապաշարումները: Նրանց կարծիքով Երկիրը և նրա վրա գտնվող ամեն ինչ ստեղծված էր աստվածների կողմից: Օրինակ՝ երկնային լուսատուների շարժումները կառավարում էին աստվածները: Կամ՝ որքան էլ բժիշկը ձգտի բուժել հիվանդին, ոչինչ չի ստացվի, եթե աստված չկամենա:

Ստեղծված գիտական արժեքները դրեցին գիտության հետագա զարգացման հիմքերը: **Այդ արժեքների մեծ մասն այսօր շարունակում է գոյատևել:**

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են գիտության առաջացման նախադրյալները:
2. Հին ժամանակներում ովքե՞ր էին զբաղվում գիտությամբ:
3. Գիտության ո՞ր բնագավառներն էին զարգացած Հին Արևելքում:
4. Նշե՛ք Հին աշխարհի ամենակարևոր հայտնագործությունները, որոնք այսօր էլ ծառայում են մարդկանց:

Գործնական առաջադրանք

Տետրում լրացրե՛ք հետևյալ աղյուսակը.

Գիտություն					
Հին Արևելքի քաղաքակրթական կենտրոններ	Մաթեմատիկա	Քիմիա	Աստղագիտություն	Բժշկություն	Այլ բնագավառներ
Եգիպտոս					
Հնդկաստան					
Չինաստան					
Միջագետք					

Նոր հասկացություններ, անուններ

Գիտական գիտելիքներ, բնական գիտություններ, վառոդի գյուտ, լուսնային օրացույց, «կյանքի տուն», սանսկրիտ, արևային օրացույց, կողմնացույց, թուղթ, հրանոթ, գիտական արժեք

II ԲԱԺԻՆ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Եգիպտական պետությունը և մշակույթը Նեղոսի ափերին ապրող եգիպտացի ժողովրդի հավաքական, նպատակաուղղված գործունեության արդյունքն են: Նոր թագավորության շրջանում Եգիպտոսն Առաջավոր Ասիայի ամենահզոր պետություններից մեկն էր:

   Ինչ նշանակություն ունեցավ Եգիպտոսի միավորումը: Ո՞ր երկրների միջև է կնքվել «Հավերժական բարեկամության» պայմանագիրը: Թվարկե՛ք եգիպտական նշանավոր փարավոններին: Ո՞ւմ կառանձնացնեք նրանցից և ինչո՞ւ:

2. Շումերը, Աքքադը և Բաբելոնը Միջագետքի պատմության կերտողներն էին: Շումերներն առաջինը ստեղծեցին պետություն: Աքքադացիներն առաջինը միավորեցին Միջագետքը և անցան տարածքային նվաճումների Փոքր Ասիայում և Ասորիքում: Համմուրապիի օրենսգիրքն առաջին փորձն էր՝ ստեղծելու իրավական պետություն: Հետագայում Առաջավոր Ասիայի բոլոր օրենսդիր արքաները հենվում էին այդ օրենսգրքի վրա:

   Թվարկե՛ք Միջագետքի քաղաք–պետությունները: Ինչո՞ւ Համմուրապի արքան ստեղծեց օրենսգիրք: Արդյո՞ք այդ օրենսգրքի որոշ հոդվածներ կիրառելի են այսօր:

3. Առաջավոր Ասիայի պետությունների շարքում մի քանի դար առաջատարը Ասորեստանն էր: Սակայն Իրանական սարահարթից մինչև Միջերկրական ծով և Եգիպտոս տարածվող այս տերությունը չէր կարող երկար գոյատևել: Ասորեստանի անկումից հետո տարածաշրջանում այդ դերն անցավ Բաբելոնիային:

   Ո՞ր արքաների օրոք հզորացավ Ասորեստանը: Ովքե՞ր և ե՞րբ կործանեցին Ասորեստանի տերությունը: Բնութագրե՛ք Նաբուգոդոնոսոր արքային. ինչո՞վ է նա հայտնի:

4. Ք.ա. XVII դարում Փոքր Ասիա թերակղզում ստեղծված Խեթական պետությունը հետագայում վերածվեց Առաջավոր Ասիայի հզորագույն տե-

ության: Խեթերը հատկապես սերտ փոխհարաբերություններ ունեին հայկական պետական կազմավորումների հետ:

> *Երբ է Խեթական պետությունը հասել իր հզորության գագաթնակետին: Ո՞րն էր դրա մայրաքաղաքը:*

5. Միջերկրական ծովի արևելյան ափերին և Ասորիքում Ք. ա. III–I հազարամյակներում ստեղծվել էին տասնյակ խոշոր և մանր պետություններ: Այս տարածաշրջանի երկրներից միայն Միտաննին էր, որ կարողացավ կարճ ժամանակով վերածվել հզոր պետության:

> *Ինչ պետություններ կային այս տարածաշրջանում: Որոնք էին դրանց եկամտի հիմնական աղբյուրները: Ովքե՞ր, որտե՞ղ և ե՞րբ են հիմնել Կարթագեն քաղաքը:*

6. Հնդկաստանը և Չինաստանը խոշոր և բազմազգ երկրներ էին: Այստեղ գոյություն ունեին բազմաթիվ պետություններ, որոնք մշտապես պայքարում էին միմյանց դեմ: Երկու երկրների զարգացման գլխավոր շարժիչ ուժը դարձավ քաղաքական միավորումը: Միավորման պահից սկսած՝ այստեղ նկատվեց մշակութային աննախընթաց վերելք, որն արտահայտվեց նյութական և հոգևոր արժեքների ստեղծմամբ:

> *Ովքե՞ր էին արիացիները և ինչ դեր են խաղացել Հնդկաստանի պատմության մեջ: Ինչո՞վ է նշանավոր Աշոկա արքան. հիմնավորե՛ք ձեր պատասխանը: Հիշե՛ք, թե որ արքան է առաջինը միավորել Չինաստանը: Ո՞ւմ հետ և ո՞ր ճանապարհով էին առևտուր անում չինացիները:*

7. Իրանի տարածքում ապրում էին տասնյակ ժողովուրդներ և ցեղեր: Նրանց մի մասը Ք. ա. I հազարամյակի սկզբներին Ասորեստանի, ապա Վանի թագավորության գերիշխանության տակ էր: Աքեմենյան Իրանի կազմավորումը և Առաջավոր Ասիայի խոշորագույն տերություն դառնալը նոր փուլ սկզբնավորեց Հին Արևելքի պատմության մեջ:

> *Ինչ գիտեք Էլամի և Մարաստանի մասին: Հայաստանի ո՞ր արքաներն են հարաբերվել Մարաստանի հետ: Կյուրոս Մեծը հասա՞վ իր նպատակին: Ինչ նշանակություն ունեցան Դարեհ I–ի իրականացրած վերափոխումները: Ինչո՞ւ ենք ասում, որ Աքեմենյան Իրանը համաշխարհային պետություն էր: Քարտեզի վրա ցո՛ւյց տվեք Հին Արևելքի հայտնի պետությունները և դրանց մայրաքաղաքները:*

8. Դուք արդեն գիտեք, որ հավատը գերբնական ուժերի հանդեպ ծագել է մարդկության պատմության վաղ փուլում՝ նախնադարում: Պետության կազմավորումից հետո հասարակության կյանքում կրոնի դերն ու նշանակությունը ավելի ամրապնդվեց: Դա դրսևորվում էր նաև մարդկանց առօրյա կյանքի բոլոր բնագավառներում: Կրոնն իր դերով չէր զիջում աշխարհիկ իշխանությանը, նա ի վիճակի էր մերձեցնել ժողովուրդներին կամ, ընդհակառակը, հեռացնել:

> *Ինչ նմանություններ կան Արևելքի ժողովուրդների աշխարհաստեղծման առասպելների միջև: Եգիպտոսում հաճախ էր փոխվում դիցարանի գլխավոր աստվածը. ինչո՞ւ:*

9. Գիրը մարդկության ստեղծած կարևորագույն հոգևոր արժեքներից է: Առաջավոր Ասիայի շատ երկրներում ստեղծվեցին գրային տարբեր համակարգեր: Եգիպտական գաղափարագիրը և միջագետքյան սեպագիրը ծառայեցին մարդկային հասարակությանը շուրջ երեք հազարամյակ:

> *Ինչո՞ւ էր անհրաժեշտ գիրը: Թվարկե՛ք Հին աշխարհում ստեղծված մի քանի գրային համակարգ: Փորձե՛ք պարզաբանել գրի պատմական նշանակությունը:*

10. Հին Արևելքի երկրների մշակութային բազմաթիվ նվաճումների շարքում կարևոր տեղ ունեն ճարտարապետությունը, քանդակագործությունը և գեղարվեստական գրականությունը: Շատ գործեր իրենց մտահղացմամբ և կատարողական արվեստով մնացել են անգերազանցելի:

> *Հին Արևելքի արվեստի և գրականության ինչ նշանավոր գործեր կարող եք թվարկել: Ձեր կարծիքով ո՞րն է դրանցից ամենանշանավորը. հիմնավորե՛ք ձեր ընտրությունը:*

11. Մեծ էր գիտելիքների դերն արևելյան երկրների ժողովուրդների կյանքում: Այս դարաշրջանում դրվեցին բնական գիտությունների հիմքերը: Մարդկության կարևորագույն նվաճումներից էին մեծաքանակ գիտական հայտնագործությունները:

> *Գիտության ո՞ր բնագավառներն էին զարգացած Հին Արևելքում: Հասարակական ինչ նշանակություն ունեին գիտական գիտելիքները: Հին Արևելքի գիտական ո՞ր հայտնագործություններն են մինչ օրս ծառայում մարդկանց:*

§13. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԸ

Երկիրը և ազգաբնակչությունը

Հին հույներն իրենց պատմությունը կերտել են **Բալկանյան թերակղզու** հարավում և **Էգեյան ծովի** ավազանում: Հունաստանը լեռներով կտրտված, ոչ մեծ երկրամասերով տարածք է, որտեղ չկան խոշոր գետեր, արգավանդ դաշտավայրեր ու անտառներ: Ուստի գյուղատնտեսության զարգացման համար անհրաժեշտ էր պարարտացնել և ոռոգել հողը:

Երկիրը հարուստ էր օգտակար հանածոներով՝ երկաթ, պղինձ, անագ, ոսկի, արծաթ,

մարմար, կավ և այլն: Դրանք նպաստավոր պայմաններ էին ստեղծում արհեստագործության համար: Ժամանակի ընթացքում հույները հմտացան նավագնացության մեջ և հասան Միջերկրական ու Սև ծովերի հեռավոր ափերը:

Հույներն առանձին ցեղախմբերով այդ բնական միջավայր էին ներգաղթել Բալկանյան թերակղզու հյուսիսից և Փոքր Ասիայից: Այդ ցեղախմբերն էին **աքայացիները, դորիացիները, հոնիացիները**: Երբեմն նրանք պատերազմում էին միմյանց դեմ: Սակայն օտարների (որոնց անվանում էին **բարբարոսներ**) դեմ պայքարելիս միավորվում էին:

Կրետե–միկենյան դարաշրջանը

Կրետե կղզին Էգեյան ծովի հարավում է: Այստեղ բնակվող ցեղերը զբաղվում էին **երկրագործությամբ** և **անասնապահությամբ**: Հետագայում զարգացան **արհեստները՝** մետաղաձուլություն, կավագործություն, կաշեգործություն, փայտամշակություն և այլն:

Համատեղ աշխատանքի և պաշտպանության նպատակով գյուղական համայնքները սկսեցին միավորվել **ամրոց–պալատների** շուրջը: Այդ պալատներում ապրում էին տեղական արքայիկները: Կրետեում կային պալատական այդպիսի տասնյակ կենտրոններ: Ք. ա. III հազարամյակի վերջին դրանք միավորվեցին միասնական պետության մեջ: Դրա մայրաքաղաքը **Կնոսոսն էր**:

Ք. ա. XVII–XV դարերում Կրետեի թագավորությունը հասավ իր հզորության գագաթնակետին: Նա իր տիրապետությունը տարա-

Որմնանկար Կնոսոսի պալատից

Կնոսոսի պալատի ավերակները Կրետե կղզում

ծեց Էգեյան կղզիների և Բալկանյան Հունաստանի վրա: Այդ տերությունն անվանել են նաև **Կրետեի ծովապետություն:**

Սակայն Ք.ա. XV դարի կեսերին Կրետեի հզորությունը փլուզվեց: Պատճառը բնական աղետն էր՝ Էգեյան ծովի հարավում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժը:

Շուտով Կրետե ներթափանցեցին հունական աքայական ցեղերը: Նրանք Հունաստանում ստեղծել էին մանր պետություններ, որոնցից հատկապես աչքի էր ընկնում **Միկենքը:** Աքայացիները ժառանգեցին տեղական մշակույթը, կրոնը և պետական կառավարման կարգը: Այդ պատճառով այս դարաշրջանն անվանում են **կրետե–միկենյան:** Սակայն աքայացիները չկարողացան դիմակայել **Ք.ա. XII դարի կեսերին** սկսված հունական մեկ այլ ցեղի՝ դորիացիների ավերիչ արշավանքներին: Արդյունքում Կրետեի տերությունը հեռացավ պատմության ասպարեզից:

Մարդկությունը ժառանգել է կրետե–միկենյան մշակութային նվաճումները՝ շինարարական արվեստը, կրոնը, գիր ու գրականությունը, գիտական միտքը:

Հնագետները ուսումնասիրել են Կնոսոսի փլատակները: Այն հսկայական պալատական երկհարկ համալիր էր, տեղ–տեղ՝ եռահարկ: Ուներ հարյուրավոր սենյակներ: Դրանք ծառայում էին տարբեր նպատակների՝ արքայական ընդունարաններ, սրբազան արարողությունների սրահներ, կացարաններ, հսկայական պահեստներ: Արքայի իշխանությունը բացարձակ էր: Նա միաժամանակ երկրի գերագույն քուրմն էր:

Հոմերոսյան դարաշրջանի Հունաստանը (Ք.ա. XII–IX դարեր)

Դարաշրջանն անվանում են հոմերոսյան, քանի որ ուսումնասիրության հիմնական սկզբնաղբյուրները Հոմերոսի **«Իլիական»** և **«Ոդիսական»** պոեմներն են:

Այս դարաշրջանի Հունաստանը հետադիմեց. անկում ապրեցին արհեստներն ու առևտուրը: Պատճառն այն էր, որ Հունաստանում հաստատված դորիացիներն ապրում էին տոհմացեղային կենցաղով: Ջորեղ պետական միավորումներին փոխարինեցին առանձին ցեղերն ու ցեղային միավորումները:

Հոմերոսյան հասարակության հիմնական խավը **ազատ գյուղացիներն** էին: Նրանք անձնապես ազատ էին, ունեին հողի իրենց



Թեսևսի և Մինոտավրոսի մենամարտը

Կրետեի Մինոս թագավորը Աթենքի վրա ծանր ու ստորացուցիչ հարկ էր դրել. աթենացիները յուրաքանչյուր ինը տարին մեկ պետք է Կրետե ուղարկեին յոթ պատանու և յոթ աղջկա: Նրանց խժռում էր մարդու մարմնով և ցուլի գլխով հրեշը՝ Մինոտավրոսը, որն ապրում էր հռչակավոր Լաբիրինթոսում:

Աթենական արքայի որդին՝ հզոր Թեսևսը, որոշում է գնալ Կրետե և մարտնչել հրեշի հետ:

Կրետեում Մինոս թագավորի դուստրը՝ Արիադնեն, Թեսևսին գաղտնի տալիս է սուր և մի կծիկ թել: Թեսևսը թելի ծայրը կապում է Լաբիրինթոսի մուտքից և քանդելով կծիկը՝ մտնում Լաբիրինթոս: Հրեշը, եղջյուրներն առաջ պարզած, մռնչալով նետվում է Թեսևսի վրա, սակայն հերոսին հաջողվում է բռնել նրա եղջյուրը և սուրը մխրճել կուրծքը: Թելի հետքերով Թեսևսն իր ուղեկիցների հետ դուրս է գալիս Լաբիրինթոսից:

«Արիադնեի կծիկ» արտահայտությունը նշանակում է դժվար վիճակից դուրս գալու միջոց:

մասնաբաժինը, վարում էին սեփական տնտեսությունը և միաժամանակ զինվոր էին: Ավագանին բաղկացած էր նշանավոր տոհմերի ներկայացուցիչներից: Ավագանու անդամները ձեռք էին բերել հողի մեծ մասնաբաժիններ և հարստություն:

Ցեղերի և ցեղախմբերի գլուխ կանգնած էր **արքայիկը (բասիլևս)**, որը նաև զորքի հրամանատարն էր: Նրա իշխանությունը սահմանափակված էր **ավագանու խորհրդով**: Այդ խորհուրդը որոշումներ էր կայացնում բոլոր կարևոր հարցերի վերաբերյալ: Հաճախ հրավիրվում էր **աշխարհաժողով (ագորա)**: Դրան մասնակցում էին բոլոր չափահաս տղամարդիկ:

Հոմերոսյան դարաշրջանի վերջում տոհմացեղային կարգերը սկսեցին քայքայվել:

Երգիչ–ասացող Հոմերոսն ապրել է Ք.ա. VIII դարում: Նա ի մի է բերել հին ասքերը և ստեղծել «Իլիական» և «Ոդիսական» պոեմները: Դրանք պատմում են Տրոյայի (Իլիոն) դեմ մղված տասնամյա պատերազմի և հերոս Ոդիսևսի տունդարձի թափառումների մասին:

Պոեմները «հունական կյանքի հանրագիտարան» են: Այնտեղ մանրամասն նկարագրված են հին հույների կենցաղը, սովորույթները, կրոնը, հասարակական կյանքը: Երկար ժամանակ դրանք հունական դպրոցներում օգտագործվում էին որպես դասագիրք:

Հարցեր և առաջադրանքներ

1. Թվարկե՛ք և քարտեզի վրա ցո՛ւյց տվեք այն տարածքները, որտեղ բնակվել են հին հույները:
2. Հունական ի՞նչ ցեղախմբեր կարող եք հիշել:
3. Ե՞րբ է ստեղծվել Կրետեի միասնական պետությունը: Ո՞րն էր դրա մայրաքաղաքը: Ձեր կարծիքով ի՞նչու էր Կրետեի թագավորությունը ստացել «ծովապետություն» անվանումը:
4. Կրետեի թագավորությունը ո՞ր դարերում հասավ իր հզորության գագաթնակետին:
5. Ովքե՞ր էին ստեղծել Միկենքը: Ի՞նչու են այս դարաշրջանն անվանում նաև կրետե–միկենյան:
6. Հունական ո՞ր ցեղերը ներթափանցեցին Կրետե Ք. ա. XII դ. կեսերին:
7. Ի՞նչու է Հունաստանի Ք. ա. XII–IX դարերի պատմությունը ստացել «հոմերոսյան դարաշրջան» անվանումը:
8. Ի՞նչ հետևանքներ ունեցավ դորիացիների ներթափանցումը Կրետե և Հունաստան:

Գործնական աշխատանք

Գծապատկերի միջոցով ներկայացրե՛ք հոմերոսյան հասարակության կառավարման համակարգը: Դիտե՛ք հատվածներ Կնոսոսի պալատական համալիրը ներկայացնող ֆիլմից:

Նոր հասկացություններ, անուններ

Բալկանյան թերակղզի, Էգեյան ծով, աքայացիներ, դորիացիներ, հոնիացիներ, Կրետեի ծովապետություն, Կնոսոս, կրետե–միկենյան դարաշրջան, հոմերոսյան դարաշրջան, ազատ գյուղացի, արքայիկ (բասիլևս), արքայաժողով (ագորա)

§14. ԱՐԽԱՅԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԱՍՏԱՆԸ (Ք.Ա. VIII–VI ԴԱՐԵՐ)

Պոլիսային կարգը

Հունաստանի պատմության այս դարաշրջանը կոչվում է **արխայիկ** (վաղնջական), քանզի հին հույները գրեթե ոչինչ չէին հիշում իրենց պատմության նախորդ շրջանի մասին: Նոր դարաշրջանում հույները ստեղծեցին **ինքնիշխան քաղաք–պետություններ՝ պոլիսներ**: Պոլիսը ձևավորվեց միևնույն երկրամասի ցեղերի միավորման շնորհիվ: Պատճառը համատեղ պաշտպանության ու կառավարման անհրաժեշտությունն էր: Միավորման հիմք դարձան ընդհանուր բարբառը, սովորույթները, աստվածների ու նախնիների պաշտամունքը: Երկրամասերի կենտրոնական բնակավայրերը՝ **Մեգարան, Կորնթոսը,**

Ակրոպոլիսը Աթենքում



Արխաիկ հասարակության կառուցվածքը

Աթենքը, վերածվեցին խոշոր պոլիսների: Դրանցում բուռն զարգացում ապրեցին գյուղատնտեսությունը, արհեստները, առևտուրը, ծովագնացությունը:

Ժողովրդի՝ **դեմոսի** ճնշող մեծամասնությունը ազատ երկրագործներ էին: Շուկայական գների տատանումների պատճառով ոմանք հարստանում էին, ոմանք, ընդհակառակը, կորցնում էին իրենց ունեցվածքը:

Դրությունը շտկելու նպատակով սնանկացած մարդիկ փողի դիմաց գրավ էին դնում իրենց հողակտորը: Հողը կորցնելուց հետո նրանք երբեմն գրավ էին դնում իրենց և ընտանիքի անդամներին: Պարտքը չվճարելու դեպքում նրանք դառնում էին **պարտային ստրուկներ**:

Հակառակ դրան՝ ձևավորվել էր ավագանու մի նեղ վերնախավ, որն ուներ և՛ հող, և՛ հարստություն, և՛ հասարակական բարձր դիրք:

Դեմոսի ներսում կային մարդիկ, որ լքում էին հողը և մեկնում քաղաք: Այստեղ նրանք դառնում էին սնագործ գործավորներ, արհեստավորներ, ձեռներեցներ, առևտրականներ:

Ոմանք հարստանում էին և կարողությամբ հավասարվում ավագանու ամենահարուստ ներկայացուցիչներին (էվպատրիդներին):

Հակառակ պատկերն էին ներկայացնում պարտային ստրուկները: Տերերը հաճախ նրանց վաճառում էին իրենց երկրամասից դուրս:

Ճանապարհ դեպի ժողովրդավարություն. տիրանիա

«Դելֆյան ձիավարը», անտիկ հունական քանդակ

Արխաիկ դարաշրջանի սկզբում զարգացած պոլիսներում **ավագանու (էվպատրիդներ)** վերնախավն իր ձեռքը վերցրեց իշխանությունը: Բոլոր կարևոր որոշումներն ընդունում էր նրանց խորհուրդը: Նրանց էր պատկանում կառավարությունը և դատարանը: Կառավարման այս եղանակը կոչվում էր **խմբիշխանություն** (օլիգարխիա):

Այդ կառավարման նկատմամբ ընդդիմադիր ուժը դեմոսն էր: Ընդդիմադիրներին միավորում էր իրավունքներից զուրկ լինելը և պետության կառավարման գործին մասնակցություն չունենալը:

Ք. ա. VII դարի սկզբից հունական զարգացած պոլիսները դարձան դեմոսի և էվպատրիդների պայքարի թատերաբեմ: Ի վերջո դեմոսը հաղթեց: Ուղի հարթվեց դեպի կառավարման նոր համակարգ՝ **ժողովրդավարություն** (դեմոկրատիա):

Իշխանությունն անցավ դեմոսի առաջնորդներին: Նրանց անվանում էին **տիրաններ,** իսկ կառավարման ձևը՝ **տիրանիա:** Նախապես այդ բառը չէր նշանակում «բռնապետ» և չուներ բացասական իմաստ:

Տիրանները վերացնում էին պարտային ստրկությունը, էվպատրիդների հաշվին հող տալիս ունեզուրկ գյուղացիներին: Ստեղծում էին գրավոր օրենքներ, որոնց առջև բոլոր քաղաքացիները հավասար էին:

Սակայն տիրանները ժամանակի ընթացքում սկսեցին չարաշահել իշխանությունը և իրենց վեր դասել օրենքներից: Դեմոսն այս

անգամ իր պայքարն ուղղեց տիրանների դեմ: Ք. ա. VI դ. երկրորդ կեսին տիրանիայի դարաշրջանն ավարտվեց:

Հունական մեծ գաղութացումը

Ք. ա. VIII–VI դարերը նշանավորվեցին հունական մեծ գաղութացմամբ: Դրա հիմնական պատճառները տնտեսական էին՝ հացահատիկի պակասը, օգտակար հանածոների ու հումքի կարիքը: Բացի այդ, պոլիսների ներսում պայքար էր ընթանում էվպատրիդների, իսկ ապա՝ տիրանների դեմ: Պարտված կողմը լքում էր հայրենիքը և օտար ափերում հիմնում **նոր բնակավայր՝ գաղութ:**

Հույները նախ յուրացրին Հարավային Իտալիան: Այստեղ հիմնեցին շատ գաղութներ՝ պոլիսների ձևով: Դրանից հետո գաղութացման ալիքը տարածվեց Սիցիլիայում, Հարավային Ֆրանսիայում և



Կարմրանկար հունական սափոր

Դրանք օգտագործվում էին հեղուկ նյութերի պահպանման և տեղափոխման համար: Դրանց արտադրությամբ աչքի էր ընկնում հատկապես Կորնթոսը, իսկ հետագայում նաև Աթենքը: Վարպետ նկարիչները սափորների պատերը նկարազարդում էին՝ պատկերելով հին հույների (և հատկապես ավագանու) կյանքի տարբեր տեսարաններ՝ սրբազան ծիսակատարություններ, խնջույքներ, մարզական խաղեր և այլն:

Իսպանիայում: Սև ծովի ափերին նույնպես հիմնվեցին բազմաթիվ հունական պոլիսներ:

Գաղութների մի մասն ինքնիշխան էր, իսկ մյուս մասը ենթակա էր մայր պոլիսին: Գաղութների միջև հաստատվում էին փոխշահավետ տնտեսական ու քաղաքական հարաբերություններ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է պոլիսը: Ինչպե՞ս են ձևավորվել հունական պոլիսները:
2. Թվարկե՛ք Ք.ա. VIII–VII դդ. արհեստների և գյուղատնտեսության զարգացման հիմնական արդյունքները:
3. Ովքե՞ր էին պարտային ստրուկները:
4. Ի՞նչ է օլիգարխիան:
5. Նշե՛ք հունական մեծ գաղութացման պատճառները:
6. Թվարկե՛ք այն տարածքները, որտեղ հիմնվեցին հունական գաղութներ:

Քննարկման հարցեր

1. Պարզաբանե՛ք «դեմոկրատիա» (ժողովրդավարություն) բառի ծագումը:
2. Ձեր կարծիքով ինչո՞ւ տիրանիան տապալվեց:

Նոր հասկացություններ, անուններ

Պոլիս, Մեգարա, Կորնթոս, Աթենք, դեմոս, էվպատրիդներ, պարտային ստրուկ, խմբիշխանություն (օլիգարխիա), դեմոկրատիա (ժողովրդավարություն), տիրանիա, հունական մեծ գաղութացում

§15. ՀԻՆ ՍՊԱՐՏԱՆ ԵՎ ԱԹԵՆՔԸ

Լիկուրգոս

Համաձայն պատմական ավանդույթի՝ նա ստեղծել էր Սպարտայի հասարակական և պետական կարգը Ք.ա. VIII դարում: Արքայական տոհմից էր, այցելել էր բազմաթիվ երկրներ, ուսումնասիրել դրանց կարգը: Վերադառնալով Սպարտա՝ ձեռնարկել էր իր բարեփոխությունները: Դրանց նպատակն էր երկրում հաստատել բարեկարգություն, «որպեսզի ավագանին և արքաները շատ չիզորանան, իսկ ժողովուրդը նրանց հպատակվի ինքնակամ»:

Սպարտայի հասարակական կարգը

Սպարտան Բալկանյան Հունաստանի հարավում էր՝ **Լակոնիայում**: Հնագույն ժամանակներում այստեղ ապրում էին աքայացիները: Ք.ա. XII դարում երկրամասը գրավեցին դորիական ցեղերը:

Սպարտայի հասարակությունը կազմված էր երկու հակադիր դասերից՝ **սպարտիատներից** և **հելոտներից**:

Սպարտիատները դորիացիներն էին, որոնք իրենց ունեցվածքով և իրավունքներով հավասար էին միմյանց: Հողը պատկանում էր համայնքին: Սակայն սպարտիատները չէին զբաղվում երկրագործությամբ և արհեստներով: Նրանք զինվոր էին և ժամանակի մեծ մասը նվիրում էին մարմնակրթությանը:

Յուրաքանչյուր ընտանիքի տրամադրվում էր հողակտոր՝ այնտեղ ապրող հելոտներով: Վերջիններս պարտավոր էին մշակել հողը և սպարտիատին վճարել սահմանված չափի հարկ՝ բնամթերքով:

Հելոտները նվաճված և ստրկացված աքայացիներն էին: Նրանք սպարտիատների համայնքի սեփականությունն էին: Ոչ ոք իրավունք չուներ նրանց վաճառելու: Ունեին իրենց ընտանիքը և փոքրիկ տնտեսությունը: Հելոտները զուրկ էին տարրական իրավունքներից:



Հին Սպարտա. թատրոնի ավերակները

Սպարտայի պետական կառավարումը

Սպարտայում համատեղ կառավարում էին **երկու արքա**: Ըստ ավանդույթի՝ նրանք սերում էին հերոս Հերակլեսից: Արքաների իշխանությունը ժառանգական էր:

Կար նաև **Ծերակույտ**, որը կազմված էր 28 անդամից: Նրանք ընտրվում էին ցմահ՝ նշանավոր տոհմերի ներկայացուցիչներից: Արքաների հետ նրանք կազմում էին պետական կառավարման գերագույն մարմինը:

Կառավարման մարմիններից էր **աշխարհաժողովը**, որին մասնակցում էին բոլոր չափահաս սպարտիատները: Աշխարհաժողովը հրավիրվում էր ամիսը մեկ անգամ:

Պետության հզորության իրական հիմքը բանակն էր:

Մարտունակ բանակի միջոցով Սպարտան իր տիրապետությունը տարածեց Հարավային Հունաստանում (**Պելոպոնես**): Սպարտայի կողմն անցան նաև Միջին Հունաստանի այնպիսի զարգացած պոլիսներ,

Սպարտիատ

Սպարտիատն ապրում էր չափավոր կյանքով: Սակավախոս էր, մտքերն արտահայտում էր կարճ ու դիպուկ՝ **լակոնական ոճով**:

Սպարտացի զինվորն ուներ միայն հետևյալ ընտրությունը՝ հաղթել կամ մեռնել: Որդուն պատերազմի ուղարկող մայրը, նրան տալով վահանը, պատվիրում էր. «Վահանով կամ վահանի վրա»: Զոհվածներին Սպարտա էին բերում վահանների վրա:

Սպարտիատների փաղանգ

ինչպիսիք էին Կորնթոսը և Մեգարան: Ք. ա. VI դարում ձևավորվեց **Պելոպոնեսյան միությունը**:

Աթենքը Ք. ա. VII–VI դարերում

Աթենական պոլիսը Միջին Հունաստանի **Ատտիկա** մարզում էր: Ք. ա. VII դարում աստիճանաբար ձևավորվեց Աթենքի կառավարման համակարգը: Անցումը պետականության ուղեկցվում էր տոհմային ավագանու և դեմոսի միջև սուր բախումներով:

Երկրում տիրող լարված իրավիճակը շտկելու նպատակով Աթենքի կառավարիչ Սոլոնը **Ք. ա. 594 թ.** բարենորոգումներ ձեռնարկեց: Նա վերացրեց պարտային ստրկությունը: Պետության միջոցներով փրկագնեց այն աթենացիներին, ում ստրկության էին վաճառել արտերկիր: Էվպատրիդներից բռնագրավեց հողի մի մասը և տվեց ունեզուրկներին: Ըստ ունեցվածքի՝ աթենացիներին բաժանեց **չորս խավի**՝ հիմք ընդունելով

Բանակի գլխավոր ուժը ծանրազեն հետևակն էր: Սպարտիատները կռվում էին հոծ մարտաշարով, որ կոչվում էր **փաղանգ** (հուն.՝ ֆալանգ): Այն աչքի էր ընկնում իր երկաթյա կարգապահությամբ: Բանակն առաջնորդում էր արքաներից մեկը՝ երեք հարյուր հեծյալի ուղեկցությամբ: Նրանք ամենահայտնի ընտանիքների զավակներն էին:

նրանց տարեկան եկամուտը: Ծագումն այլևս վճռորոշ նշանակություն չուներ:

Սոլոնը բարեփոխեց նաև աթենական պետությունը: Սկսեց պարբերաբար հրավիրել **աշխարհաժողովի (էկլեսիա)** և **ժողովրդական դատարանի** նիստեր: Դրանց մասնակցելու իրավունք ունեին Աթենքի բոլոր քաղաքացիները: Գործում էին նաև **Պետական խորհուրդը** և **Կառավարությունը,** որոնցում ընտրվելու իրավունք ունեին միայն ունևոր քաղաքացիները:

Սոլոնից հետո, սակայն, իրավիճակն Աթենքում սրվեց: Պայքար սկսվեց տարբեր խմբավորումների միջև: **Ք. ա. 557 թ. Պիսիստրատը** գրավեց իշխանությունը և, որպես տիրան, կառավարեց երեսուն տարի:

Նա շարունակեց էվպատրիդների հողերը բռնագրավել և հանձնել ունեզուրկ գյուղացիներին: **Շուտով Ատտիկայում տիրապետող դարձավ միջին ունեցվածքի դասը:** Ստեղծվեց ոստիկանություն: Կազմավորվեցին շրջիկ դատարաններ, որոնք օրենքն ու արդարությունը հասցնում էին մինչև հեռավոր գյուղեր:

Բուռն զարգացում ապրեցին արհեստները, առևտուրը և ծովագնացությունը: Էգեյան ծովի ավազանում հաստատվեց Աթենքի տնտեսական գերակայությունը: Պիսիստրատի ջանքերով կառուցապատվեց Աթենքի միջնաբերդը:

Տիրանիայի ավարտից հետո **Կլիսթենեսն** իրականացրեց բարենորոգումներ և դարձավ Աթենքի ժողովրդավարական կարգերի իրական կերտողը:

Ք. ա. 506 թ. Կլիսթենեսը Ատտիկայի տարածքը բաժանեց **վարչական 10 շրջանների:**



Սոլոն

Հունական յոթ իմաստուններից մեկն էր: Արեց ամեն բան, որ Աթենքը խուսափի տիրանիայից և բռնություններից: Նա կարծում էր, որ մարդիկ կարող են հասնել հաջողությունների փոխզիջման ճանապարհով. «Հարուստները թող հրաժարվեն բացարձակ իշխանությունից, իսկ աղքատները՝ անկարգությունից և ընչաքաղցությունից»:

Մի անգամ ժողովուրդը Սոլոնին հարցրեց. «Որո՞նք են լավագույն օրենքները»: Նա պատասխանեց. «Նրանք, որոնք դուք կարող եք ընդունել, իրագործել և ապրել բարեկեցիկ կյանքով»:

Պետական խորհրդի կազմում քաղաքացիներն ընտրվում էին առանց ունեցվածքային տարբերությունների: Նույն սկզբունքով ստեղծվեց կառավարման բարձրագույն նոր մարմին՝ **ստրատեգոսների խորհուրդը**: Ստրատեգոսները տասն էին՝ ընտրված ամենահեղինակավոր քաղաքացիներից:

Կլիսթենեսի նորամուծություններից էր նաև **օստրակիզմի իրավունքը**: Դրա էությունն այն էր, որ ամեն տարի աշխարհաժողովի մասնակիցներին առաջադրվում էր հետևյալ հարցը. «Ո՞ւմ ես համարում Աթենքի համար վտանգավոր»: Նախապես բաժանված **կավե սալիկների՝ օստրակոնների** վրա յուրաքանչյուրը գրում էր նրա անունը, ում համարում էր այդպիսին: Ով ամենից շատ էր հիշատակվում, տասը տարով լքում էր Աթենքը: Օստրակիզմը կարևոր դեր խաղաց աթենական ժողովրդավարության կայացման գործում:

Օստրակոն՝ վկարման ենթակա անձի անունով

Հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերվել են բազմաթիվ օստրակոններ: Դրանց վրա արձանագրված են շատ հայտնի և անհայտ անուններ: Օստրակիզմի ենթարկված անձը լքում էր Աթենքը, սակայն պահպանում էր իր ունեցվածքը:

Առանձին դեպքերում աշխարհաժողովը որոշում էր ընդունում աքսորյալին սահմանված ժամկետից շուտ վերադարձնելու մասին: Առաջնորդվում էր նրա մարդկային և գործարար հատկանիշներով, որոնք կարող էին օգտակար լինել Աթենքին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որտեղ էր Սպարտան:
2. Հասարակական ինչ դասերի էր բաժանված Սպարտան: Ինչ իրավունքներ ուներ դրանցից յուրաքանչյուրը:
3. Ինչ է Ծերակույտը: Սպարտայում ովքեր էին դառնում դրա անդամ:
4. Ինչ նշանակություն ուներ բանակը Սպարտայում:
5. Որտեղ է Աթենքը: Ո՞վ էր Սոլոնը: Ինչո՞ւ նա բարեփոխումներ ձեռնարկեց:
6. Ներկայացրեք պետության կառավարման բնագավառում Սոլոնի իրականացրած բարեփոխումները:
7. Ինչ ձեռքբերումներ ունեցավ Աթենքը Պիսիստրատի կառավարման տարիներին:
8. Ինչ կարևոր ներդրում ունեցավ Կլիսթենեսը աթենական ժողովրդավարության կայացման գործում:

Գործնական աշխատանքներ

1. Գծապատկերի տեսքով ներկայացրեք Սպարտայի կառավարման համակարգը:
2. Պատկերներով ներկայացրեք սպարտական ռազմակարգը՝ փաղանգը:
3. Համեմատեք Աթենքի երեք նշանավոր պետական գործիչներին՝ կատարելով «Տրամագիր» վարժությունը:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Սպարտա, սպարտիատներ, հելոտներ, փաղանգ, «Վահանով կամ վահանի վրա», լակոնական ոճ, Պելոպոնեսյան միություն, Ծերակույտ, Սոլոն, աշխարհաժողով (էկլեսիա), Ատտիկա, Պիսիստրատ, Կլիսթենես, ստրատեգոս, օստրակիզմ

§16. ՀՈՒՆԱՍՏԱՆԸ Ք.Ա. V ԴԱՐՈՒՄ

Հույն–պարսկական պատերազմները (Ք.ա. 500–449 թթ.)

Ք.ա. VI դարի վերջին, ինչպես գիտեք, պարսիկներն իրենց տիրապետությունը հաստատեցին Փոքր Ասիայի առափնյա հունական պոլիսների վրա (Միլեթ, Եփեսոս, Հալիկառնաս): Նրանք վերացրին ժողովրդավարական կարգերը և իշխանությունը հանձնեցին իրենց հնազանդ տիրաններին: Դրանից հետո պարսիկները նպատակ դրեցին գրավելու Էգեյան ծովի կղզիները և Բալկանյան Հունաստանը:

Ք.ա. 490 թ. Աքեմենյան տերության բանակն ափ իջավ Ատտիկայի առափնյա Մարաթոնի դաշտում: Չնայած պարսկական զորքը կրկնակի ավել էր աթենականից, աթենա-

ՄԱՐԱԹՈՆԻ ԵՎ ՍԱԼԱՄԻՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԵՐԸ

Սունյո հրվ. Հեղինե կղ.

կան աշխարհազորը **Միլթիադեսի** գլխավորությամբ կատարյալ հաղթանակ տարավ:

Պարսիկների գլխավոր արշավանքը տեղի ունեցավ **Ք. ա. 480–479 թթ.**: Արշավանքը ղեկավարում էր Քսերքսես արքան:

Պարսիկներին դիմագրավելու նպատակով աթենացի զորավար **Թեմիստոկլեսը** մշակեց **ծովային պատերազմի ծրագիրը**: Դրանով նախատեսվում էր ստեղծել ռազմական ուժեղ նավատորմ և ապագա պատերազմի ելքը վճռել ծովում:

Այս անգամ պարսից հարյուրհազարանոց բանակը Հունաստան մտավ հյուսիսից: **Թերմոպիլյան կիրճում** Սպարտայի արքա

«Սալամինի ճակատամարտը». Վիլհելմ ֆոն Կաուլբախ, 1868 թ.

Ծովափին՝ բարձր բլրի վրա՝ ոսկե գահավորակին, բազմել էր պարսից արքան: Դիտում էր ճակատամարտը և կասկած չուներ հաղթանակի վերաբերյալ: Կողքին գրագիրներն էին, որ հավերժացնեին ծովամարտի մանրամասները: Սակայն արքայի հույսերը չարդարացան: Հույները լավ գիտեին տեղանքը, քամիների ու հոսանքների ուղղությունը: Նրանց նավերը թեթև էին ու դյուրաշարժ: Մինչդեռ հակառակորդի նավերը ծանր էին, մեծ ու դժվարկառավարելի, խրվում էին ծովածոցի ծանծաղուտներում: Հույները մոտենում և այրում էին հակառակորդի նավերը, կռվում էին արտակարգ քաջությամբ: Շատերը զոհվում էին հանուն հայրենիքի ազատության:

Օրվա վերջին հակառակորդի նավերից քչերն էին մնացել: Դրանք լքեցին Սալամինի ծովածոցը: Հույների հաղթանակը կատարյալ էր:

Սպարտայի արքա Լեոնիդաս

Լեոնիդասը փորձեց կանգնեցնել հակառակորդին, բայց ուժերը խիստ անհավասար էին: Նա իր 300 մարտիկների հետ զոհվեց: Մերունդների հիշողության մեջ Լեոնիդասը մնաց իբրև հերոսության ու փառքի մարմնացում:

Հակառակորդը ներխուժեց Ատտիկա, որտեղից բնակչությունը հասցրել էր տեղափոխվել **Սալամին կղզի:** Սալամինի ծովածոցում աթենական նավատորմը փայլուն հաղթանակ տարավ: Քսերքսեսը թողեց իր բանակը և վերադարձավ: Նա այլևս չէր հավատում իր հաղթանակին:

Դրանից հետո պատերազմն ընթացավ Էգեյան ծովի կղզիներում և Փոքր Ասիայում: **Ք. ա. 449 թ.** ի վերջո կնքվեց հաշտության դաշնագիր: Պարսիկները հրաժարվում էին նվաճողական ծրագրերից և խոստանում այլևս չմիջամտել Հունաստանի ներքին գործերին:

Այսպիսով՝ հույն–պարսկական պատերազմներն ավարտվեցին հունական պոլիսների հաղթանակով:

Պերիկլեսյան դարաշրջանի Աթենքը (Ք. ա. 444–429 թթ.)

Հույն–պարսկական պատերազմների ընթացքում Հունաստանում տեղի ունեցավ ժողովրդավարության հետագա խորացում: Կատարվեցին բարենորոգումներ, որոնք իրենց տրամաբանական ավարտին հանգեցին ականավոր պետական գործիչ **Պերիկլեսի** օրոք: Տասնհինգ տարի անընդմեջ նա ընտրվեց Աթենքի առաջին ստրատեգոս:

Պերիկլեսը կարգավորեց հասարակական կյանքի բոլոր կողմերը՝ նախ և առաջ կարևորելով **քաղաքացիության հարցը:** Քաղաքա-

ցի ճանաչվեց շուրջ 50 000 չափահաս տղամարդ, որոնց ծնողները աթենացի էին: Ատտիկայում բնակվող կանայք ու երեխաները, ինչպես նաև բազմաքանակ օտարերկրացիները քաղաքացի չէին համարվում: Աթենացիների հետ նրանք կազմում էին երկրի ազատ բնակչությունը՝ մոտ 350 000 մարդ:

Նրանց հակադրված էին անազատները՝ մեծ մասամբ օտար ծագումով ստրուկներ: Նրանք իրավազուրկ էին և կազմում էին Ատտիկայի բնակչության մոտ 20 տոկոսը:

Պերիկլեսն օրենքով սահմանեց քաղաքացիների **իրավահավասարությունը:** Անկախ ունեցվածքային, մտավոր ու կրթական մակարդակից՝ Աթենքի քաղաքացիներն օրենքի առաջ հավասար էին: Պետական պաշտոն վարելու համար սահմանվեց աշխատավարձ: Ամենաաղքատ քաղաքացիներն անգամ հնարավորություն ստացան մասնակցելու պետական գործերին:

Մեծացավ աշխարհաժողովի դերը: Այն ընդունում էր բոլոր օրենքները և հետևում դրանց կատարմանը: Աշխարհաժողովը պարբերաբար քննարկում էր բոլոր պաշտոնյաների հաշվետվությունը, որոշում արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրները: Իսկ ընթացիկ խնդիրները լուծում էր **Պետական խորհուրդը,** որը ենթակա էր աշխարհաժողովին:

Պերիկլեսյան **Աթենքը դարձավ արվեստների և գիտության կենտրոն:** Այստեղ ապրում ու ստեղծագործում էին շատ նշանավոր պատմագիրներ, իմաստասերներ, թատերագիրներ, ճարտարապետներ, նկարիչներ, քանդակագործներ: Քաղաքում կառուցվեցին բազ-



Պերիկլես

Սերում էր ազնվական ընտանիքից, ստացել էր համակողմանի կրթություն, փայլուն հռետոր էր: Միտքն ու գործը միտված էին ժողովրդի բարեկեցության ապահովմանը: Իզուր չէ, որ նրա կառավարման տարիները համարվում են պոլիսային ժողովրդավարության ծաղկման ժամանակաշրջան:

մաթիվ տաճարներ, պետական ու բնակելի շինություններ: Աթենքը վերածվեց Հունաստանի մշակութային կենտրոնի:

Պոլիսային կարգի անկումը

Հույն–պարսկական պատերազմներից որոշ ժամանակ անց պոլիսների միջև խորացան ներքին հակասությունները, որոնք հանգեցրին համահունական պատերազմի:

Ք. ա. 431–404 թթ. Հունաստանում ընթանում էր, այսպես կոչված, **Պելոպոնեսյան պատերազմը**: Հույները կռվում էին միմյանց դեմ՝ հողի, հարստության և ազդեցության համար: Հիմնական ախոյանները Աթենքը և Սպարտան էին: Աքեմենյան տերության նյութական օժանդակությամբ Սպարտան կորզեց հաղթանակը:

Պատերազմը քայքայեց երկրի տնտեսությունը, սրեց ներքին հակասությունները: Դրան հետևեցին սովն ու համաճարակը: Այս ծանր պայմաններում հունական զարգացած պոլիսներում միաձույլ դեմոսը վերափոխվեց **ամբոխի**: Նրան օտար դարձան բարձր գաղափարները: Ի հայտ եկավ քաղաքական գործիչների մի նոր սերունդ, որն առաջնորդվում էր ոչ թե հասարակության, այլ սեփական շահերով: Նրանց կոչում էին **ամբոխավարներ**: Ընտրակաշառքով և գեղեցիկ խոստումներով նրանք ժողովրդին դարձնում էին կույր գործիք:

Այս իրադարձություններով ավարտվեց Հին Հունաստանի դասական դարաշրջանի պատմությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ են սկսվել հույն–պարսկական պատերազմները: Ք. ա. 490 թ. ի՞նչ նշանավոր ճակատամարտ է տեղի ունեցել:
2. Թվարկե՛ք Քսերքսեսի արշավանքի ժամանակ տեղի ունեցած գլխավոր իրադարձությունները:
3. Ե՞րբ և ինչո՞վ ավարտվեցին հույն–պարսկական պատերազմները:
4. Ինչպե՞ս Պերիկլեսը լուծեց Աթենքի բնակիչների քաղաքացիության հարցը:
5. Պետական կառավարման համակարգում ի՞նչ փոփոխություններ կատարեց Պերիկլեսը:
6. Գնահատե՛ք Պերիկլեսի գործունեությունը:
7. Ե՞րբ է տեղի ունեցել Պելոպոնեսյան պատերազմը: Ո՞վ հաղթեց այդ պատերազմում:
8. Ե՞րբ և ի՞նչ պատճառներով անկում ապրեց ժողովրդավարությունը: Ի՞նչ է ամբոխավարությունը:

Գործնական աշխատանքներ

Դիտե՛ք «Երեք հարյուր սպարտացիներ» ֆիլմը, ապա կատարե՛ք անհրաժեշտ մեկնաբանություններ:

Քննարկման հարց

Հայտնի է Թեմիստոկլեսի հետևյալ արտահայտությունը. «Հայրենիքը պոլիսի ո՛չ պատերն են, ո՛չ տաճարները, ո՛չ էլ անգամ նախնիների գերեզմանները, այլ քաղաքացիները և նրանց օրենքները»: Համաձա՞յն եք նրա տեսակետին. հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

Նոր հասկացություններ, անուններ

Հույն–պարսկական պատերազմներ, Մարաթոնի ճակատամարտ, Թեմիստոկլես, Քսերքսես, Լեոնիդաս, Սալամինի ծովամարտ, Պերիկլես, Աթենքի քաղաքացի, Պելոպոնեսյան պատերազմ, ամբոխավարություն, դասական դարաշրջանի ավարտ

§ 17. ԴԱՍԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ



Զևսի արձանը

Կրոնը

Հույների կրոնը բազմաստվածային էր: **Ք. ա. VIII–VI դարերում** ձևավորվեց **օլիմպիական տասներկու աստվածների** պաշտամունքը: Ըստ հույների՝ աստվածները բնակվում էին Օլիմպոս լեռան գագաթին:

Զևսը օլիմպիական աստվածների հայրն էր, կյանքի արարիչը, երկնքի, լույսի, արդարության աղբյուրը: Ուներ նաև պատժիչ գործառույթ. շանթերով սաստում էր կարգազանցներին:

Հերան ընտանիքի, մայրության, բարոյական մաքրության դիցուհին էր, Զևսի կինը:

Ապոլոնը Արեգակի, լույսի, ճշմարտության, գուշակության, բժշկության դիցն էր: Հովանավորում էր գիտությունները, արվեստները և արհեստները:

Ափրոդիտեն գեղեցկության ու սիրո դիցուհին էր:

Աթենասը իմաստության, ճարտարության և արհեստների դիցուհին էր:

Արտեմիսը Լուսնի դիցուհին էր, բույսերի ու կենդանիների հովանավորը:

Դեմետրան մայր հողի և պտղաբերության դիցուհին էր:

Հեփեստոսը կրակի, դարբնության և ճարտարության դիցն էր:

Արեսը ռազմի դիցն էր:

Հերմեսը Զևսի բանբերն էր: Նախապես հոտերի և հովիվների, ապա նաև ճանապարհների և առևտրականների պահապանն էր:

Դիոնիսոսը պտղաբերության, խաղողի որթի, գինու և զվարճանքի դիցն էր: Հովանավորում էր թատրոնը:

Պոսեյդոնը գետերի, լճերի, ծովերի և օվկիանոսների տիրակալն էր, նավագնացների հովանավորը:

Բացի օլիմպիական ընտանիքի աստվածներից՝ կային բազմաթիվ ոգիներ, հերոսներ, որոնց հույները նույնպես պաշտում էին:

Կրթությունը

Ք. ա. VIII դ. Հունաստանում սկզբնավորվեց գրավոր մշակույթը: Հույները փյունիկեցիներից փոխ առան այբուբենը և հարմարեցրին իրենց լեզվին՝ ստեղծելով **22 տառից կազմված այբուբեն:** Գրառումները կատարվում էին մոմածածկ տախտակների կամ պապիրուսների վրա: Ստեղծվեցին առաջին գրքերը:

Արխաիկ դարաշրջանում գրաճանաչ մարդկանց մեծ պահանջ առաջացավ: **Պոլիսներում սկսեցին պետական ծախսերով բացել տարրական դպրոցներ:** Երեխաներին սովորեցնում էին գիր, հաշիվ, սրբազան երգեր ու

«Աթենքի դպրոցը».
Ռաֆայել Սանտի



Հոմերոս

ծեսեր: Ք.ա. V դ. Հունաստանում գրաճանաչության մակարդակը բավականին բարձր էր:

Հետագայում հայտնվեցին նաև բարձր տիպի դպրոցներ: Դրանք մասնավոր էին, պատկանում էին հանրաճանաչ իմաստասերներին: Այդպիսիք էին **Պլատոնի ակադեմիան** և **Արիստոտելի լիկեոնը**: Իմաստասերներն իրենց աշակերտներին գիտելիքներ էին տալիս բնության և հասարակության մասին:

Գրականությունը և թատրոնը

Գրականությունը ձևավորվել է հնագույն առասպելների և ասքերի հիման վրա: Կային աստվածներին և հերոսներին նվիրված շարքեր: Հատկապես մեծ տարածում ուներ ասքերի այն շարքը, որը պատմում էր Տրոյայի դեմ աքայացիների մղած տասնամյա պատերազմի մասին: Արդեն գիտեք, որ վիպասաց **Հոմերոսը** ի մի բերեց դրանք և ստեղծեց **«Իլիական»** ու **«Ոդիսական»** պոեմները, որոնք համաշխարհային գրականության գլուխգործոցներ են:

Արխաիկ դարաշրջանում ձևավորվեց գրականության մի նոր ժանր՝ **քնարերգությունը**:



Դիոնիսոսի թատրոնը Դելփիքում

Քնարի նվագակցությամբ բանաստեղծները կարդում էին իրենց ստեղծագործությունները, որոնք սիրո և տառապանքի, հրճվանքի և հիասթափության, հավատարմության և խարդավանքի մասին էին:

Նույն դարաշրջանում Դիոնիսոս աստծուն նվիրված ծիսակատարություններից ծնվեց **թատրոնը**: Հունական թատրոններում բեմադրվում էին **ողբերգություններ** (տրագեդիա) և **կատակերգություններ** (կոմեդիա):

Ներկայացումների համար սկսեցին կառուցել կիսաշրջանի տեսքով հատուկ շինություններ, որոնք կոչվեցին **ամֆիթատրոններ**:

Ք. ա. V դարի խոշորագույն ողբերգակներից են **Էսքիլեսը, Սոփոկլեսը, Էվրիպիդեսը**:

Արվեստը

Հունաստանում հատկապես զարգացած էին ճարտարապետությունն ու քանդակագործությունը: Համաչափության սկզբունքով հույն վարպետները ստեղծում էին բազում շինություններ: Շաղախ չէին օգտագործում, խոշոր քարերը՝ մարմար, կրաքար, բազալտ, մշակում էին մեծ ճշգրտությամբ և դնում իրար վրա: Ճարտարապետական մեծարժեք շինություններ էին ստեղծվում բոլոր զարգացած պոլիսներում:

Մարմնակրթությունը

Մարմնական դաստիարակությունը հույների կյանքի անբաժանելի մասն էր: Նրանց կարծիքով՝ մարդը պետք է ձգտեր կատարելության ինչպես մտավոր, այնպես էլ մարմնական զարգացման գործում: Կառուցում էին **գիմնազիոններ**, որտեղ մարդիկ զբաղվում

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Խաղերն անցկացվում էին Օլիմպիա ավանում, որտեղ Զևսի և նրա կնոջ՝ Հերա դիցուհու տաճարներն էին: Կառուցվել էին նաև գիմնազիոն՝ մարզումների և ստադիոն՝ մրցումների համար: Դասական շրջանում խաղերը տևում էին հինգ օր:

Առաջին օրը կատարվում էին սրբազան ծիսակատարություններ: Մարզիկներն ու դատավորները հանդիսավոր երդվում էին լինել ազնիվ ու արդար:

Հաջորդ երեք օրերին մարզիկները մրցում էին ձիավարությունից, մարտակառք կառավարելուց, ըմբշամարտից, կոփամարտից, վազքից և այլն:

Վերջին՝ հինգերորդ օրը հրապարակվում էին հաղթողների անունները: Նրանք պարգևատրվում էին դափնեպսակով: Դրան հաջորդում էր սրբազան ճաշկերույթ: Մարզիկները լքում էին Օլիմպիա ավանը՝ խոստանալով բարձր պահել խաղերի հեղինակությունը:

Օլիմպիական խաղերը շարունակվել են մինչև Ք. հ. 393 թ.: Քրիստոնեական եկեղեցու պահանջով դրանք արգելվել են: Վերականգնվել են միայն 1896 թ., երբ Աթենքում կազմակերպվեցին մեր ժամանակների Առաջին օլիմպիական խաղերը:

Սկավառակակիրը

էին տարբեր մարզաձևերով՝ վազք, կռփամարտ, նետաձգություն, ձիավարություն և այլն: Շուտով սկսեցին կազմակերպել տեղական և համահունական մրցումներ:

Դրանցից ամենաճանաչվածը աստվածների պատվին կազմակերպվող **օլիմպիական խաղերն** էին: Առաջին օլիմպիական խաղերը անցկացվել են **Ք. ա. 776 թվականին** Հարավային Հունաստանի Էլիդա երկրամասում: Դրանք կազմակերպվում էին չորս տարին մեկ անգամ: Խաղերի ընթացքում Հունաստանում հռչակվում էր համընդհանուր խաղաղություն:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ըստ հույների՝ որտեղ էին բնակվում իրենց աստվածները:
2. Ումից էին հույները փոխ առել այբուբենը: Քանի՞ տառ ուներ հունական այբուբենը:
3. Թվարկեք Հին Հունաստանի բարձր տիպի դպրոցները: Ի՞նչ էին այնտեղ սովորեցնում:
4. Հունական ո՞ր պոեմներն են համաշխարհային գրականության գլուխգործոցներ: Ո՞վ է դրանց հեղինակը:
5. Ինչպե՞ս է առաջացել թատրոնը: Ի՞նչ էին բեմադրում թատրոններում:
6. Ե՞րբ և որտե՞ղ են կայացել Առաջին օլիմպիական խաղերը:

Գործնական աշխատանք

Տետրում լրացրե՛ք աղյուսակը՝ ըստ օրինակի.

Հունական դիցարան	*Ինչի աստված է*	*Հայկական դիցարանի համարժեք աստվածը*
Ափրոդիտե	Սիրո և գեղեցկության	Աստղիկ

Նոր հասկացություններ, անուններ, տերմիններ

Օլիմպիական տասներկու աստվածներ, իմաստասեր (փիլիսոփա), Պլատոն, Պլատոնի ակադեմիա, Արիստոտել, Արիստոտելի լիկեոն, ողբերգություն, կատակերգություն, ամֆիթատրոն, գիմնազիոն, օլիմպիական խաղեր

III ԲԱԺԻՆ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Հունաստանը, հնում ունենալով մարդկային և նյութական սահմանափակ հնարավորություններ, մեծ ավանդ է ներդրել համաշխարհային պատմության մեջ: Հին Հունաստանից է սկսվում արդի Եվրոպան:

> *Կրետեի թագավորությունն ինչ դեր է խաղացել Հունաստանի պատմության մեջ: Բնութագրե՛ք Հոմերոսյան դարաշրջանը, որքա՞ն է այն տևել:*

2. Արխաիկ դարաշրջանում Հունաստանում ձևավորվեց պետության մի ինքնատիպ տարատեսակ՝ պոլիսը (քաղաք–պետություն): Դրանում աստիճանաբար հզորացավ միջին ունեցվածքի հասարակական դասը: Նա տապալեց ավագանու տիրապետությունը և ճանապարհ հարթեց ժողովրդավարական կարգերի հաստատման համար: Մեծ գաղութացման շնորհիվ հունական կենցաղն ու մշակույթը տարածվեցին Միջերկրական և Սև ծովերի ավազաններում:

> *Թվարկե՛ք հունական մի քանի հայտնի պոլիսներ և ցո՛ւյց տվեք քարտեզի վրա: Պոլիսներում կառավարման ինչ համակարգ հաստատվեց: Ինչ է օլիգարխիան: Ինչո՞ւ հույները գաղութներ հիմնեցին ծովափնյա տարբեր վայրերում:*

3. Ք.ա. VIII–VI դարերում ձևավորված Սպարտա պետությունը մեծ դեր է խաղացել Հունաստանի պատմության մեջ: Դա պայմանավորված էր նրա յուրօրինակ հասարակական կառուցվածքով, ինչպես նաև սպարտացիների բարոյական և մարդկային արժեքներով:

> *Գծապատկերով ներկայացրե՛ք Սպարտայի դասային կառուցվածքը և կառավարման համակարգը: Դասատիրապետության ինչ համակարգ էր գործում Սպարտայում: Բնութագրե՛ք և փորձե՛ք պատկերել մի սպարտացու:*

4. Աթենքը Ատտիկա երկրամասի կենտրոնն էր, որը Միջին Հունաստանում է: Նշված դարաշրջանում Աթենքում անզիջում պայքար ծավալվեց էվպատ-

րիդների խմբիշխանության դեմ: Պետությունը բռնեց բարեփոխումների ուղին, որը հանգեցրեց ժողովրդավարական պոլիսի ձևավորմանը:

Ո՞ւմ բարեփոխումների շնորհիվ Աթենքում հաստատվեց ժողովրդավարություն: Գծապատկերով ներկայացրե՛ք Աթենքի կառավարման համակարգը:

5. Ք. ա. V դ. սկզբներին պատերազմներ սկսվեցին հույների և պարսիկների միջև: Աքեմենյան տերության դեմ մղված ազատագրական պայքարի ընթացքում Աթենքում մեծ զարգացում ապրեց ժողովրդավարությունը: Նրա գագաթնակետը դարձան Պերիկլեսի կառավարման տասնհինգ տարիները:

Որո՞նք էին հույն–պարսկական պատերազմների պատճառները, ինչո՞վ ավարտվեցին դրանք: Ինչպե՞ս են կոչվում և ի՞նչ նշանակություն ունեցան Պերիկլեսի կառավարման տարիները: Ասում են՝ Աթենքը դարձավ Հունաստանի հոգևոր կենտրոնը. հիմնավորե՛ք այդ տեսակետը:

6. Դասական դարաշրջանում հին հույները ստեղծեցին մշակութային բարձրակարգ արժեքներ, որոնք կազմում են եվրոպական արդի մշակույթի հիմքը: Դրանք վերաբերում են ամենատարբեր բնագավառների՝ կրոն, իմաստասիրություն, թատրոն, ճարտարապետություն, դպրոց, գրականություն, կերպարվեստ և մարմնակրթություն:

Ո՞ր ժամանակաշրջանն է ընդգրկում հունական դասական մշակույթը: Ներկայացրե՛ք այդ մշակույթի նվաճումներն՝ ըստ բնագավառների: Ե՞րբ և որտե՞ղ են կայացել Առաջին օլիմպիական խաղերը: Այսօր անցկացվո՞ւմ են օլիմպիական խաղեր: Ի՞նչ գիտե՛ք դրանց մասին:

§18. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑԻ

Մակեդոնիայի վերելքը

Հունական պոլիսների ճգնաժամի շրջանում Բալկանյան թերակղզում հզորանում էր մեկ այլ երկիր՝ **Մակեդոնիան**: Այս երկիրը համեմատաբար ուշ մտավ պատմական ասպարեզ: Նրանում դեռ կենսունակ էին տոհմական կյանքի վերապրուկները: Ավագանին ուժեղ էր, իսկ արքայական իշխանությունը՝ թույլ:

Իրավիճակը փոխվեց **Փիլիպոս II–ի (Ք. ա. 359–336 թթ.)** օրոք: Ամրապնդվեց արքայական իշխանությունը, զարգացավ տնտեսությունը: Ստեղծվեց ժամանակի լավագույն բանակը, որի կորիզը հունական կատարելագործված փաղանգն էր:

Արքան վարում էր նպատակասլաց արտաքին քաղաքականություն: Նա նպատակ ուներ նվաճելու Հունաստանը: Գործելով մերթ դիվանագիտությամբ, մերթ ռազմական միջոցներով՝ Փիլիպոս II–ը ի վերջո հասավ իր նպատակին: **Ք. ա. 338 թ.** նրա բանակը մտավ Հունաստան և պարտության մատնեց պոլիսների միացյալ զորքին: Նա Կորնթոսում հրավիրեց վեհաժողով: Փիլիպոս II–ի ղեկավարությամբ ստեղծվեց **համահունական միություն,** որի նպատակն էր վրեժ լուծել պարսիկներից՝ հույների ոտնահարված պատվի համար: Փիլիպոսը ներկայանում էր

Փիլիպոս II

Մակեդոնիայի այս արքան բարդ ու հակասական անձնավորություն էր: Հեռատես էր ու զգույշ, բայց միաժամանակ՝ հախուռն ու անկանխատեսելի:

Իրեն պահում էր պարզ ու հասարակ, լսում էր անգամ հասարակ զինվորի կարծիքը: Այդուհանդերձ, սիրում էր շքեղությունն ու փառքը:

Հաճախ խախտում էր կնքած պայմանագրերը: Սիրում էր կրկնել. «Ոսկով բեռնված ավանակը կարող է գրավել ուզածդ ամրոցը»:

որպես հույների և մակեդոնացիների առաջնորդ: Նա սկսեց պատերազմի նախապատրաստվել Իրանի դեմ, սակայն Ք.ա. 336 թ. դավադրաբար սպանվեց:

Գահ բարձրացավ թագաժառանգ **Ալեքսանդրը (Ք.ա. 336–323 թթ.)**: Տաղանդավոր այդ երիտասարդը ստացել էր հունական հիմնավոր կրթություն: Նրա ուսուցիչն էր իմաստասեր **Արիստոտելը**: Գիտելիքների և անկոտրում կամքի շնորհիվ նրան վերապահված էր դառնալ Հին աշխարհի մեծագույն գործիչներից մեկը:

Ալեքսանդր Մակեդոնացին ավարտին հասցրեց պարսիկների դեմ պատերազմի նախապատրաստությունը:

Ալեքսանդր Մակեդոնացու սարկոֆագը, որի վրա քանդակված են դրվագներ նրա հերոսական արշավանքներից

«Ալեքսանդր Մակեդոնացու մուտքը Բաբելոն»
Շառլ Լեբրեն

Ալեքսանդրի Արևելյան արշավանքը և մեծ տերության կազմավորումը

Ք.ա. 334 թ. երիտասարդ արքան 40–հազարանոց բանակով մուտք գործեց Փոքր Ասիա: Սկսվեց նրա նշանավոր **Արևելյան արշավանքը**: Այն տևեց շուրջ տասը տարի՝ մինչև Ք.ա. 325 թ.: Ալեքսանդրը նախ գրավեց գրեթե ամբողջ Փոքր Ասիան, ապա Փյունիկիան, Եգիպտոսը և Ասորիքը: Գլխավոր ճակատամարտը տեղի ունեցավ **Ք.ա. 331 թ.** Հյուսիսային Միջագետքում՝ **Գավգամելա** կոչվող վայրում: Պարսկական զորքը ջախջախվեց:

Հետագայում պարսիկներն առանց դիմադրության հանձնեցին իրենց մայրաքաղաքը՝ **Պերսեպոլիսը**: Այն կողոպտվեց ու ավերվեց: Այնուհետև Ալեքսանդրը հպատակեցրեց Արևելքը՝ ընդհուպ մինչև Հնդկաստան: Նա ուներ բազմաթիվ մտահղացումներ, սակայն բանակը հոգնել էր: Հրաժարվելով առաջ շարժվելուց՝ զինվորները ստիպեցին Ալեքսանդրին դադարեցնել արշավանքը:

Ք.ա. 331 թ. գարնանը Ալեքսանդր Մակեդոնացին դուրս եկավ Եգիպտոսից և ուղղություն վերցրեց դեպի Միջագետք: Նրան այցելեցին պարսից արքա Դարեհ III–ի դեսպանորդները: Արքան առաջարկում էր կնքել խաղաղության դաշնագիր՝ խոստանալով ճանաչել Ալեքսանդրի իշխանությունը Եփրատից արևմուտք ընկած տարածքների նկատմամբ: Ալեքսանդրի պատասխանը դիպուկ էր ու լակոնական. *«Պետք չէ ինձ զիջել այն, ինչ արդեն գրավել եմ զենքով»:*

Ք.ա. 325 թ. արքան վերադարձավ **Բաբելոն,** որը դարձրել էր իր տերության մայրաքաղաքը: Պատմության մեջ նախադեպը չունեցող տերությունը միավորում էր Հունաստանից ու Մակեդոնիայից մինչև Հնդկաստան ընկած տարածքը:

Հելլենականություն (հելլենիզմ)

Հելլենականություն բառացի նշանակում է **հունականություն:** Ալեքսանդրի տերության ստեղծմամբ տեղի ունեցավ հունական և արևելյան մշակույթների փոխներթափանցում, համադրում:

Ալեքսանդրի տերության հսկայական տարածքում լուրջ խնդիր ծառացավ: Անհրաժեշտ էր կարգավորել այնտեղ ապրող բազմաթիվ ժողովուրդների կյանքը: Նրանք հասարակական զարգացման ամենատարբեր մակարդակներում էին՝ տոհմացեղային կենցաղից մինչև պոլիսային կարգ:

Արիստոտելը դասավանդում է Ալեքսանդրին

Ալեքսանդրի ուսուցիչ Արիստոտելը նրան հորդորում էր գրավել Արևելքը և ստրկացնել տեղացիներին: Սակայն նա հրաժարվեց այդ ծրագրից: Ընդհակառակը, արեց ամեն բան՝ արևելցիների համակրանքը շահելու համար:

Պատմում են, որ Աքեմենյան վերջին արքա Դարեհ III–ը իր ենթականերից մեկի դավադրության զոհը դարձավ: Ալեքսանդրը ձերբակալեց դավադրին և կազմակերպեց դատավարություն: Ինքն էլ հանդես եկավ որպես մեղադրող: Վերջում պահանջեց մահապատիժ, քանի որ «նա ձեռք էր բարձրացրել իր աստվածային տիրակալի վրա»:

Ալեքսանդրը գիտեր գնահատել իր հակառակորդներին: Եվ դա բազմապատկում էր նրա փառքը:

Ալեքսանդրը փորձեց միավորել Արևելքի՝ իր իշխանությանը ենթակա ժողովուրդներին: Նա սկսեց հետաքրքրվել նրանց օրենքներով, սովորույթներով ու բարքերով, իր կողմը գրավել ավագանուն: Նրա նպատակն էր համադրել այն լավագույնը, որ ստեղծել էին հույները և Արևելքի ժողովուրդները: Հունարենը դարձավ ազգամիջյան հաղորդակցության պաշտոնական լեզու:

Փորձ արվեց համադրությունն իրագործելու նաև կրոնի ասպարեզում: Արքան ցանկանում էր իր տերության մեջ հաստատել **հավերժական կրակի** պաշտամունքը: Մտցվեց նաև արքայի պաշտամունքը: Նա ներկայացվում էր իբրև կենդանի աստված:

Ալեքսանդրը մեծ կարևորություն էր տալիս քաղաքներին՝ իբրև փոխշփումների միջավայրի: Նա իր արշավանքի ժամանակ **հիմնեց ավելի քան յոթանասուն քաղաք:**

Յուրաքանչյուր երկրում հունական և արևելյան արժեքների համադրությունը դրսևորվում էր յուրահատուկ ձևերով: Հունաստանի և Արևելքի արժեքների այս համադրությունը **աշխարհի միավորման (համաշխարհայնացման) առաջին պատմական փորձն էր:**

Ալեքսանդր Մակեդոնացին և Դարեհը III-ը Գավգամելայի ճակատամարտում, խճանկար

Հարցեր և առաջադրանքներ

1. Որտեղ է Մակեդոնիան: Ո՞ր արքայի օրոք Մակեդոնիայում ամրապնդվեց արքայական իշխանությունը:
2. Ո՞րն էր Կորնթոսյան միության պաշտոնապես հռչակված նպատակը:
3. Երբ է սկսվել Ալեքսանդր Մակեդոնացու Արևելյան արշավանքը: Քանի՞ տարի է տևել այն:
4. Թվարկե՛ք Ալեքսանդր Մակեդոնացու նվաճած երկրներն ու տարածքները:
5. Բացատրե՛ք «հելլենականություն» հասկացությունը: Հասարակական կյանքի ո՞ր բնագավառներում այն դրսևորվեց:
6. Իր արշավանքների ընթացքում քանի՞ քաղաք է հիմնադրել Ալեքսանդրը: Ի՞նչ նպատակ էր դա հետապնդում:

Քննարկման հարց

Փորձե՛ք հիմնավորել, որ Ալեքսանդր Մակեդոնացին Հին աշխարհի մեծագույն գործիչներից է:

Նոր հասկացություններ, անուններ

Մակեդոնիա, Փիլիպոս II, Կորնթոսյան միություն, Ալեքսանդր Մակեդոնացի, Արևելյան արշավանք, Գավգամելայի ճակատամարտ, հելլենականություն, աշխարհի միավորման առաջին պատմական փորձ

§ 19. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Ալեքսանդրի տերության տրոհումը

Ալեքսանդր Մակեդոնացին մահացավ Ք. ա. 323 թ. 33 տարեկան հասակում: Արքայական իշխանության համար դաժան պատերազմներ սկսվեցին: Միմյանց դեմ պայքարում էին Ալեքսանդր Մեծի զորավարները, որոնցից յուրաքանչյուրը ձգտում էր զբաղեցնելու թափուր գահը: Ի վերջո Ալեքսանդրի տերությունը տրոհվեց: Առաջացան հելլենիստական նոր պետություններ՝ **Սելևկյան տերությունը, Եգիպտոսը, Մակեդոնիան, Պերգամոնը** և այլն:

Պտղոմեոս I

Եգիպտոս

Այս պետությունը հիմնել է Ալեքսանդրի զորավարներից **Պտղոմեոսը Ք. ա. 305 թվականին:** Տարածքն ընդգրկում էր Նեղոսի հովիտը և Էգեյան ծովի արևելյան ափի որոշ հատվածներ: Բանակը և երկրի կառավարումը կենտրոնացած էին մակեդոնացիների ու հույների ձեռքին:

Համայնական գյուղացիներն իրավազուրկ էին: Նրանք պարտավոր էին պետությանը առաջին հերթին մատակարարել հացահատիկ: Գյուղացիներից քիչ էին տարբերվում արհեստավորները:

Դրան հակառակ՝ արքունիքն ապրում էր շվայտ կյանքով: Արքան իր մտերիմներին, պաշտոնյաներին ու զինվորականներին նվիրում էր կալվածքներ և ստրուկներ՝ դարձնելով պետական իշխանության հենարան:

Ալեքսանդր Մակեդոնացու մանկության ընկերն էր: Մասնակցել է նրա բոլոր ձեռնարկումներին: Արևելյան արշավանքի ժամանակ եղել է մակեդոնական հեծելազորի հրամանատարներից մեկը:

Պահել է օրագիր, որտեղ նկարագրել է արշավանքի պատմությունը: Այն սկզբնաղբյուր է դարձել հետագա հեղինակների համար:

Ալեքսանդրը նրան վստահել է հարուստ և զարգացած Եգիպտոսի կառավարումը: Արքայի մահից հետո Պտղոմեոսը նրա դիակը տարել և թաղել է Ալեքսանդրիայում: Հույս ուներ դառնալու նրա ժառանգորդը, որը, սակայն, չիրականացավ:

Սելևկոս Նիկատոր

Ալեքսանդր Մակեդոնացու զորավարներից էր: Աչքի չի ընկել զորավարական տաղանդով, սակայն ուներ կազմակերպչական մեծ ընդունակություններ:

Ալեքսանդրի մահից հետո դարձել է Բաբելոնիայի կառավարիչը: Իշխանության համար ծավալված պայքարում Սելևկոսը հաջողությամբ խուսանավում էր զանազան խմբավորումների միջև:

Իրեն հռչակեց հելլենիստական ամենամեծ տերության արքա: Հիմք դրեց Սելևկյանների արքայատոհմին:

Մայրաքաղաքը **Ալեքսանդրիան** էր, որը հիմնել էր Ալեքսանդր Մակեդոնացին **Ք. ա. 332 թ.**: Քաղաքն ուներ 100 հազարից ավելի բնակչություն, մեծամասնությունը մակեդոնացիներ և հույներ էին: Եգիպտացիները, որ Ալեքսանդրին դիմավորել էին իբրև ազատարարի, այժմ մերժված էին: Նրանց ու նվաճողների միջև հակասությունն ու պայքարը երբեք չդադարեց: Դա աստիճանաբար թուլացրեց հելլենական Եգիպտոսը: **Ք. ա. 30 թ.** երկիրը գրավվեց Հռոմի կողմից և վերածվեց նրա մի նահանգի:

Սելևկյան տերություն

Այս պետությունը հիմնել է Ալեքսանդրի զորավարներից **Սելևկոսը Ք. ա. 305 թ.**: Իր տարածքով հելլենիստական երկրներից ամենամեծն էր: Մայրաքաղաքն էր **Անտիոքը:** Ասորիքից բացի՝ տերությունը ներառում էր Միջագետքը, Իրանը, Միջին Ասիան՝ ընդհուպ մինչև Հնդկաստան:

Երկրի հիմնական բնակչությունը գյուղացիներն էին: Նրանք միավորված էին համայնքների մեջ և ազատ էին: Համայնքն արքային վճարում էր չափավոր հարկ, կատարում շինարարական աշխատանքներ:

Ծառայության դիմաց իր գործակալներին ու զինվորականներին արքան նվիրաբերում էր հող և ստրուկներ: Դրանց հիման վրա ստեղծվում էին **մասնավոր տնտեսություններ՝ դաստակերտներ, ագարակներ,** որտեղ հիմնական աշխատող ուժը ստրուկներն էին:

Քաղաքներն ունեին արտոնյալ կարգավիճակ: Արքային վճարում էին սահմանափակ հարկեր և ունեին ներքին ինքնավարություն:

Հետևելով Ալեքսանդրի օրինակին՝ Սելևկյան արքաները հիմնում էին նորանոր քաղաքներ: Դրանք հելլենականության և արքայական իշխանության կայուն հենարաններն էին: Այդ քաղաքներով էին անցնում միջազգային առևտրի մայրուղիները՝ Չինաստանից և Հնդկաստանից դեպի Միջերկրական ծովի ավազանի երկրները:

Ք. ա. 190 թ. Մագնեսիա քաղաքի մոտ սելևկյանները ծանր պարտություն կրեցին հռոմեացիներից: Հպատակ ժողովուրդներից շատերն անկախացան: Այնուհետև Սելևկյան պետությունը սահմանափակվեց Ասորիքի տարածքում: Երկիրը բզկտվում էր գահակալական կռիվներից: Կարող և հեղինակավոր տիրակալ հրավիրելու միտքը դարձավ անհրաժեշտություն: Ընտրությունը կանգ առավ հայոց **Տիգրան Մեծ** արքայից արքայի վրա: **Ք. ա. 84 թ.** Ասորիքը միացվեց Հայոց տերությանը: Դա Սելևկյան պետության վերջն էր:

Հետագայում Ասորիքը բռնակցվեց Հռոմին և վերածվեց նրա մի նահանգի:

Հելլենիստական մշակույթի կենտրոնները

Հելլենիստական տիրակալները մշակույթը ծառայեցնում էին հպատակներին միավորելու և իրենց իշխանությունն ամրապնդելու նպատակին: Նրանց հովանավորությամբ ձևավորվեցին մշակույթի կենտրոններ Ալեքսանդրիան, Պերգամոնը, Անտիոքը և այլն:

Ալեքսանդրիան Ք. ա. III դարի առաջին կեսից սկսեց վերածվել համաշխարհային

Տիգրան Մեծի պատկերով մետաղադրամ

Հայոց արքա Տիգրան Մեծը (Ք. ա. 95–55 թթ.) սերում էր Արտաշեսյան արքայատոհմից:

Ստեղծել է հսկա տերություն, որը տարածվում էր Կովկասյան լեռներից մինչև Եգիպտոսի սահմանները: Կառուցել է Տիգրանակերտ մայրաքաղաքը և բազմաթիվ այլ քաղաքներ: Ք. ա. 69–68 թթ. ծանր պատերազմ է վարել Հայաստան ներխուժած հռոմեական բանակի դեմ և հաղթանակ տոնել: Ք. ա. 66 թ. Հռոմի հետ կնքել է խաղաղության դաշնագիր: Հրաժարվել է արտաքին նվաճումներից: Հայաստանը ճանաչվել է «հռոմեական ժողովրդի բարեկամ և դաշնակից»:

Ալեքսանդրիայի գրադարանում. փորագրություն, XIX դ.

մշակույթի կենտրոնի: Ստեղծվեց նշանավոր **Մուսեյոնը (մուսաների տաճարը)**: Այստեղ ստեղծագործելու համար հրավիրվեցին ժամանակի ականավոր մաթեմատիկոսներ, աշխարհագրագետներ, պատմագիրներ, իմաստասերներ ու բանաստեղծներ: Պետությունը հոգում էր նրանց բոլոր ծախսերը: Ժամանակի ընթացքում ձևավորվեց **Ալեքսանդրիայի գրադարանը,** որտեղ պահվում էր շուրջ 500 հազար ձեռագիր պապիրուս:

Հելլենիստական գիտության նվաճումներից էր նաև **Ալեքսանդրիայի փարոսը**՝ շուրջ 120 մետր բարձրությամբ մի աշտարակ: Փարոսի բրոնզե հայելիները լուսավորում էին ծովը և ապահովում անվտանգ նավարկություն:

Պերգամոնը համանուն թագավորության մայրաքաղաքն էր: Այն Փոքր Ասիայի արևմուտքում էր: Ք. ա. III դարի վերջին այստեղ հիմնվեցին ակադեմիա և գրադա-

2002 թ. Ալեքսանդրիայում՝ հին գրադարանի տեղում, կառուցվեց նոր և ժամանակակից «Ալեքսանդրիայի գրադարանը», որտեղ պահվում է մոտ 8 մլն գիրք: Ընթերցասրահը զբաղեցնում է 70 000 մ² տարածք: Մուտքն ազատ է բոլոր ցանկացողների համար:

Այն կոչված է վերականգնելու գրադարանի նախկին փառքը:

րան՝ 350 հազար ձեռագրով: Այստեղ հորթի կաշվից ստեղծվել էր գրության հատուկ նյութ՝ **մագաղաթ**:

Անտիոքը նույնպես ամբարել էր մեծ քանակությամբ գիտական և գեղարվեստական գրականություն: Այստեղ ձևավորվել էր իմաստասիրական դպրոց, որը շարունակում էր Արիստոտելի Լիկեոնի ավանդույթները:

Ժամանակակիցները հիացմունքով էին խոսում Անտիոքի ճարտարապետական տեսքի մասին: Նրբագեղությամբ այն չուներ հավասարը ողջ հելլենիստական աշխարհում:

Պերգամոնի զոհասեղանը

Համարվել է աշխարհի հրաշալիքներից մեկը: Կառուցվել է Պերգամոնի արքաների ջանքերով մոտ Ք.ա. 160 թվականին: Ուներ 120 մ լայնություն: Զոհասեղանի երկայնքով ձգվում էր շքեղ հարթաքանդակների շարքը: Այն պատկերում էր օլիմպիական աստվածների պայքարը չար ուժերի (տիտանների) դեմ:

Վերականգնված վիճակում այժմ պահվում է Բեռլինի ազգային թանգարանում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ալեքսանդրի տերության տրոհման արդյունքում հելլենիստական ինչ պետություններ առաջացան:
2. Ո՞վ և ե՞րբ է հիմնադրել հելլենիստական Եգիպտոսը: Ո՞րն էր դրա մայրաքաղաքը:
3. Ո՞վ և ե՞րբ է հիմնադրել Սելևկյան տերությունը: Ո՞ր տարածքներն էր այն ընդգրկում:
4. Ինչո՞վ էր բացատրվում քաղաքների արտոնյալ կարգավիճակը Սելևկյան տերությունում:
5. Ի՞նչ հետևանքներ ունեցավ Մագնեսիայի ճակատամարտը Սելևկյան տերության համար:
6. Ո՞վ հրավիրվեց՝ նստելու Սելևկյան գահին Ք. ա. I դարում:
7. Թվարկե՛ք հելլենիստական մշակույթի կենտրոնները:
8. Նշե՛ք Ալեքսանդրիայի, Պերգամոնի, Անտիոքի մշակութային ձեռքբերումները:

Քննարկման հարց

Ձեր կարծիքով ինչո՞ւ Ալեքսանդրի մահից հետո նրա ստեղծած աշխարհակալ տերությունը տրոհվեց:

Նոր հասկացություններ, անուններ

Պտղոմեոս, Ալեքսանդրիա, Սելևկոս, Սելևկյան տերություն, Անտիոք, Մագնեսիայի ճակատամարտ, Մուսեյոն, Ալեքսանդրիայի գրադարան, Ալեքսանդրիայի փարոս, Պերգամոն, մագաղաթ

IV ԲԱԺԻՆ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ալեքսանդր Մակեդոնացու գործունեությամբ համաշխարհային պատմության մեջ սկսվում է նոր դարաշրջան, որն ստացել է հելլենականություն (հելլենիզմ) անունը: Համադրվեցին արևելյան և հունական արժեքները արտադրության, հասարակական կյանքի կազմակերպման, գիտության, արվեստի և կրոնի ասպարեզներում:

> *Երբ սկսեց զորեղանալ Մակեդոնիան: Քարտեզի վրա ցո՛ւյց տվեք Ալեքսանդրի նվաճած երկրներն ու տարածքները: Ալեքսանդր Մակեդոնացին համաշխարհային պատմության մեծագույն դեմքերից է. համաձա՞յն եք այս տեսակետի հետ, տվե՛ք ձեր գնահատականը:*

2. Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո ձևավորվեցին մի շարք հելլենիստական պետություններ: Դրանցում պետական հովանավորությամբ մեծ զարգացման հասան գիտությունն ու մշակույթը:

> *Ինչո՞ւ Ալեքսանդրի տերությունը նրա մահից հետո արագորեն տրոհվեց: Թվարկե՛ք հելլենիստական պետությունները: Հայաստանը եղե՞լ է հելլենիստական երկիր (հիշե՛ք Հայոց պատմությունից): Որո՞նք էին հելլենիստական մշակույթի կենտրոնները, ինչ նվաճումներով են դրանք հայտնի:*

ՀՌՈՄԵԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ
Հռոմեական արշավանքների հիմնական ուղղությունները
Հռոմեական կայսրության սահմանները
Հռոմեական լեգեոնների հիմնական ճամբարները
ԱՏԼԱՆՏՅԱՆ ՕԿԵԱՆՈՍ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎ
ԲԱԼԹԻԿ ԾՈՎ
Գերմաններ
Սինա
Լուարա
Հռենոս
Դանուբ
Դնեստր
ԳԱԼԻԱ
Պո
ԻԼԻՐԻԱ
ԴԱԿԻԱ
ԻՍՊԱՆԻԱ
Տոլեդո
Կորսիկա կղ.
ՀՌՈՄ
Նեապոլ
Սարդինա կղ.
Նոր Կարթագեն
ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ
Դելփիք
Աթենք
Սիցիլիա կղ.
Կորնթոս
Սիրակուզա
Սպարտա
Կարթագեն
Կրետե կղ.
ԱԿԱՆ ԾՈՎ
Խերսոնես
Ադրիանուպոլիս
Տրապիզոն
Բյուզանդիոն
Պերգամոն
Կեսարիա
Եփեսոս
ԿԻԼԻԿԻԱ
Կիպրոս կղ.
Անտիոք
Տյուրոս
Երուսաղեմ
Ալեքսանդրիա
Մեմֆիս
Նեղոս
ԱՖՐԻԿԱ
ԿԱՍՊԻՑ ԾՈՎ
Կուր
Արտաշատ
ՄԵԾ ՀԱՅՔ
Արաքս
ՊԱՐԹԵՎՍՏԱՆ
Տիգրիս
Տիգբոն
Եփրատ
ԱՍՈՐԻՔ
Արաբական ցեղեր

§ 20. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԸ

Հին Իտալիայի բնական պայմանները և ազգաբնակչությունը

Հռոմի պատմությունը սկզբնավորվել ու ծավալվել է **Իտալիայում՝ Ապենինյան թերակղզում:** Իտալիայի ափերը երեք կողմից ողողում են Միջերկրական ծովի ջրերը: Ալպյան լեռները հյուսիսից բաժանում են երկիրը մնացած Եվրոպայից: Իտալիայի մաս են կազմում նաև հարակից կղզիները, որոնցից ամենամեծը Սիցիլիան է:

Երկրում կան ջրառատ գետեր, արգավանդ դաշտեր, առատ բուսականություն: Ընդերքը հարուստ է պղնձով, անագով, երկաթով, ոսկով ու արծաթով:

Հնուց ի վեր Իտալիայում բնակվում էին տարբեր ցեղեր ու ցեղախմբեր: Նրանք զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: Հյուսիսում ապրող ժողովուրդներից հայտնի էին **էտրուսկները,** Միջին Իտալիայում՝ **լատինները**, իսկ հարավում՝ **հույները:** Վերջիններս գաղութացման ալիքով էին այստեղ հաստատվել:

Հռոմը թագավորական դարաշրջանում

Հռոմ քաղաք–պետությունը հիմնվել է **Ք. ա. 753 թ.** Միջին Իտալիայում՝ Տիբրոսի գետաբերանից ոչ հեռու՝ յոթ բլուրների վրա:

Սերվիոս Տուլիոս

Ըստ պատմական ավանդության՝ հասարակ ծագում ուներ: Ուշիմ էր ու բանիմաց: Արքան նրան որդեգրեց և ամուսնացրեց իր դստեր հետ:

Ժառանգելով իշխանությունը՝ Սերվիոս Տուլիոսը որոշեց բարեփոխել Հռոմը: Ասում են՝ նա դեսպաններ է ուղարկել հույների մոտ՝ ուսումնասիրելու նրանց փորձը:

Նրան են վերագրվում հետևյալ խոսքերը. «Ես ցանկացա, որ հռոմեացիները գնահատվեն ըստ իրենց արդար աշխատանքի պտուղների»:

Համաձայն ավանդույթի՝ Հռոմի հիմնադիրը հերոս **Հռոմուլոսն** էր: Նա միավորել էր հարևան ցեղերը՝ տալով քաղաքին ու պետությանը իր անունը: Այսպես սկսվել է Հռոմի պատմության արքայական դարաշրջանը, որը տևել է մոտ երկու հարյուր հիսուն տարի: Այդ ընթացքում հաջորդաբար իշխեցին յոթ արքաներ:

Հռոմում դեռևս պահպանվել էին տոհմացեղային կենցաղի շատ վերապրուկներ: Արյունակից ընտանիքները միավորվում էին տոհմի մեջ՝ առաջնորդի ղեկավարությամբ: Տոհմերն իրենց հերթին միավորվում էին և կազմում ցեղ, որի առաջնորդն ընտրվում էր ամենաազդեցիկ տոհմերի ավագներից:

Ցեղին պատկանող ընդհանուր հողատարածքը պարբերաբար վերաբաժանվում էր ըստ տոհմերի և ընտանիքների անդամների: Հետագայում այդ կարգը խախտվեց: Ավելի ուժեղներն իրենց ամրակցեցին մեծ ու բերրի հողակտորներ: Այդուհանդերձ, հողի միակ սեփականատերը ցեղն էր: Այդ իրավունքը փոխանցվեց հռոմեական պետությանը, որի հողատարածքները կոչվում էին **հասարակական դաշտ**: Ցեղակիցները, ապա նաև հռոմեական քաղաքացիները ձևականորեն ունեին հավասար իրավունքներ և պարտականություններ: Սակայն գերակայում էր **տոհմական ավագանին**:

Բոլոր չափահաս տղամարդիկ, Հռոմի քաղաքացի ճանաչվելով, ընտանիք կազմելու և հասարակական դաշտից հողակտոր ձեռք բերելու իրավունք էին ստանում: Նրանք դառնում էին նաև զինվոր՝ պատրաստ կյանքով պաշտպանելու հայրենիքը: **Աշխարհա-**

ժողովին մասնակցելը քաղաքացիների իրավունքն էր:

Տոհմերի ավագները (շուրջ 300 հոգի) կազմում էին հռոմեական պետության գերագույն մարմինը՝ **Ծերակույտը (Սենատ)**: Այն որոշումներ էր կայացնում պետական կյանքի բոլոր հիմնախնդիրների վերաբերյալ և հետևում դրանց կատարմանը:

Պետության գլուխ կանգնած էր **արքան,** որի իշխանությունը, սակայն, ժառանգական չէր: Նրան ընտրում էր Ծերակույտը՝ աշխարհաժողովի հավանությամբ: Արքան

ՀՌՈՄԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Լատինական քաղաքներից մեկում արքայի դուստրը ռազմի Մարս աստծուց ունեցավ երկվորյակ՝ Հռոմուլոսին և Հռեմոսին: Արքայի եղբայրը, վախենալով, որ երեխաները կժառանգեն գահը, որոշեց ազատվել նրանցից. դրեց կողովը և նետեց Տիբրոս գետը:

Սակայն ալիքները նրանց ափ հանեցին, էգ գայլն էլ կերակրեց: Մի հովիվ մեծացրեց ու դաստիարակեց նրանց: Եղբայրները վրեժ լուծեցին թշնամուց:

Որոշեցին հիմնել իրենց քաղաքը: Այնտեղ, որտեղ ալիքները նրանց ափ էին հանել, սկսեցին քաղաք կառուցել: Բայց վեճ ծագեց, և Հռոմուլոսը սպանեց Հռեմոսին:

Հռոմուլոսը ավարտին հասցրեց քաղաքի շինարարությունը և իր անունով կոչեց Հռոմ: Քաղաքի խորհրդանիշը դարձավ էգ գայլը:

Տարբեր վայրերից մարդիկ եկան և բնակվեցին Հռոմում: Հրապարակում կատարվեց հանդիսավոր ծիսակատարություն. փորվեց մի փոս, և յուրաքանչյուրն այնտեղ լցրեց իր հայրենիքից բերած հողը:

Հռոմի խորհրդանիշը՝ կերակրող գայլը

գերագույն քուրմն էր, ռազմական առաջնորդը և դատավորը:

Հանրապետական կարգի հաստատումը

Տոհմացեղային վերապրուկները խոչընդոտում էին պետության ամրապնդմանը:

Հռոմի արքա **Սերվիոս Տուլիոսը Ք.ա. VI դ. կեսերին** բարենորոգումներ կատարեց. իրականացրեց տարածքային և վարչական բաժանում: Քաղաքացիներին բաժանեց դասերի՝ ըստ նրանց տարեկան եկամտի չափի: Այսինքն՝ մարդկանց հասարակական դիրքը որոշվում էր նրանց վաստակով, բայց ոչ սոսկ ծագմամբ:

Այդ բարենորոգումները տեղիք տվին ներքին հակասությունների: Դրանից օգտվելով՝ Հռոմի վերջին արքան՝ **Տարքվինիոսը,** որոշեց իշխանությունը կենտրոնացնել իր ձեռ-

Ծերակույտի անդամները կազմում էին փակ հասարակական խումբ: Նախապես տոհմերի հայրերն էին: Հետագայում (Ք.ա. V դար) կարգ սահմանվեց, որ պետական բարձր պաշտոնյաները պաշտոնավարությունից հետո ընդգրկվեն Ծերակույտի կազմում:

Իրավունք չունեին զբաղվելու առևտրով կամ վաշխառությամբ: Պատվաբեր էր համարվում հողատիրությունը:

Հագնում էին կարմիր երիզով սպիտակ պատմուճան, կարմիր կոշիկներ: Տոնակատարությունների, սրբազան ծեսերի, թատերական ներկայացումների ժամանակ զբաղեցնում էին հատուկ պատվավոր տեղեր:

քում: Նա, իրեն վեր դասելով օրենքներից, բռնություններ գործադրեց: Արդյունքում՝ Հռոմի բնակչությունը **Ք.ա. 510 թ.** արքային արտաքսեց:

Աշխարհաժողովը և Ծերակույտը որոշեցին Հռոմում վերացնել արքայական իշխանությունը և հաստատել **հանրապետություն (ռեսպուբլիկա):** Սակայն վաղ Հռոմեական հանրապետությունում կրկին գերիշխում էր ավագանին: Նրանից էին ընտրվում պետության բարձրագույն պաշտոնյաները՝ **կոնսուլները:**

Հարցեր և առաջադրանքներ

1. Նկարագրե՛ք Ապենինյան թերակղզու աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները:
2. Ի՞նչ ցեղեր և ցեղախմբեր էին ապրում Իտալիայում:
3. Որքա՞ն է տևել Հռոմի պատմության թագավորական դարաշրջանը: Ո՞վ էր Հռոմի առաջին արքան:
4. Թագավորական դարաշրջանում ո՞վ էր համարվում հողի միակ սեփականատերը:
5. Ներկայացրե՛ք վաղ պատմական Հռոմի կառավարման համակարգը:
6. Ի՞նչ բարենորոգումներ անցկացրեց Սերվիոս Տուլիոսը:
7. Ինչո՞ւ և ե՞րբ արտաքսվեց Հռոմի վերջին արքան:
8. Դրանից հետո Հռոմում ի՞նչ կարգեր հաստատվեցին:

Գործնական աշխատանք

Համեմատե՛ք Հին Հռոմի և Վանի թագավորության արքայական իշխանությունը՝ կատարելով «Տրամագիր» վարժությունը:

Նոր հասկացություններ, անուններ

Իտալիա, Ապենինյան թերակղզի, էտրուսկներ, լատիններ, Հռոմուլոս, հասարակական դաշտ, Ծերակույտ (Սենատ), Սերվիոս Տուլիոս, Տարքվինիոս, հանրապետություն, կոնսուլ

§ 21. ՀՌՈՄԵԱԿԱՆ ՔԱՂԱՔ–ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ Ք. Ա. V–III ԴԱՐԵՐՈՒՄ

Պատրիկների և պլեբեյների պայքարը

Յուրաքանչյուր բնիկ հռոմեացի մտնում էր որևէ տոհմի և ցեղի մեջ: Հասարակության առաջ նրանց ներկայացնում էին հայրերը: Այդ պատճառով էլ նրանք կոչվում էին **պատրիկ (հայր ունեցող,** այսինքն՝ **ազնվածին):** Պատրիկները Հռոմի լիիրավ քաղաքացիներ էին: Նրանք իրավահավասար էին և պետության նկատմամբ ունեին հավասար պարտավորություններ:

Ժամանակի ընթացքում այլ վայրերից Հռոմում վերաբնակվել էին բազմաթիվ մարդիկ: Վերաբնակվածները չունեին Հռոմի քաղաքացու կարգավիճակ: Այլ խոսքով՝ նրանք չէին կարող օգտվել հասարակական դաշտից, մասնակցել պետական մարմինների աշխատանքներին: Պատրիկները

Պատրիկների և պլեբեյների միջև խոր անդունդ կար. նրանց միջև արգելված էին ամուսնությունները: Եվ դա այն դեպքում, երբ առօրյա բոլոր գործերը պլեբեյներն էին անում՝ հաց թխում, ջուր կրում, մրգեր ու կանաչեղեն մատակարարում, մաքրում քաղաքը և այլն:

Պլեբեյները դիմում են պայքարի յուրօրինակ ձևի՝ խմբովին լքում են Հռոմը: Հարևան բլրի վրա ճամբար են ստեղծում, ընտրում են իրենց առաջնորդներին՝ ժողովրդական տրիբուններին: Հռոմում կյանքը կանգ է առնում:

Նման հեռացումները ստիպում են պատրիկներին հասկանալ, որ պլեբեյները կարևոր դեր ունեն պետության կյանքում: Եվ նրանք սկսում են զիջումների գնալ:

Պատրիկ *Պլեբեյ*

նրանց բոլորին արհամարհանքով անվանում էին **պլեբեյներ՝ եկվորներ**:

Ք.ա. V դարի սկզբից մինչև Ք.ա. III դարի կեսերը պլեբեյները պայքարում էին իրավահավասարության համար: Ք.ա. 451 թ. պլեբեյներն ի վերջո հասան իրենց նպատակին: Ստեղծվեցին հռոմեական առաջին գրավոր օրենքները՝ այսպես կոչված **Տասներկու տախտակների օրենքները**: Նրանք իրավունք ձեռք բերեցին ստանալու հողակտոր, մասնակցելու աշխարհաժողովին, ընտրվելու Ծերակույտի (Սենատի) կազմում: Կարող էին զբաղեցնել բարձրագույն պետական, ռազմական և քրմական պաշտոններ: Վերացվեց պարտային ստրկությունը: Օրինականացվեց պատրիկների և պլեբեյների ամուսնությունը:

Պատրիկների և պլեբեյների աստիճանական միավորմամբ կազմավորվեց միասնական հռոմեական ժողովուրդը: Պատրիկների և պլեբեյների վերնախավից ձևավորվեց նոր ավագանի:

Հանրապետության կառուցվածքը

Պատրիկների և պլեբեյների պայքարի ընթացքում Հռոմում ամրապնդվեց ժողովրդավարությունը: Մեծացավ **աշխարհաժողովի** դերը: Այն հրավիրվում էր ամիսը մեկ կամ երկու անգամ քաղաքից դուրս՝ Մարսյան դաշտում: Քաղաքացիները քննարկում էին կարևորագույն հարցեր: Այստեղ էին ընտրվում և հաշվետվություն ներկայացնում պետական բոլոր պաշտոնյաները:

Պետական մյուս կարևոր հաստատությունը **Ծերակույտն** էր, որը վարում էր պե-

Հռոմեական Ծերակույտը

տության ընթացիկ գործերը: Ի տարբերություն աշխարհաժողովի՝ Ծերակույտը գործում էր մշտապես: Նրա ընդունած որոշումները հաստատվում էին աշխարհաժողովում:

Ք.ա. III դարից սկսած՝ Ծերակույտի դերը կտրուկ աճեց: Դրա կազմում արդեն ընտրվում էին նաև պատրիկների և պլեբեյների վերնախավի այն ներկայացուցիչները, ովքեր վարել էին պետական բարձր պաշտոններ և աչքի ընկել արիությամբ ու առաքինությամբ:

Աշխարհաժողովի և Ծերակույտի որոշումներն ի կատար էր ածում կառավարությունը: Վերջինս գլխավորում էին **երկու կոնսուլները:** Նրանք օժտված էին գերագույն իշխանությամբ: Կոնսուլներն առաջնորդում էին նաև բանակը, պետությունը ներկայացնում միջազգային հարաբերություններում:

Հունաստանի նման՝ Հռոմում ևս բոլոր պաշտոնյաներն ընտրվում էին մեկ տարով: Նրանք ենթակա էին օրենքներին և զանցանքի համար պատասխանատու էին դատարանի առաջ: Պաշտոնյաները ծառայության համար չէին վարձատրվում. դա պատվի գործ էր:

Հռոմեական բանակը

Բանակը յուրահատուկ տեղ ուներ հռոմեական պետությունում, որի կորիզը **լեգեոնն** էր: Այն կազմված էր հատուկ պատրաստություն անցած շուրջ 6 հազար զինվորից: Լեգեոնը բաժանվում էր հարյուրյակների: Դրանցից վեցը կազմում էին մեկ գումարտակ: Զինվորների ընտիր մարզվածությունը,

Հռոմեական բանակի հարվածային ուժը հետևակն էր, հեծելազորն օժանդակ դեր ուներ: Զինվորները բաժանվում էին մի քանի ենթախմբի՝ ըստ ընդունակությունների, փորձի և ունեցվածքի: Չէ՞ որ իրենք էին հոգում զենքի և հանդերձանքի ծախսը: Վարձ չէին ստանում: Ծառայությունը և՛ պարտականություն էր, և՛ պատիվ: Քսան տարի ծառայելուց հետո ճանաչվում էին վետերան՝ ստանալով հողակտոր և դրամական նվիրատվություն:

Ամեն լեգեոն ուներ իր զինանշանը՝ արծիվ: Դրա կորստի դեպքում լեգեոնը ցրվում էր:

Մեծ արվեստով էր կառուցվում լեգեոնի ճամբարը: Դա համարվում էր Հռոմի մանրակերտը: Զինվորների և սպայության կենցաղը պարզ էր: Մնվում էին հատիկներից պատրաստված կերակուրով՝ ոսպ, սիսեռ, ոլոռ: Միս հազվադեպ էր լինում: Օրնիբուն վարժվում էին:

Ժամանակակիցներն ասում էին. «Լեգեոնի արծիվը Հռոմի ոգին է, հրամանատարը՝ հոգին, զինվորը՝ մարմինը»:

Հռոմեացի լեգեոներ և քարանետ մեքենա

սպառազինությունը և երկաթյա կարգապահությունը լեգեոնը դարձրին ժամանակի լավագույն ռազմական ուժը:

Տարբեր բնագավառներում կատարված բարեփոխումների շնորհիվ Հռոմը վերածվեց զորեղ պետության:

Հռոմը սկսեց քայլեր ձեռնարկել ամբողջ Իտալիան իրեն ենթարկելու ուղղությամբ: Այդ գործընթացը տևեց Ք. ա. VI դարից մինչև Ք. ա. III դարի կեսերը: Հռոմն առաջնորդվում էր «Բաժանի՛ր և տիրի՛ր» սկզբունքով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ովքե՞ր էին պատրիկները:
2. Ո՞ր իրավունքներից չէին օգտվում պլեբեյները:
3. Ի՞նչ արդյունք ունեցավ պլեբեյների երկարատև պայքարը:
4. Ներկայացրե՛ք աշխարհաժողովի դերը հռոմեացիների կյանքում:
5. Ի՞նչ էր Ծերակույտը:
6. Ի՞նչ կառուցվածք ուներ բանակը Հին Հռոմում:
7. Երբվանի՞ց է սկսվել և որքա՞ն է տևել Հռոմի կողմից ամբողջ Իտալիան իրեն ենթարկելու գործընթացը: Հռոմն այդ գործում ի՞նչ սկզբունքով էր առաջնորդվում:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Պատրիկ, պլեբեյ, Տասներկու տախտակների օրենքներ, Հռոմի Ծերակույտ (Սենատ), կոնսուլ, լեգեոն, «Բաժանի՛ր և տիրի՛ր»

§ 22. ՀՌՈՄԵԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Պայքար Կարթագենի դեմ

Կարթագեն պետությունը Աֆրիկայի հյուսիսում էր: Այն հիմնել էին փյունիկեցի վերաբնակչները Ք. ա. IX դարի վերջին: Բնակչության հիմնական զբաղմունքը առևտուրն ու նավագնացությունն էին: Նրանք առևտրական հարաբերություններով իրար էին կապել Փյունիկիան, Եգիպտոսը, Հունաստանը, Իտալիան, Իսպանիան:

Կարթագենում ստեղծվել էր հանրապետություն՝ ավագանու և Ծերակույտի գերակայությամբ:

Ք.ա. 218 թ. Հաննիբալն իր զորքով, Իսպանիայից անցնելով Պիրենեյան և Ալպյան լեռները, հասավ Իտալիա: Այդ ռազմարշավը մեծագույն ձեռքբերում էր հին ռազմական արվեստում: Չնայած իր տարած բազում հաղթանակներին՝ Հաննիբալին այդպես էլ չհաջողվեց գրավել Հռոմը:

Հաննիբալն իր զորքով անցնում է Ալպերը

Ք. ա. III դ. Հռոմի և Կարթագենի միջև պայքար սկսվեց՝ Միջերկրական ծովի արևմտյան շրջաններին տիրելու համար: Այն տևեց ավելի քան մեկ հարյուրամյակ՝ մինչև Ք. ա. II դարի կեսերը:

Հռոմեացիների համար առավել ծանրը **Պունիկյան երկրորդ** պատերազմն էր (Ք. ա. 218–201 թթ.): Կարթագենցիներին առաջնորդում էր նշանավոր զորավար **Հաննիբալը**: Նա ծրագրել էր մտնել Իտալիա և վերջ տալ Հռոմին:

Հաննիբալի բանակը **Ք. ա. 218 թ.** Իսպանիայից ցամաքային ճանապարհով մտավ Իտալիա: Սկզբում հռոմեացիները թերագնահատում էին հակառակորդին: Կարծում էին, թե պետք է տալ վճռական ճակատամարտ, հաղթել նրան և դուրս քշել երկրից: Այդ ռազմավարությունը հանգեցրեց աղետի: **Ք. ա. 216 թ.**

Կաննեի ճակատամարտում հռոմեացիները ծանր պարտություն կրեցին:

Դրանից հետո հռոմեացիներն ընտրեցին մեկ այլ ռազմավարություն: Բաժանելով բանակը մի քանի մասի՝ սկսեցին կրնկակոխ հետապնդել թշնամուն: Նրանք թույլ չէին տալիս, որ Հաննիբալը հանգիստ տա զինվորներին, համալրի պաշարները: Ի վերջո Հաննիբալը շրջափակվեց Հարավային Իտալիայում:

Հռոմի Ծերակույտը որոշում կայացրեց՝ պատերազմը տեղափոխել Կարթագենի տարածք: Հռոմեական բանակը նավերով կտրեց Միջերկրական ծովը և ափ իջավ Աֆրիկայում: Հաննիբալը ստիպված էր լքել Իտալիան: Կարթագեն քաղաքից ոչ հեռու **Ք. ա. 202 թ.** տեղի ունեցավ վճռական ճակատամարտ: Հաննիբալը պարտություն կրեց:

Թեպետ խիստ թուլացած, բայց Կարթագենը Հռոմին շարունակ վտանգ էր ներշնչում: Հռոմեացիները տագնապով հետևում էին նրա վերականգնմանը՝ աշխատելով ամեն կերպ խոչընդոտել դրան: Ի վերջո, **Ք. ա. 146 թ.** հռոմեական բանակը գրավեց և հիմնահատակ կործանեց Կարթագենը:

Միջերկրածովյան ավազանի նվաճումը

Կարթագենից հետո հռոմեացիներն իրենց հայացքն ուղղեցին դեպի Միջերկրական ծովի արևելյան շրջանները: Հռոմը նախ իր գերակայությունը հաստատեց **Հունաստանում** (Ք. ա. 196 թ.)՝ հայտարարելով, թե «գիտությունների և արվեստների հայրենիքը» ազատագրում է մակեդոնական լծից:

Սկիպիոն Աֆրիկացի

Նա սերում էր հին պատրիկական ընտանիքից: Ասպարեզ եկավ Հռոմի համար ծանր ժամանակներում, երբ ընթանում էր Պունիկյան երկրորդ պատերազմը: Հաննիբալը շարունակում էր իր ավերածությունները: Երիտասարդ Սկիպիոնը Ծերակույտում հայտարարեց. «Պատերազմի բախտը պետք է լուծել Իտալիայի սահմաններից դուրս»:

Նա նախ գրավեց Իսպանիան, որտեղից Հաննիբալն օժանդակություն էր ստանում: Հետո լեգեոնները տարավ Աֆրիկա և խոշոր հաղթանակ տարավ Կարթագենի դեմ:

Այս բացառիկ ռազմական տաղանդի տեր մարդը նաև լայնախոհ մտավորական էր: Սիրում էր կրկնել. «Հայրենիքը հզոր է ոչ միայն ռազմական, այլև մշակութային մեծագործություններով»:

Մագնեսիայի ճակատամարտը վճռորոշ դեր ունեցավ Արևելքի մի շարք ժողովուրդների կյանքում: Դրանց թվում էին նաև հայերը:

Մագնեսիայից հետո նրանք հռչակեցին իրենց անկախությունը: Արտաշես I–ը վերականգնեց Մեծ Հայքի սահմանները և կատարեց բարեփոխություններ: Պետությունն արագ զարգացավ և միջազգային հեղինակություն էր վայելում:

Ժամանակակիցներին հիացնում էր արքայի նոր մայրաքաղաքը[a] Արտաշատը: Այն անվանում էին Նոր Կարթագեն: Բացի գեղեցկությունից ու շքեղությունից, նկատի ունեին նաև այն, որ քաղաքի հատակագծի ստեղծմանը մասնակցել էր Հաննիբալը, որ Մագնեսիայի ճակատամարտից հետո մի որոշ ժամանակ ապաստանել էր Մեծ Հայքում:

Պոլիսները զրկվեցին ինքնուրույն քաղաքականություն վարելու իրավունքից:

Հռոմը հաջորդ հարվածն ուղղեց Սելևկյան տերության դեմ: Այնտեղ էր ապաստանել Հաննիբալը և համոզում էր Անտիոքոս III–ին պատերազմ սկսել Հռոմի դեմ: Հռոմեական բանակն ափ իջավ Փոքր Ասիայում: Արդեն ասվել է, որ **Ք. ա. 190 թ.** Մագնեսիայի ճակատամարտում Անտիոքոս III–ը պարտվեց: Նա վճարեց մեծ ռազմատուգանք: Հռոմեացիները ճանաչեցին Սելևկյաններից անջատված երկրների անկախությունը: Դրանց թվում էին Մեծ Հայքը և Ծոփքը:

Հռոմն սկսեց օժանդակություն ցույց տալ Եգիպտոսին՝ ընդդեմ Սելևկյան տերության: Եգիպտոսն ընդունեց Հռոմի հովանավորությունը. այդ պահից սկսած՝ նրա հետ էր համաձայնեցնելու իր արտաքին քաղաքականությունը:

Այսպես՝ Ք. ա. II դարի կեսերին Միջերկրական ծովի ավազանի մեծագույն մասի նկատմամբ հաստատվեց Հռոմի գերիշխանությունը:

Քաղաք–պետությունից դեպի տերություն

Տիբրոս գետի ափին ձևավորված Հռոմ քաղաք–պետությունը վերածվեց համաշխարհային տերության: Ինչպես և Իտալիայի դեպքում, նա առաջնորդվում էր «Բաժանի՛ր և տիրի՛ր» սկզբունքով: Միջերկրականի ավազանում հռոմեական գերակայությունը դրսևորվում էր ամենատարբեր ձևերով: Պետությունների մի խմբի հետ Հռոմը վարում էր մեղմ քաղաքականություն. բավական էր,

որ այդ պետությունները ճանաչեին իր գերիշխանությունը: Մյուսները պարտավոր էին վճարել հարկ և տրամադրել զինվոր: Երրորդները կորցնում էին իրենց պետականությունը և վերածվում հռոմեական պետության նահանգի (պրովինցիա):

Հարցեր և առաջադրանքներ

1. Նկարագրե՛ք Կարթագենի աշխարհագրական դիրքը և բնակչության հիմնական զբաղմունքը:
2. Ո՞րն էր Հռոմի և Կարթագենի բախման գլխավոր պատճառը: Որքա՞ն է տևել այդ հակամարտությունը:
3. Ո՞վ էր կարթագենցիներին առաջնորդում Պունիկյան երկրորդ պատերազմի ժամանակ:
4. Ի՞նչ ընթացք ուներ այդ պատերազմը սկզբում, ինչո՞վ այն ավարտվեց:
5. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Հռոմը Միջերկրածովյան ավազանում Կարթագենի անկումից հետո:
6. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Հռոմը Միջերկրական ծովի ավազանում իրեն ենթակա պետությունների նկատմամբ: Ներկայացրե՛ք այդ պետությունների աստիճանակարգությունը:

Նոր հասկացություններ, անուններ

Կարթագեն, Պունիկյան երկրորդ պատերազմ, Հաննիբալ, Կաննեի ճակատամարտ, Սկիպիոն Աֆրիկացի, Անտիոքոս III, քաղաք–պետությունից՝ համաշխարհային տերություն

§ 23. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՃԳՆԱԺԱՄԸ

Գնեոս Պոմպեոս

Հուլիոս Կեսար

Կատոն Կրտսեր

Կլոդիոս

Ք. ա. II–I դարերի ճգնաժամը

Վաղ Հռոմեական հանրապետությունում հասարակության հիմնական խավը միջին գյուղացիներն էին: Նրանց եկամտի աղբյուրը հասարակական դաշտի հողակտորներն էին: Արհեստներն ու առևտուրը թույլ էին զարգացած: Սակայն պատերազմները, նոր երկրների նվաճումը, մեծ թվով ռազմագերիների և ռազմավարի ներհոսքը փոխեցին երկրի հասարակական պատկերը:

Քայքայվեց և քանակապես կրճատվեց միջին գյուղացիությունը: Լեգեոնի զինվորները գյուղացիներ էին, որոնք ծառայում էին տերության տարբեր ծագերում: Անընդհատ զոհեր էին լինում: Կենդանի մնացածներն իրենց տնտեսությամբ չէին զբաղվում: Ուստի զինվորները չնչին գներով վաճառում

Լատիներեն ռեսպուբլիկա (հանրապետություն) նշանակում է ժողովրդի գործ: Այսինքն՝ առանձին մարդկանց շահը ենթարկվում էր ընդհանուր շահին: Սակայն հանրապետության անկման ժամանակ կատարվեց հակառակը: Մի կողմից՝ Ծերակույտի վերնախավը (Կատոն Կրտսեր), մյուս կողմից՝ քաղաքային ստորին խավերը (Կլոդիոս), երրորդ կողմից՝ զորավարները (Գնեոս Պոմպեոս, Հուլիոս Կեսար) ձգտում էին իրենց ենթարկելու հանրապետությունը:

էին իրենց հողակտորները և զորացրվելուց հետո հեռանում Հռոմ: Նրանք ապրում էին պետությունից տրվող նպաստի հաշվին:

Ավագանին մեծ օգուտներ քաղեց արտաքին նվաճումներից: Ի հաշիվ քայքայված գյուղացիների՝ ստեղծեցին խոշոր կալվածքներ, որտեղ աշխատում էին բացառապես ստրուկներ: Ազատ աշխատանքը դուրս մղվեց:

Այս փոփոխությունների հետևանքով ժողովրդի կամքն արտահայտող աշխարհաժողովը կորցրեց իր ազդեցությունը: Առաջնությունն անցավ ավագանուն և Ծերակույտին: Աճեց առանձին գործիչների ձգտումը՝ պետությունը ծառայեցնելու իրենց անձնական շահերին:

Ընկել էր նաև բանակի մարտունակությունը: Համընդհանուր զինապարտությունն այլևս արդյունավետ չէր: Ք.ա. II դարի վերջերից բանակն սկսեց պարտություններ կրել: Անհրաժեշտ էր ստեղծել արհեստավարժ բանակ:

Ճգնաժամի հաղթահարման փորձերը

Հռոմի հեռատես գործիչները հանգեցին այն համոզման, որ անհրաժեշտ են արմատական փոփոխություններ:

Առաջին քայլերը կատարեցին **Գրաքոս եղբայրները՝ Տիբերիոսը** և **Գայոսը: Ք.ա. 130–120–ական թվականներին** նրանք հանդես եկան բարեփոխումների ծրագրով: Դրա հիմնական նպատակն էր վերադառնալ դեպի «բարի անցյալը»:

Պահանջվում էր վերականգնել միջին գյուղացիությունը՝ հասարակական դաշտից հողակտոր տրամադրելով յուրաքանչյուր

ցանկացողի, աշխարհաժողովին վերադարձնել իշխանությունը, ստեղծել արհեստավարժ բանակ, Իտալիայի բոլոր դաշնակիցներին տալ հռոմեական քաղաքացու իրավունք:

Ծերակույտը և ավագանին կատաղի դիմադրություն ցուցաբերեցին: Տեղի ունեցավ զինված ընդհարում: Զոհվեցին հազարավոր մարդիկ: Դրանց թվում էին Տիբերիոս և Գայոս Գրաքոսները: Բայց Գրաքոսների գործն ապարդյուն չանցավ: Նրանք հասցրին զգալիորեն վերականգնել միջին գյուղացիությունը: Ք. ա. II դարի վերջին բանակը դարձավ արհեստավարժ. զինվորական գործը

Տիբերիոսի հողային օրինագիծն առաջացրեց «հարուստների և հզորների» կատաղի դիմադրությունը: Նրանք հասարակական դաշտից յուրացրել էին մեծ հողակտորներ և չէին ցանկանում դրանցից հրաժարվել:

Այդժամ Տիբերիոսը ժողովրդի առաջ հանդես եկավ մի ճառով. «Գազաններն անգամ ունեն իրենց բույնը: Բայց նրանք, ովքեր կռվում ու մեռնում են հանուն Հռոմի, ոչինչ չունեն, բացի օդից և լույսից: Անտուն թափառում են երկրով մեկ՝ կանանց և զավակների հետ: Եվ ստում են զորավարները, երբ մարտից առաջ զինվորներին կոչ են անում պաշտպանելու հարազատ սրբավայրերն ու գերեզմանները: Նրանք չունեն դրանք: Չունեն հողի մի թիզ անգամ: Կռվում և մեռնում են ուրիշների հարստության ու շքեղ կյանքի համար»:

Եվ հռոմեացիներն անսացին Տիբերիոսին: Աշխարհաժողովն օրենք ընդունեց՝ հողակտոր տալ ընչազուրկ քաղաքացիներին:

Տիբերիոսը դիմում է ժողովրդին

վերածվեց մասնագիտության: Շուտով իտալական դաշնակիցներն ստիպեցին Հռոմին՝ ճանաչելու իրենց որպես լիիրավ քաղաքացիներ:

Ճգնաժամի հաղթահարման մեկ այլ փորձ ձեռնարկեց զորավար **Կոռնելիոս Սուլլան Ք.ա. 82–78 թվականներին:** Նա իր բանակով գրավեց Հռոմը և իրեն հռչակեց **բռնապետ (դիկտատոր)**:

Սուլլան նույնպես երազում էր վերադառնալ դեպի «բարի անցյալը», այսինքն՝ Ծերակույտի դերի ընդլայնում՝ ի հաշիվ աշխարհաժողովի: Իսկ Ծերակույտն իր հերթին անվերապահ ենթարկվելու էր բռնապետին: Ընդդիմությանը վերջ տալու նպատակով սպանվեցին բռնապետի հազարավոր հակառակորդներ:

Սուլլայից հետո ծայրաստիճան սրվեց Հռոմի ներքին դրությունը:

Սպարտակի ապստամբությունը

Համաշխարհային տերության ձևավորման ընթացքում ստրուկների թիվը Հռոմում շեշտակի աճել էր: Նրանք կատարում էին ամենածանր աշխատանքները և ապրում ամենասուղ պայմաններում: Դա տեղիք էր տալիս ապստամբությունների:

Հռոմեական ստրուկների ամենահզոր ապստամբությունը տեղի է ունեցել **Ք.ա. 73–71 թթ.**: Այն սկսեցին մի խումբ **գլադիատորներ:** Վերջիններս ստրուկ մարզիկներ էին, որոնք կրկեսում մարտնչում էին միմյանց դեմ: Ապստամբների ղեկավարը **Սպարտակն** էր: Շուտով նրանց միացան հազարավոր այլ ստրուկներ: Շուրջ երեք տարի նրանք ավե-

Կոռնելիոս Սուլլա

Հնուց ի վեր հռոմեական բանակն աշխարհազորային էր: Հասարակ գյուղացիները նաև զինվորներ էին:

Սակայն Ք.ա. II դ. վերջերից բանակն սկսեց պարտություններ կրել: Կատարվեցին բարեփոխումներ, և ստեղծվեց արհեստավարժ բանակ: Ծառայությունը դարձավ զինվորի հիմնական արհեստը, որի համար նա աշխատավարձ էր ստանում:

Կատարվածի իմաստը ժամանակակիցները հասկացան տասնամյակներ անց. «Զինվորը կտրվել է Հռոմից: Նրա իրական հայրենիքն այժմ ռազմաճամբարն է, իսկ նրա հայրը՝ զորահրամանատարը»:

Հանուն վերջինիս՝ բանակը պատրաստ էր զենքն ուղղել Հռոմի դեմ: Եվ դրանից առաջինն օգտվեց Սուլլան: Նրա բռնապետության հիմքը բանակն էր:

ռում էին հռոմեական գյուղերն ու քաղաքները՝ պարտության մատնելով կառավարության զորքերին:

Միայն ուժերի գերագույն լարումով հռոմեացիները հաղթանակ տոնեցին ստրուկների նկատմամբ: Նրանք կոտորեցին ապստամբների մեծամասնությանը, իսկ գերի ընկածներին կենդանի խաչեցին: Այդ դաժանությամբ պետությունը ցանկանում էր վախ ներշնչել բոլոր ստրուկներին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին գյուղացիական միջին խավի քայքայման պատճառները Հռոմեական պետությունում:
2. Եկամտի ի՞նչ աղբյուրներ ուներ հռոմեական ավագանին:
3. Թվարկե՛ք Գրաքոս եղբայրների բարեփոխության ծրագրի հիմնական կետերը:
4. Ի՞նչ նպատակ ուներ Սուլլան և ի՞նչ միջոցներով էր փորձում հասնել դրան:
5. Ե՞րբ է տեղի ունեցել հռոմեական ստրուկների ամենահզոր ապստամբությունը: Ո՞վ էր դրա ղեկավարը:
6. Ինչո՞վ ավարտվեց ստրուկների ապստամբությունը:

Քննարկման հարց

Համեմատե՛ք Գրաքոս եղբայրների և Սուլլայի վարած քաղաքականությունը: Ձեր կարծիքով դրանցից ո՞րն էր ավելի արդյունավետ:

Նոր հասկացություններ, անուններ

Գրաքոս եղբայրներ, արիեստավարժ բանակ, Կոռնելիոս Սուլլա, բռնապետ, գլադիատոր, Սպարտակի ապստամբություն

§ 24. ԱՆՑՈՒՄ ՊՐԻՆՑԻՊԱՏԻՆ

Առաջին եռապետությունը

Ստեղծված իրավիճակից փորձում էին օգտվել ազդեցիկ պետական գործիչները, որոնք ձգտում էին Հռոմում հաստատել սեփական գերիշխանությունը: Նրանցից առանձնանում էին **Գնեոս Պոմպեոսը, Հուլիոս Կեսարը** և **Մարկոս Կրասոսը**:

Սկզբում նախընտրելի էին Պոմպեոսի հնարավորությունները: Նա մեծ հեղինակություն ուներ բանակում: Համառ պատերազմներով Հռոմի գերակայությունն Արևելքում տարածվել էր Կովկասյան լեռներից մինչև Եգիպտոս:



Գնեոս Պոմպեոս

Պոմպեոսը, համոզվելով, որ միայնակ չի կարող հասնել բացարձակ իշխանության, **Ք. ա. 60 թ.** համաձայնության եկավ Կեսարի և Կրասոսի հետ: Ստեղծվեց առաջին **եռապետությունը**: Նրանք երեքով սկսեցին վճռել Հռոմի բոլոր կարևոր հարցերը: Սակայն նրանց միությունն անկայուն էր: Հավասարակշռությունը խախտվեց, երբ **Ք. ա. 53 թ.** Կրասոսը զոհվեց պարթևների դեմ ձեռնարկած պատերազմում:



Մարկոս Կրասոս

Ասպարեզում մնացին Պոմպեոսը և Կեսարը: Նրանց հարաբերությունները լարված էին: Յուրաքանչյուրը ձգտում էր մենիշխանության: Պոմպեոսը ցանկանում էր հասնել դրան խաղաղ ճանապարհով՝ համագործակցելով Ծերակույտի հետ: Մինչդեռ Կեսարը նախընտրեց զենքը:

Քաղաքացիական պատերազմը և Կեսարի բռնապետությունը

Ք. ա. 49 թ. Կեսարն իր բանակով անցավ **Ռուբիկոն գետը,** որն Իտալիայի հյուսիսային սահմանն էր: Նա գիտակցում էր, որ պատերազմ է սկսում: «Վիճակը գցված է» խոսքերով Կեսարն իր բանակն առաջնորդեց դեպի Հռոմ:

Պատերազմը դաժան էր և արյունալի: Զոհվեց Պոմպեոսը, նրա կողմնակիցները պարտություն կրեցին: Հռոմեական տերության ամբողջ տարածքում՝ Իսպանիայից մինչև Եփրատ, Բրիտանիայից մինչև Հյուսիսային Աֆրիկա, հաստատվեց Կեսարի իշխանությունը:

Հասնելով իր նպատակին՝ Կեսարն աշխատում էր թուլացնել բանակի դերը: Նա ձգտում



էր բարենորոգումների միջոցով ստեղծելու քաղաքացիական համաձայնություն: Սակայն Հռոմում ոչինչ չէր կատարվում առանց Կեսարի կամքի: Նա իսկական բռնապետ էր:

Կեսարի հակառակորդները նրա դեմ դավադրություն կազմակերպեցին: **Ք.ա. 44 թ.** Կեսարը սպանվեց Ծերակույտի դահլիճում: Բռնապետության այս նոր փորձը նույնպես ավարտվեց անհաջողությամբ: Սակայն Հռոմում շատերը համոզված էին, որ հին հանրապետական կարգը անդառնալիորեն փլուզվում է:



Հուլիոս Կեսար

Հռոմում խոր անդունդ էր գոյացել հասարակ ժողովրդի և Ծերակույտի միջև: Կեսարը սիրում էր կրկնել. «Ծերակույտականների անհոգի մեծամտությունը ստիպում է ինձ դիմել ժողովրդին՝ համատեղ պայքարի համար»: Արդեն Ք.ա. 46 թ. հաղթելով իր բոլոր հակառակորդներին՝ նա կառավարում էր իբրև բռնապետ: Լուրեր էին պտտվում, թե ցանկանում է թագավորական գահ և ծիրանի ունենալ:

Ծերակույտի վերնախավի շրջանում ձևավորվեց դավադրություն: Առաջնորդներից էր Բրուտոսը՝ բռնապետի սիրելին: Ք.ա. 44 թ. մարտի 15-ին Կեսարը սրախողխող արվեց հենց Ծերակույտի դահլիճում: Ասում են՝ նա ընկել է իր հակառակորդ Պոմպեոսի արձանի մոտ:

Մենիշխանության հաստատումը Հռոմում. Օգոստոսի պրինցիպատը

Գայոս Օկտավիանոսը Կեսարի զարմիկն էր ու ժառանգը: Զորավար **Մարկոս Անտոնիոսի** հետ նա պայքար սկսեց հին ավագանու դեմ: Նրանք հաղթեցին և սկսեցին Հռոմեական տերությունը կառավարել համատեղ: Արևելքում կառավարում էր Անտոնիոսը, որի իշխանության կենտրոնը Եգիպտոսն էր: Օկտավիանոսը Հռոմից կառավարում էր տերության արևմտյան մասը: Սակայն երկուսն էլ երազում էին բացարձակ իշխանության մասին:

Օկտավիանոսի և Անտոնիոսի հակամարտությունը լուծվեց **Ք.ա. 31 թ.**: Հունաստանի արևմտյան ափին՝ **Ակտիում** հրվանդանի մոտ, տեղի ունեցավ ծովամարտ: Անտոնիոսը պարտություն կրեց և փախավ Եգիպտոս, որտեղ իր կնոջ՝ Եգիպտոսի թագուհի **Կլեոպատրայի** հետ ինքնասպան եղավ: **Հռոմեական տերությունում հաս-**

տատվեց Օկտավիանոսի մենիշխանությունը (Ք. ա. 27– Ք. հ. 14 թթ.):

Օկտավիանոսը գործում էր զգույշ և հավասարակշռված: Ցույց էր տալիս, թե վերականգնում է «բարի և հին հանրապետությունը»: Ներկայանում էր իբրև Հռոմի հասարակ քաղաքացի, ով մնացածներից տարբերվում էր միայն հեղինակությամբ: Իրականում պատկերն այլ էր: Օկտավիանոսն ուներ անսահման իշխանություն, վարում էր պետության ամենաբարձր պաշտոնները: Ամեն բան կատարվում էր միայն նրա կամքով: Նրա անձն սկսեց սրբացվել: Նրան շնորհվեց **Օգոստոս (Սրբազան) պատվանունը:**

Իր երկարատև կառավարման ընթացքում Օգոստոսը բարեփոխեց Հռոմեական տերությունը՝ բանակը, գանձարանը, նահանգնե-

Գայոս Օկտավիանոս (Օգոստոս)

Կեսարի քրոջ թոռն էր: Կտակով ճանաչվել էր նրա ժառանգորդը: Հռոմեական ժողովուրդն ու բանակն ընդունեցին նրան ու սատարեցին:

Պատանին վերլուծել և հասկացել էր Կեսարի կործանման պատճառը: Անցնելով քաղաքացիական պատերազմի թոհուբոհի միջով և հաղթելով իր բոլոր հակառակորդներին՝ նա չցանկացավ բռնագրավել գերագույն իշխանությունը: Հասավ նրան, որ «ժողովուրդն ու Ծերակույտը նրան խնդրեցին հոգ տանել հայրենիքի մասին»:

Չուներ Կեսարի ոչ ռազմական, ոչ էլ ճարտասանական ընդունակությունները: Բայց ուներ մեկ այլ տաղանդ՝ իր շուրջը համախմբելու ընդունակ մարդկանց և ստիպելու նրանց ծառայել ընդհանուր գործին: Չափավոր էր ու համեստ: Օրենք, կարգ ու կանոն հաստատեց ամենուր՝ սկսած ընտանիքից մինչև տերունական պալատ, Հռոմից մինչև հեռավոր նահանգներ:

րի կառավարումը: Կարգավորեց ունեցվածքային և ընտանեկան հարաբերությունները: Նա հովանավորում էր արվեստը, գիտությունը, գրականությունը: Օգոստոսի շնորհիվ Հռոմում վերականգնվեց խաղաղության և ապահովության մթնոլորտը:

Օգոստոսի հաստատած կառավարման համակարգը **միապետություն էր՝ հանրապետության քողի տակ:** Այն անվանում են նաև **պրինցիպատ**, այսինքն՝ **առաջին քաղաքացու կառավարում:**

Այս դեպքերով սկսվում է Հռոմի պատմության **կայսերական դարաշրջանը:**

Հարցեր և առաջադրանքներ

1. Ովքե՞ր էին փորձում Հռոմում հաստատել սեփական գերիշխանությունը:
2. Ե՞րբ է ստեղծվել առաջին եռապետությունը Հռոմում: Ովքե՞ր ձևավորեցին այն:
3. Պոմպեոսի ու Կեսարի միջև ինչո՞ւ պատերազմ սկսվեց և ի՞նչ ավարտ ունեցավ:
4. Ինչո՞ւ Ծերակույտի անդամները դավադրություն կազմակերպեցին Կեսարի դեմ:
5. Հռոմեական տերության ո՞ր մասերում էին իշխում Օկտավիանոսը և Անտոնիոսը:
6. Ինչո՞վ ավարտվեց նրանց միջև հակամարտությունը:
7. Ի՞նչպես է կոչվում Օգոստոսի հաստատած կառավարման համակարգը:

Գործնական առաջադրանք

Ներկայացրե՛ք Կեսարի ու Օկտավիանոսի պատմական կերպարները և համեմատե՛ք նրանց:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Գնեոս Պոմպեոս, Հուլիոս Կեսար, Մարկոս Կրասոս, եռապետություն, «Վիճակը գցված է», մենիշխանություն, Օկտավիանոս Օգոստոս, Անտոնիոս, Ակտիումի ծովամարտ, պրինցիպատ, Հռոմի պատմության կայսերական դարաշրջան

§ 25. ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԾԱՂԿՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ

Տերության «ոսկեդարը»

Միապետության ամրապնդումն ընթանում էր վայրիվերումներով: Եղավ մի շրջան (96–180 թթ.), երբ միապետները շեշտված հարգանքով էին վերաբերվում հանրապետական ավանդույթներին: Այդ ընթացքում տերությունը ծաղկում էր: Անվտանգ էին երկրի սահմանները, կարգավորված էր պետական կառավարման համակարգը:

Մեծ առաջընթաց ապրեց մշակույթը: Կառուցվեցին բազմաթիվ շքեղ շինություններ: Ճանապարհների ցանցով Հռոմը կապվեց տերության ամենահեռավոր նահանգների հետ: Հատկապես տպավորիչ էին հռոմեական կամուրջներն ու ջրմուղները:



Մարկոս Տրայանոս

Այդ շրջանը հռոմեացիները կապում էին երկու կայսրերի անունների հետ: Առաջինը **Մարկոս Տրայանոսն** էր (98–117 թթ.): Նրա օրոք Հռոմեական կայսրությունը հասավ իր ռազմական հզորության գագաթնակետին: Հաղթանակներ տանելով Հռոմի բոլոր սահմաններում՝ Տրայանոսը ծնկի բերեց նաև ամենահզոր հակառակորդին՝ Պարթևստանին: Սակայն Տրայանոսից հետո Հռոմը վերադարձավ իր հին սահմաններին:

Մյուս կայսրը **Մարկոս Ավրելիոսն** էր (161–180 թթ.): Նա խոշոր իմաստասեր էր և հմուտ պետական գործիչ: Նրա կարծիքով անիմաստ էր ընդլայնել տերությունը: Անհրաժեշտ էր բարձրացնել բնակիչների

բարեկեցությունն ու ապահովությունը, որպեսզի նրանք հպարտանան, որ ապրում են Հռոմի հովանու ներքո:

Մարկոս Ավրելիոս

Ճգնաժամը և դրա հաղթահարման փորձը

«Ոսկեդարից» հետո տերությունում ուժեղացան հակասությունները: Խախտվեց ներքին հավասարակշռությունը: Դրանից օգտվելով՝ հարևան բարբարոս ժողովուրդները սկսեցին ավերել նրա տարածքները:

Տերությունը համախմբելու նպատակով **212 թ. հրովարտակով** նրա բոլոր ազատ բնակիչները ճանաչվեցին Հռոմի քաղաքացի: Բայց դա նրանց արդեն ոչ մի առավելություն չէր տալիս:

Հռոմն անզոր էր կասեցնելու թշնամիների հարձակումները: Թուլացել էր կենտրոնական իշխանությունը: Տերության տարբեր ծագերում բռնկվեցին լեգեոնների ապստամբություններ: Լեգեոնների հրամանատարները հաճախ իրենց կայսր էին հռչակում և արշավում սեփական մայրաքաղաքի դեմ: Շատերն սկսեցին հասկանալ, որ Օգոստոսի ստեղծած «քողարկված միապետությունը» սպառել է իր հնարավորությունները: Դրանցից էր նշանավոր զորավար, կայսր **Դիոկղետիանոսը (284–305 թթ.):**

Բանակի օժանդակությամբ հռչակվելով կայսր՝ նա Հռոմեական կայսրությունում հաստատեց **բացարձակ միապետություն:** Հանրապետական հաստատությունները վերացվեցին կամ պահպանվեցին ձևականորեն: Բոլոր կարևոր հարցերը լուծվում էին

կայսերական արքունիքում: Բազմապատկվեց պաշտոնյաների քանակը:

Հսկայածավալ տերությունը կառավարելու համար Դիոկղետիանոսն ընտրեց **կառավարչակից:** Ինքը կառավարում էր արևելյան հարուստ նահանգներում, իսկ կառավարչակիցը՝ արևմուտքում: Հռոմն արդեն կորցրել էր իր դերը, թեպետ շարունակում էր համարվել մայրաքաղաք:

Բարեփոխվեց բանակը, փորձ կատարվեց զորացնելու հռոմեական ավանդական հոգևոր արժեքները և կրոնը: Հալածանքներ սկսվեցին տերությունում մեծ տարածում գտած քրիստոնեության դեմ:

Տերության բաժանումն ու անկումը

Դիոկղետիանոսի ձեռնարկումները չկարողացան փրկել դրությունը: Նրանից հետո

Դիոկղետիանոսի պատկերով ոսկեդրամ

Նրա ջանքերով Հռոմեական կայսրությունում հաստատվեց կառավարման նոր համակարգ: Դա ստացել է դոմինատ անվանումը: Այսինքն՝ տիրոջ բացարձակ իշխանություն: Ամեն բան դրվեց արքունիքի և պաշտոնեության խստիվ հսկողության տակ՝ բանակ, նահանգներ, տնտեսություն:

Դիոկղետիանոսը մտածում էր, որ Հռոմին սպառնացող ամենամեծ վտանգը իշխանության ժառանգականությունն է: Ուստի որոշեց, որ ինքն ու իր կառավարչակիցը կկառավարեն քսան տարի: Ապա կհեռանան՝ իշխանությունը հանձնելով իրենց ընտրած փոխարինողներին: Այդպես էլ արեց՝ 305 թվականին նա թողեց իշխանությունը:

Ասում են՝ մի անգամ, երբ Հռոմն ապրում էր ծանր օրեր, նրան խնդրեցին վերադառնալ: Նա հրաժարվեց՝ ասելով. «Ինչ իմաստ ունի, բարեկամնե՛րս, մի տեսե՛ք, թե ինչ լավ կաղամբ եմ աճեցնում»:

վերսկսվեցին իշխանության համար պատերազմները: Հաղթեց **Կոստանդինոս Մեծը**: Նա իր մայրաքաղաքը դարձրեց (330 թ.) Բոսֆորի նեղուցի ափին գտնվող հունական Բյուզանդիոն քաղաքը: Նա քաղաքը վերակառուցեց շքեղ շինություններով և կոչեց իր անունով՝ **Կոստանդնուպոլիս**:

Սակայն գնալով ակներև էր դառնում Հռոմեական կայսրության արևելյան և արևմտյան հատվածների տարբերությունը: Արևելքն անհամեմատ ավելի զարգացած էր, իսկ արևմուտքում գերակայում էին գյուղական կյանքն ու կենցաղը: Ի վերջո դա հանգեցրեց տերության բաժանմանը: **395 թ. այն տրոհվեց երկու ինքնուրույն կայսրությունների՝ Արևելյան կայսրության և Արևմտյան կայսրության:**

Արևելյան կայսրությունն աստիճանաբար վերակառուցվեց, և կյանքի կոչվեց մի նոր

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՍ ՄԵԾ

307–323 թթ. Հռոմեական տերությունում ընթանում էին զահակալական կռիվներ: Բազմաթիվ հակառակորդներից հաղթեց Կոստանդինոս Մեծը: Նա փորձեց շարունակել Դիոկղետիանոսի բարեփոխությունները: Սակայն հակառակ նրան՝ քրիստոնյաների նկատմամբ բարեհաճ էր: Կարծում էր, որ նրանց պետք է օգտագործել տերության ամրապնդման համար:

313 թ. Միլանի հրովարտակով քրիստոնեությունը տերության այլ կրոններին հավասար ճանաչվեց: 325 թ. կայսեր հովանավորությամբ Նիկեայում հրավիրվեց համաքրիստոնեական առաջին ժողովը:

Կայսրը մահացավ ռազմարշավի ժամանակ: Ասում են՝ նրան երևացել է լուսեղեն մի խաչ, և երկնային ձայնն ասել է. «Սրանով կհաղթես»: Մահվան մահճում Կոստանդինոս Մեծը մկրտվել է և մահացել իբրև քրիստոնյա:

Կոստանդինոս Մեծի ոսկեդրամը, որտեղ նա պատկերված է Արևի աստծո հետ, որը կոչ է հպատակ ժողովուրդներին՝ ճանաչելու նրա իշխանությունը:

տերություն՝ **Բյուզանդիան**: Վերջինս գոյատևեց ավելի քան հազար տարի:

Այլ կերպ ընթացավ արևմտյան հատվածի պատմությունը: Այն անընդհատ թուլանում էր, իսկ բարբարոս ժողովուրդների՝ **հոների, գոթերի, վանդալների** արշավանքները գնալով ավելի ահարկու էին դառնում: Նրանք թափանցում էին անգամ Իտալիայի խորքերը: Հռոմը բազմիցս գրավվեց ու կողոպտվեց:

476 թ. Արևմտահռոմեական կայսրությունը դադարեց գոյություն ունենալուց:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ր ժամանակաշրջանն է համարվում Հռոմեական կայսրության «ոսկեդարը»: Ինչո՞ւ:
2. Ի՞նչ քաղաքականություն էին վարում Մարկոս Տրայանոսը և Մարկոս Ավրելիոսը կայսրությունն ամրապնդելու համար:
3. Ինչ նպատակ էր հետապնդում 212 թ. հրովարտակը: Այն տվե՞ց սպասված արդյունքը:
4. Ո՞վ էր Դիոկղետիանոսը: Կառավարման մեջ ինչ նորություն մտցրեց նա:
5. Ո՞ւմ օրոք և ե՞րբ փոխվեց կայսրության մայրաքաղաքը:
6. Ինչո՞ւ տրոհվեց Հռոմեական կայսրությունը: Քանի՞ մասի բաժանվեց այն:
7. Ե՞րբ է կործանվել Արևմտյան հռոմեական կայսրությունը:

Գործնական աշխատանք

Տետրում գրե՛ք 96–180 թթ., 98–117 թթ., 161–180 թթ., 330 թ. , 395 թ., 476 թ. տարեթվերին համապատասխանող պատմական փաստերը:

Նոր հասկացություններ, անուններ

Հռոմեական կայսրության «ոսկեդարը», Մարկոս Տրայանոս, Մարկոս Ավրելիոս, Դիոկղետիանոս, բացարձակ միապետություն, կառավարչակից, Կոստանդինոս Մեծ, Կոստանդնուպոլիս, Բյուզանդիա, հոներ, գոթեր, վանդալներ, Արևմտյան հռոմեական կայսրություն

§ 26. ԿՐՈՆԸ

Հռոմեական դիցարանը

Հին հռոմեացիները երկրպագում էին բազմաթիվ աստվածների: Հեթանոսական աստվածները միավորված էին մեկ ընտանիքի մեջ: Համաձայն հռոմեական պատկերացումների՝ ողջ տիեզերքը նույնպես մեկ միասնական ընտանիք էր, որտեղ ամեն ոք կատարում էր իր պարտականությունները: Հռոմեական գլխավոր աստվածները հունականի պես տասներկուսն էին:

Յուպիտերը աստվածների հայրն էր, երկնքի, ամպրոպի, օրենքի դիցը:

Յունոնան՝ Յուպիտերի կինը, աստվածների մայրն էր, ընտանիքի դիցուհին:

Կվիրինը հասարակական կարգի և արդարության դիցն էր:

Մարսը ռազմի դիցն էր:

Վեներան սիրո և գեղեցկության դիցուհին էր:

Միներվան արհեստների, արվեստների, իմաստության և ռազմի դիցուհին էր:

Նեպտունը գետերի, լճերի, ծովերի, օվկիանոսի դիցն էր:

Վուլկանը ընդերքի, հրաբխի, դարբնության դիցն էր:

Մերկուրիոսը Յուպիտերի բանբերն էր, առևտրի, ճանապարհների, նավագնացության դիցը:

Դիանան անտառների, բուսականության, լուսնի դիցուհին էր:

Հռոմի Պանթեոնի ներքին հարդարանքը. Ջովանի Պաոլո Պանինի, XVIII դ.

Միներվա աստվածուհին, խճանկար

Սատուրնոսը երկրագործության, բերքատվության, առատության դիցն էր:

Լիբերոսը խաղողի, գինու դիցն էր:

Կային նաև բազում տեղական աստվածություններ: Հռոմեացիները հատուկ ակնածանքով էին վերաբերվում նախնիների հիշատակին: Պաշտում էին նրանց՝ իբրև ընտանիքի պահապան ոգիների: Աստվածներին ու նախնիներին նվիրված շատ տոներ կային: Այսուհանդերձ, հռոմեացիների և աստվածների հարաբերությունները գործնական էին: Դիմելով վերջիններիս՝ նրանք սովորաբար կրկնում էին. «Տալիս եմ, որ տաս»: Այսինքն՝ քեզ նվերներ եմ բերել և երկրպագում եմ, որ դու էլ ինձ տաս այն, ինչ ուզում եմ:

Մարկոս Ավրելիոսն իր զոհմակիցների հետ՝ Յուպիտերի տաճարում զոհաբերության ծիսակարգի ժամանակ

Քրիստոնեության ծագումը և տարածումը

Առաջին դարում Պաղեստինում ձևավորվեց մի նոր կրոն՝ **քրիստոնեությունը**: Այն նվիրված էր Տիեզերքն արարող ամենակարող Աստծու պաշտամունքին: Աստված հայրական սիրով է վերաբերվում աշխարհին ու մարդկանց և հանուն նրանց աշխարհ է առաքել իր միակ որդուն՝ **Հիսուս Քրիստոսին**: Նա փրկիչ է. եկել է աշխարհ, որպեսզի մարդկանց ցույց տա ճշմարիտ կյանքի ուղին:

Քրիստոսի հետևորդները հավատում էին, որ կատարելով նրա պատվիրանները՝ կարող են ապրել երջանիկ կյանքով, իսկ մահվանից հետո՝ հայտնվել դրախտում:

Քրիստոնյաների համայնքները սկզբնական շրջանում սակավաթիվ էին՝ բաղկա-

ցած հիմնականում ստորին խավերի ներկայացուցիչներից: Նրանց հետապնդում էին և ենթարկում կտտանքների: Հայտնի են դեպքեր, երբ նրանց կենդանի այրել են կամ կրկեսներում գցել գիշատիչներին որպես կեր:

Սակայն հետագայում վերաբերմունքն աստիճանաբար փոխվեց: Քրիստոնյաներին սկսեցին հարել նաև վերնախավի շատ ներկայացուցիչներ:

Քրիստոնեությունը տարածվեց Հռոմեական կայսրության բոլոր ծագերում՝ Ասորիքում, Եգիպտոսում, Փոքր Ասիայում, Հունաստանում, Իտալիայում, ավելի ուշ նաև Իսպանիայում, Գալլիայում, Բրիտանիայում և այլուր: Ամենուրեք ստեղծվեցին նրանց համայնքները՝ իրենց հոգևոր հովիվներով ու առաջնորդներով: Մարդկանց հրապուրում էր այն, որ քրիստոնեությունը ճանաչում էր Աստծու առաջ բոլորի ազատությունը և հավասարությունը՝ անկախ ունեցվածքից, դիրքից, ազգությունից:

Քրիստոնեության տարածման գործում մեծ նշանակություն ունեցավ նրանց **Սուրբ Գիրքը՝ Աստվածաշունչը**: Այն բաղկացած է **Հին** և **Նոր Կտակարաններից**: Նոր Կտակարանը նվիրված է Քրիստոսի և նրա տասներկու աշակերտների (առաքյալներ) գործերին և ուսմունքին:

Վերջին մեծ հալածանքները քրիստոնյաների նկատմամբ կատարվեցին **Դիոկղետիանոսի օրոք (301 թ.)**: Սակայն հռոմեական վերնախավի շրջանում հասունանում էր այն գաղափարը, որ քրիստոնեությունը հասարակության միավորման կարևոր միջոց է:



Հիսուս Քրիստոսի սրբապատկերը.
Սուրբ Եկատերինայի վանք,
VI դ., Եգիպտոս

Նրանց ազդեցությամբ ընդունվեց **Միլանի հրովարտակը** (313 թ.), որով քրիստոնեությունը հավասար ճանաչվեց այլ կրոններին և ստացավ գործունեության ազատություն: Այս գործընթացի ավարտը եղավ այն, որ հետագայում՝ 381 թ., քրիստոնեությունը դարձավ Հռոմեական կայսրության **պաշտոնական կրոնը**:

Հարցեր և առաջադրանքներ

1. Քանի՞ աստվածներ կային հռոմեական դիցարանում:
2. Սովորաբար հռոմեացիները աստվածներին դիմելիս ինչ էին ասում, և ինչ էր դա նշանակում:
3. Ե՞րբ է առաջացել քրիստոնեությունը: Ո՞վ է Քրիստոսը և ինչ առաքելությամբ էր եկել աշխարհ:
4. Ինչ է Աստվածաշունչը, քանի՞ մասից է բաղկացած:
5. Ո՞ր թվականին կայսրության տարածքում քրիստոնեությունը ճանաչվեց այլ կրոններին հավասար: Իսկ պաշտոնական կրո՞ն:

Գործնական աշխատանք

Կազմե՛ք աղյուսակ և լրացրե՛ք հռոմեականին համապատասխանող աստվածների անունները հին հունական և հայկական դիցարանից:

Նոր հասկացություններ, անուններ

Յուպիտեր, Յունոնա, Մարս, Վեներա, Հիսուս Քրիստոս, Պաղեստին, քրիստոնեություն, Միլանի 313 թ. հրովարտակ, Սուրբ Գիրք, պաշտոնական կրոն

§ 27. ՀՌՈՄԵԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Կրթությունը

Հռոմեացիների լեզուն լատիներենն էր: Գրավոր արտահայտման համար ստեղծվել էր **24 տառից բաղկացած լատինական այբուբեն:** Այդ այբուբենից այժմ էլ օգտվում են շատ ժողովուրդներ:

Հռոմեական պետությունն գրագետ մարդկանց կարիք ուներ: Ուստի Ք. ա. II դարից սկսած՝ ստեղծվեց **տարրական դպրոցների համակարգ**՝ պարտադիր բոլոր քաղաքացիների համար: Երեխաները սովորում էին գրել, կարդալ և հաշվել: Ծանոթանում էին իրենց հայրենիքի պատմության դրվագներին:

Դրանից հետո կրթությունը վճարովի էր: Կային միջին և բարձր կարգի դպրոցներ,

Վերգիլիոսն Օգոստոսի համար ընթերցում է իր «Էնեական» պոեմը, որտեղ շարադրված է Հռոմի պատմությունը՝ սկսած առասպելական նախահայր Էնեասից մինչև Օգոստոս:

«Մանուկ Կիկերոնը ընթերցանության պահին».
Վինչենցո Ֆոպպա

որտեղ աշակերտները խորացնում էին գիտելիքները քերականության, ճարտասանության և իրավագիտության մեջ: Առավել ընդունակները կրթությունը շարունակում էին հելլենիստական կենտրոններում՝ **Աթենք, Ալեքսանդրիա, Հռոդոս:** Նրանք դառնում էին հռոմեական պետության և մշակույթի ականավոր դեմքեր: Նրանցից էին **Պոմպեոսը, Կեսարը, Կատոն Կրտսերը** և ուրիշներ:

Գրականությունը

Հեռավոր ժամանակներում հռոմեացիների մեջ տարածված էին առասպելներն ու ասքերը աստվածների և հերոս նախնիների մասին: Գրի ու գրականության տարածման հետ երևացին արհեստավարժ գրողներ: Նրանցից են բանաստեղծներ **Վերգիլիոսը** և **Հորացիոսը**, ովքեր գովերգել են Օգոստոսի դարաշրջանը:

Զարգացավ նաև **ճարտասանությունը**: Աշխարհաժողովում, Ծերակույտում և դատարաններում հնչող տրամաբանված և հյութեղ խոսքը մեծ կարևորություն ուներ որոշումներ կայացնելիս: Ի հայտ եկան խոշոր ճարտասաններ, որոնց ճառերը հրատարակվում և ուսումնասիրվում էին: Նրանցից խոշորագույնը **Մարկոս Կիկերոնն** էր:

Գիտությունը

Հռոմեական գիտությունը կիրառական բովանդակություն ուներ: Ստեղծվել են կյանքի տարբեր բնագավառներին նվիրված աշխատություններ: Առանձնանում են

Կատոն Ավագի՝ գյուղատնտեսության, **Վիտրուվիոսի՝** ճարտարապետության մասին ընդհանրացնող գործերը:

Ստեղծվել են հանրագիտական բնույթի աշխատություններ, որոնք նպատակ ունեին ի մի բերելու տարբեր գիտությունների արդյունքները: Այդ առումով հիշատակելի է **Պլինիոս Ավագը**: Ակնառու էին հաջողությունները պատմագրության և իրավագիտության բնագավառում:

Հռոմեական ճարտարագիտությունն օգտագործում էր գիտության նվաճումները զուտ գործնական խնդիրներ լուծելու համար: Ստեղծվում էին աշխատանքի նոր գործիքներ ու սարքեր: Կառուցվում էին ճանապարհներ, կամուրջներ, ջրմուղներ:

Հսկա ամֆիթատրոնը նախատեսված էր թատերական և գլադիատորական ներկայացումների համար: Այն այսօր էլ կանգուն է Հռոմի կենտրոնում:

Կոլիզեում.
Իտալիա, Հռոմ, 72–80 թթ.

Ճարտարապետությունը և կերպարվեստը

Հռոմեական կառույցներն աչքի էին ընկնում իրենց չափերով ու հորինվածքի բարդությամբ: Դրան հասնում էին մաթեմատիկական ճշգրիտ հաշվարկներով և բետոնի կիրառմամբ: Վերջինս ստանում էին կրաքարի լուծույթի և հրաբխային մոխրի համադրությամբ: Դա իսկական հեղաշրջում առաջացրեց շինարարական արվեստում: Երևացին միաձույլ պատեր, կամարներ, գմբեթներ:

Ասվածն իր արտահայտությունն է գտել Հռոմի **ֆորումում (հրապարակ),** որն աչքի է ընկնում պալատական շինություններով, տաճարներով, հաղթակամարներով: Քիչ հեռու խոշորագույն մարզահամալիրը՝ **Կոլիզեումն** էր, որը տեղավորում էր 70 000 հանդիսատես: Նույն սկզբունքով էր կառուցվել նաև խոշորագույն տաճարը՝ **Պանթեոնը:** Վերջինիս գմբեթը հիմա էլ կանգուն է և համարվում է աշխարհում խոշորագույններից մեկը:

Ճարտարապետական շինությունները հռոմեացիները զարդարում էին շքեղ զար-

Տրայանոսի հաղթասյունը և դրանից մի դրվագ

դանախշերով, քանդակներով ու որմնանկարներով: Պահպանվել են դրանց բազում նմուշներ, որոնք աչքի են ընկնում կատարման բարձր վարպետությամբ: Դրանցում արտացոլված են հռոմեացիների կյանքի տարբեր կողմերը: Այս առումով հատկանշելի է **Տրայանոսի հաղթասյունը,** որի վրա պատկերված են պատմության կարևորագույն իրադարձությունները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն էր հռոմեացիների լեզուն: Քանի՞ տառից էր կազմված նրանց այբուբենը:
2. Կրթական ի՞նչ համակարգ կար Հռոմեական տերությունում: Ի՞նչ էին ուսումնասիրում վճարովի դպրոցներում:
3. Թվարկե՛ք հռոմեական գրականության և գիտության հայտնի ներկայացուցիչների:
4. Հռոմեական պատմիչներից ո՞ւմ կարող եք նշել, Հայաստանի պատմության մասին նրանցից ովքե՞ր են գրել կամ տեղեկություններ հաղորդել:
5. Ի՞նչ է ճարտասանությունը: Հայտնի ի՞նչ ճարտասանների կարող եք նշել:
6. Նշե՛ք հռոմեական ճարտարապետության մի քանի գլուխգործոց:

Նոր հասկացություններ, անուններ

Հռոդոս, Կատոն Կրտսեր, Վերգիլիոս, Հորացիոս, ճարտասանություն, Մարկոս Կիկերոն, Կատոն Ավագ, Պլինիոս Ավագ, Վիտրուվիոս, Կոլիզեում, Պանթեոն, բետոն, Հռոմի ֆորում, Տրայանոսի հաղթասյուն

V ԲԱԺԻՆ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Իտալիան իր բնական հնարավորություններով պայմաններ է ստեղծել Հին աշխարհի մեծագույն տերություններից մեկի ձևավորման համար: Միջին Իտալիայում ձևավորվեց մի քաղաք–պետություն, որն իր հիմնադրի անունով կոչվեց Հռոմ: Շուրջ երկուսուկես դար տևեց Հռոմի պատմության արքայական դարաշրջանը: Համաժողովրդական շարժման շնորհիվ Հռոմում հաստատվեց հանրապետություն (ռեսպուբլիկա):

   Երբ է հիմնադրվել Հռոմ քաղաքը և ո՞ւմ անունով է կոչվել: Ինչո՞ւ և ե՞րբ տապալվեց թագավորությունը Հին Հռոմում:

2. Նախապես Հռոմը փոքր պետություն էր: Սակայն Ք.ա. V դարից սկսած՝ Հռոմն աստիճանաբար հզորացավ և իր տիրապետությունը հաստատեց ողջ Իտալիայում: Պատճառը հանրապետական կարգն էր: Անցնելով բազում փորձությունների միջով՝ այն կատարելագործվեց: Համախմբեց հռոմեացիներին, ձևավորեց միասնական ժողովուրդ և տվեց հպարտություն՝ լինելու ազատ Հռոմի քաղաքացի:

   Ինչո՞վ ավարտվեց պատրիկների և պլեբեյների դարավոր պայքարը: Գծապատկերի տեսքով ներկայացրե՛ք Հռոմի Հանրապետության կառուցվածքը: Ինչպե՞ս ձևավորվեց իտալական համադաշնությունը:

3. Հռոմը, Ք.ա. III–II դարերում Իտալիայի սահմաններից դուրս պարտության մատնելով բազմաթիվ հակառակորդների, իր տիրապետությունը հաստատեց Միջերկրական ծովի ամբողջ ավազանում: Այսպես Հռոմը վերածվեց համաշխարհային տերության:

   Ո՞ր երկրներին պարտության մատնեց Հռոմը, և ինչպե՞ս ձևավորվեց Հռոմեական տերությունը: Պետությունների կախվածության ի՞նչ աստիճանակարգ ստեղծեց Հռոմը: Պարզաբանե՛ք «Բաժանի՛ր և տիրի՛ր» սկզբունքի էությունը:

4. Ք.ա. II դարի վերջին Հռոմի Հանրապետությունում առաջացել էր ճգնաժամ: Իրավիճակը շտկելու համար Գրաքոս եղբայրները փորձեցին վերականգնել միջին գյուղացիությունը, սակայն զոհ գնացին ավագանու դիմադրությանը: Ճգնաժամից դուրս գալու մյուս ուղին փորձեց զորավար Սուլլան՝ հաստատելով բռնապետություն: Դա ավելի սրեց հակասությունները: Բռնկվեց ստրուկների ապստամբություն՝ Սպարտակի գլխավորությամբ:

> *Որո՞նք էին հանրապետական կարգի ճգնաժամի պատճառները: Ինչ նշանակություն ունեցան Գրաքոս եղբայրների բարեփոխումները: Ինչո՞ւ ճգնաժամը հաղթահարելու Սուլլայի փորձը դրական արդյունքներ չտվեց: Ինչո՞վ է նշանավոր Սպարտակի ապստամբությունը:*

5. Հռոմեական հանրապետության ճգնաժամը Ք.ա. 50–30–ական թվականներին հասավ իր գագաթնակետին: Ծայրաստիճան սրվել էին հակասությունները ունեզուրկ հռոմեացիների և ավագանու, նահանգների ազգաբնակչության և Հռոմի, ստրուկների և ստրկատերերի միջև: Դա տեղիք տվեց քաղաքացիական պատերազմի և Կեսարի բռնապետության հաստատմանը: Սակայն Կեսարը դարձավ դավադրության զոհ: Այլ ճանապարհով ընթացավ Օկտավիանոսը: Նրա հաստատած կառավարման համակարգը և մյուս բարեփոխումները Հռոմեական տերությանը տվեցին ևս երեք հարյուր տարվա կյանք:

> *Ինչո՞ւ և ե՞րբ Հռոմում ստեղծվեց առաջին եռապետությունը: Ո՞րն էր Կեսարի բռնապետության տապալման գլխավոր պատճառը: Ինչ է պրինցիպատը, և ո՞վ է հաստատել այն: Բնութագրե՛ք Օկտավիանոսին, գնահատե՛ք նրա դերը Հռոմի պատմության մեջ:*

6. Հռոմեական տերությունն իր հզորության գագաթնակետին հասավ II դարում՝ տալով ակնառու արդյունքներ կյանքի բոլոր բնագավառներում: «Ոսկեդարից» հետո, սակայն, տերությունը սկսեց քայքայվել: Հռոմեական կայսրությունը տրոհվեց արևելյան և արևմտյան հատվածների:

> *Ո՞ր շրջանն է համարվում տերության «ոսկեդարը»: Ինչո՞ւ տերության ճգնաժամը հաղթահարելու փորձերն ի վերջո չհաջողվեցին: Ե՞րբ տրոհվեց տերությունը և քանի՞ մասի, դրանցից ո՞րն ավելի կենսունակ եղավ: Ինչո՞ւ և ե՞րբ կործանվեց Արևմտյան հռոմեական կայսրությունը:*

7. Հնուց ի վեր հռոմեացիները բազմաստված էին: Հավատում էին, որ աստվածներն իրենց բարեկեցության աղբյուրն են: Առաջին դարում ձևավորվեց քրիստոնեությունը, որը քարոզում էր մարդկանց հավասարությունը Հայր Աստծո առաջ: Չնայած դաժան հալածանքներին՝ նոր կրոնն աստիճանաբար տարածվեց և դարձավ Հռոմեական տերության պաշտոնական կրոնը:

> *Ներկայացրեք հին հռոմեական դիցարանը: Երբ է առաջացել քրիստոնեությունը, ինչո՞ւ այն տարածվեց Առաջավոր Ասիայում և Հռոմեական կայսրությունում: Ո՞ր երկրում է աշխարհում առաջինը քրիստոնեությունը հռչակվել պաշտոնական կրոն, իսկ Հռոմո՞ւմ:*

8. Հունական և հելլենական մշակույթը համադրելով իրենց ազգային արժեքներին՝ հին հռոմեացիները ստեղծեցին յուրօրինակ մշակույթ: Ստեղծվեցին արժեքներ, որոնք մարդկության մշակութային ժառանգության անբաժան մասն են: Դրա շատ նվաճումներ արդիական են նաև մեր օրերում:

> *Կրթական ինչ համակարգ էր գործում Հին Հռոմում: Աղյուսակի տեսքով ներկայացրեք հռոմեական մշակույթի և գիտության նվաճումներն ըստ բնագավառների: Թվարկեք հայտնի մշակութային գործիչների:*

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հնագույն շրջանից մինչև Ք. ա. XII հազարամյակ	—	Հին քարի դար
Ք. ա. XII–X հազարամյակներ	—	Միջին քարի դար
Ք. ա. X–VI հազարամյակի կեսեր	—	Նոր քարի դար
Ք. ա. VI հազարամյակի կեսից մինչև V հազարամյակի վերջ	—	Պղնձի–քարի դար
Ք. ա. IV հազարամյակի վերջեր	—	Առաջին պետությունների ձևավորումը Եգիպտոսում և Միջագետքում: Եգիպտական հիերոգլիֆային գրի և շումերական գաղափարագրի ստեղծումը
Ք. ա. XXXI դ.	—	Եգիպտոսի միացյալ թագավորության ստեղծումը
Ք. ա. XXX դ.	—	Շումերական քաղաքների վերելքը
Ք. ա. 3000–1100–ական թթ.	—	Հունաստանի պատմության Կրետե–միկենյան դարաշրջանը
Ք. ա. III հազարամյակի սկիզբ	—	Գիլգամեշի վիպերգի ստեղծումը
Ք. ա. մոտ 2600 թ.	—	Քեոփսի բուրգի կառուցումը
Ք. ա. III հազարամյակի սկիզբ	—	Սեպագրի ստեղծումը
Ք. ա. 2330–2295 թթ.	—	Սարգոն Աքքադացի. Աքքադի պետության ստեղծումը
Ք. ա. XXII դ.	—	Էլամի պետության կազմավորումը
Ք. ա. XX դ.	—	Ասորեստանի պետության ստեղծումը
Ք. ա. 1792–1750 թթ.	—	Համմուրապի՝ Բաբելոնի արքա
Ք. ա. XVII դ.	—	Արիական ցեղերի ներխուժումը Իրանից Հնդկաստան

Ք. ա. XVII–XII դդ.	—	Խեթական պետությունը
Ք. ա. XVI–XIII դդ.	—	Միտաննի պետությունը
Ք. ա. 1467–1413 թթ.	—	Թութմոս III փարավոնի գահակալությունը
Ք. ա. 1279–1213 թթ.	—	Ռամզես II փարավոնի գահակալությունը
Ք. ա. 1258 թ.	—	«Հավերժական բարեկամության» պայմանագրի կնքումը Եգիպտոսի և Խեթական պետության միջև
Ք. ա. XIII դ. կեսեր	—	Տրոյական պատերազմը
Ք. ա. XIII–XII դդ.	—	Ասորեստանի վերելքի շրջանը
Ք. ա. XII–IX դդ.	—	Հունաստանի պատմության հոմերոսյան դարաշրջանը
Ք. ա. X դ.	—	Փյունիկյան հնչյունագրի ստեղծումը
Ք. ա. IX–VI դդ.	—	Վանի թագավորությունը (Ուրարտու) Հայաստանում
Ք. ա. IX դ. վերջ	—	Կարթագենի հիմնադրումը փյունիկեցիների կողմից
Ք. ա. VIII–VI դդ.	—	Հունաստանի պատմության արխաիկ դարաշրջանը. հունական մեծ գաղութացումը
Ք. ա. VIII դ.	—	Այբուբենի ստեղծումը Հունաստանում
Ք. ա. 782 թ.	—	Էրեբունիի հիմնադրումը
Ք. ա. 776 թ.	—	Առաջին օլիմպիական խաղերը Հունաստանում
Ք. ա. 753 թ.	—	Հռոմի հիմնադրումը
Ք. ա. 753–510 թթ.	—	Հռոմի պատմության թագավորական շրջանը
Ք. ա. 721–705 թթ.	—	Սարգոն II–ի գահակալությունը
Ք. ա. 612 թ.	—	Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի գրավումը

Ք. ա. 605–562 թթ.	—	Նաբուգոդոնոսորը՝ Բաբելոնի արքա: Կախովի այգիների և Բաբելոնի աշտարակի կառուցումը
Ք. ա. VI դ.	—	Բուդդայականության առաջացումը
Ք. ա. 594 թ.	—	Սոլոնի բարեփոխումները Աթենքում
Ք. ա. 557 թ.	—	Պիսիստրատի տիրանիայի սկիզբը
Ք. ա. 550 թ.	—	Պարսկական տերության հիմնադրումը Կյուրոս Մեծի կողմից
Ք. ա. 522–486 թթ.	—	Դարեհ I–ը՝ Աքեմենյան արքա
Ք. ա. 510 թ.	—	Հանրապետության հաստատումը Հռոմում
Ք. ա. 506 թ.	—	Կլիսթենեսի բարեփոխումները
Ք. ա. 500–449 թթ.	—	Հույն–պարսկական պատերազմները
Ք. ա. 490 թ.	—	Մարաթոնի ճակատամարտը
Ք. ա. 480 թ.	—	Սալամինի ճակատամարտը
Ք. ա. 451 թ.	—	12 տախտակների օրենքների ընդունումը Հռոմում
Ք. ա. 444–429 թթ.	—	Պերիկլեսը՝ Աթենքի առաջին ստրատեգոս
Ք. ա. 431–404 թթ.	—	Պելոպոնեսյան պատերազմը
Ք. ա. 359–336 թթ.	—	Փիլիպոս II–ի գահակալությունը
Ք. ա. 336–323 թթ.	—	Ալեքսանդր Մակեդոնացի
Ք. ա. 334–325 թթ.	—	Ալեքսանդր Մակեդոնացու Արևելյան արշավանքը. համաշխարհային տերության ստեղծումը
Ք. ա. 332 թ.	—	Ալեքսանդրիա քաղաքի հիմնումը Եգիպտոսում
Ք. ա. 331 թ.	—	Գավգամելայի ճակատամարտը

Ք.ա. 305 թ.	—	Հելլենիստական պետությունների՝ Եգիպտոս, Սելևկյան պետություն, Պերգամոն, Մակեդոնիա, ստեղծումը
Ք.ա. 246–210 թթ.	—	Ցին Շի Հուանդի՝ միավորված Չինաստանի առաջին կայսրը
Ք.ա. 220 թ.	—	Չինական մեծ պարսպի կառուցման սկիզբը
Ք.ա. 218–201 թթ.	—	Պունիկյան երկրորդ պատերազմը
Ք.ա. 216 թ.	—	Կաննեի ճակատամարտը
Ք.ա. 202 թ.	—	Հաննիբալի պարտությունը հռոմեացիներից
Ք.ա. 196 թ.	—	Հունաստանի նվաճումը Հռոմի կողմից
Ք.ա. 190 թ.	—	Մագնեսիայի ճակատամարտը
Ք.ա. 189 թ.	—	Մեծ Հայքի անկախության վերականգնումը Արտաշես I արքայի կողմից
Ք.ա. 146 թ.	—	Կարթագենի կործանումը Հռոմի կողմից
Ք.ա. II դ. վերջ – Ք.ա. I դ. սկիզբ	—	Չինաստանից մինչև Սև ծով 7000 կմ ձգվող Մետաքսի ճանապարհի կառուցումը
Ք.ա. 90 թ.	—	Իտալիկներին Հռոմի քաղաքացիության շնորհումը
Ք.ա. 84 թ.	—	Սելևկյան պետության գրավումը Տիգրան Մեծի կողմից
Ք.ա. 82–78 թթ.	—	Սուլլայի բռնապետությունը
Ք.ա. 73–71 թթ.	—	Սպարտակի ապստամբությունը
Ք.ա. 66 թ.	—	Արտաշատի դաշնագրի կնքումը Հռոմի և Մեծ Հայքի միջև
Ք.ա. 60 թ.	—	Առաջին եռապետության ստեղծումը Հռոմում՝ Կեսար, Պոմպեոս, Կրասոս
Ք.ա. 53 թ.	—	Կրասոսի զոհվելը Խառանի ճակատամարտում

Ք. ա. 49 թ.	—	Կեսարն անցնում է Ռուբիկոն գետը
Ք. ա. 44 թ.	—	Հուլիոս Կեսարի սպանությունը
Ք. ա. 43 թ.	—	Երկրորդ եռապետության ստեղծումը Հռոմում՝ Օկտավիանոս, Անտոնիոս, Լեպիդոս
Ք. ա. 31 թ.	—	Ակտիումի ծովամարտը
Ք. ա. 27 – Ք. հ. 14 թթ.	—	Օկտավիանոս (Օգոստոսի) պրինցիպատը
I դար	—	Քրիստոնեության առաջացումը
96–180 թթ.	—	Հռոմեական տերության «ոսկեդարը»
98–117 թթ.	—	Տրայանոսի գահակալությունը
161–180 թթ.	—	Մարկոս Ավրելիոսի գահակալությունը
212 թ.	—	Հռոմեական քաղաքացիության տարածումը նահանգների ազատ բնակչության վրա
284–305 թթ.	—	Դիոկղետիանոսի գահակալությունը
313 թ.	—	Միլանի հրովարտակը: Քրիստոնեության ճանաչվելը մյուս կրոններին հավասար
330 թ.	—	Կոստանդնուպոլիսը՝ Հռոմեական կայսրության նոր մայրաքաղաք
381 թ.	—	Քրիստոնեության ճանաչումը Հռոմեական կայսրության միակ պաշտոնական կրոն
393 թ.	—	Անտիկ շրջանի վերջին օլիմպիական մարզական խաղերը
395 թ.	—	Հռոմեական կայսրության բաժանումը երկու մասի
476 թ.	—	Արևմտյան հռոմեական կայսրության կործանումը. Հին աշխարհի պատմության ավարտը

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՆԴՂԱԿ




Քրիստոսից առաջ
1 թ.
Քրիստոսից հետո
800–701
700–601
600–501
500–401
400–301
300–201
200–101
100–1
1–100
101–200
201–300
301–400
401–500
501–600
601–700
701–800
801–900
901–1000
1001–1100
1101–1200
1201–1300
1301–1400
1401–1500
1501–1600
1601–1700
1701–1800
1801–1900
1901–2000
2001–2100
VII VI V IV III II I
ԴԱՐԸ
I II III IV V VI VII VIII IX X XI XII XIII XIV XV XVI XVII XVIII XIX XX XXI
աջին հազարամյակ
Առաջին հազարամյակ
Երկրորդ հազարամյակ
Հունաստան
Հռոմ (Իտալիա)
1
2
3
Չինաստան
Հնդկաստան
4
5
6
7
Հայաստան
դրումը
Ալեքսանդր Մակեդոնացի (336-323)
Տիսուս Քրիստոսի ծնունդը
Կոլիզեում (80)
Հռոմեական կայսրության ծաղկման շրջանը
Կոստանդինոս Մեծ
(330)
Կոստանդնու-պոլսի հիմնադրումը
Արևմտյան Հռոմեական կայսրության կործանումը. 476 թ. Հին աշխարհի պատմության ավարտը
ենոնը
ում
Աշոկա (273-232)
1 Աքեմենյան Իրան
2 Պարթևական տերություն
3 Սասանյան Իրան
4 Վանի թագավո-ություն (Ուրարտու)
5 Երվանդունիներ
6 Արտաշեսյաններ
7 Արշակունիներ

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵԶՐԵՐԻ (ՏԵՐՄԻՆՆԵՐԻ) ԲԱՌԱՐԱՆ

Ակադեմիա	Այսպես էր կոչվում Ք.ա. IV դարում Աթենքում Պլատոնի հիմնած դպրոցը:
Ամֆիթատրոն	Հին Հունաստանում և Հռոմում թատերական ներկայացումների համար կառուցված կիսաշրջանաձև շինություն:
Անտիկ *(լատ.՝ հին)*	Հին Հունաստանին և Հին Հռոմին վերաբերող. օրինակ՝ անտիկ մշակույթ, պատմական շրջան:
Արենա	Հին Հռոմի ամֆիթատրոնների ձվաձև հրապարակը:
Արեոպագոս	Բարձրագույն դատական և վերահսկող մարմին Հին Աթենքում:
Արիադնեի կծիկ	Օգնության միջոց. ըստ հին հունական դիցաբանության՝ Կրետեի թագավոր Մինոսի դուստր Արիադնեն աթենացի հերոս Թեսևսին տվեց մի կծիկ, որի օգնությամբ նա դուրս եկավ Լաբիրինթոսից:
Արիացիներ	Ռազմատենչ ցեղեր, որոնք Հայկական լեռնաշխարհից Ք.ա. II հազարամյակի սկզբին ներթափանցեցին Իրան, ապա որոշ ժամանակ անց՝ Հնդկաստան: Ստեղծեցին զարգացած քաղաքակրթություն:
Բազմաստվածություն	Այլ կերպ՝ հեթանոսություն. կրոնի ձև, երբ մարդիկ երկրպագում էին բազմաթիվ աստվածների և նրանց դասակարգում դիցարանի ձևով:
Բարեփոխում *(բարենորոգում, ռեֆորմ)*	Հասարակական կյանքի կամ դրա որևէ բնագավառի վերափոխում: Նպատակն է առաջընթաց ապահովել:
Բռնապետ *(լատ.՝ դիկտատոր)*	Անսահմանափակ իշխանություն ունեցող պետության ղեկավար. Հին Հռոմում բռնապետը նշանակվում էր Սենատի կողմից արտակարգ իրավիճակներում:
Բուդդայականություն	Համաշխարհային երեք կրոններից մեկը. հիմնադրել է Բուդդան Հնդկաստանում Ք.ա. VI դարում:

Բուրգ	Այդպես են կոչվում Եգիպտոսի փարավոնների համար կառուցված դամբարանները:
Գաղութ	Հին աշխարհում այդպես էին կոչվում պոլիսների կողմից հիմնականում ծովափերին կառուցված բնակավայրերը, որոնք հաճախ ենթակա էին հիմնադիր պոլիսին:
Գիմնազիոն *(գիմնազիա)*	Հին Հունաստանում մարմնակրթությամբ զբաղվելու շինություն:
Գլադիատոր	Այն հռոմեական ստրուկները, որոնց հատուկ վարժեցնում էին՝ ամֆիթատրոններում մենամարտելու համար:
Թատրոն	Հունարեն՝ հանդիսությունների վայր, ներկայացում. հին հույները թատրոնն անվանում էին «քաղաքացիների դպրոց»:
Ժողովրդավարություն *(դեմոկրատիա)*	Կառավարման ձև, երբ օրենքների ստեղծմանը և պետության կառավարմանը մասնակցում է ողջ ժողովուրդը (հունարեն՝ դեմոս):
Իմաստասիրություն *(փիլիսոփայություն)*	Իմաստասեր (փիլիսոփա) են անվանել Հին Հունաստանի և Հռոմի նշանավոր մտածողներին և գիտնականներին:
Լակոնական ոճ	Հնարավորինս քիչ բառերով միտքը բովանդակալից արտահայտելու ոճ: Բնորոշ է եղել հին սպարտացիներին: Նրանք ապրում էին Լակոնիա մարզում. այստեղից էլ՝ անվանումը:
Լեգեոն	Հին Հռոմի բանակի հիմնական զորամիավորում. կազմված էր շուրջ 6000 զինվորից:
Խմբիշխանություն *(հուն.՝ օլիգարխիա)*	Հունական պոլիսներում կառավարման ձև, երբ իշխանությունը գտնվում էր ավագանու ընտրախավի ձեռքում:
Ծերակույտ (Սենատ)	Ավագանու ներկայացուցիչներից կազմված ժողով. Հին Հունաստանում և Հռոմում օրենսդիր գերագույն մարմին:
Հանրապետություն *(լատ.՝ ռեսպուբլիկա – հանրային գործ)*	Պետության ձև, որտեղ իշխանության բարձրագույն մարմինները կազմվում են ընտրովի ներկայացուցիչներից:
Հիերոգլիֆ	Բառացի նշանակում է սրբազան գիր: Գրի հնագույն տեսակ՝ գաղափարագիր. առաջացել է Եգիպտոսում Ք.ա. IV հազարամյակի վերջին:

Հին քարի դար	Հունարեն՝ պալեոլիթ. նախնադարի պատմական ամենամեծ շրջանը:
Հռետոր	Ճարտար, տպավորիչ, ազդեցիկ խոսել կարողացող մարդ՝ ճարտասան:
Կայսր	Այդպես է կոչվել Հռոմեական կայսրության միապետը: Ծագել է Կեսարի անունից:
Կոնսուլ	Հին Հռոմի պետական բարձրագույն պաշտոնյա:
Մագաղաթ *(ասոր.՝ գալարված մագիյան)*	Կաշվից պատրաստված գրանյութ:
Մետաքսի ճանապարհ	Հին աշխարհի և միջնադարի նշանավոր միջազգային առևտրական ճանապարհ, որը 7000 կմ ձգվում էր Չինաստանից մինչև Եվրոպա: Դրա մի հատվածը անցնում էր Հայաստանի տարածքով:
Միապետություն	Կառավարման ձև, որի դեպքում իշխանությունը կենտրոնացված է մեկ անձի՝ միապետի ձեռքում:
Միջին քարի դար	Հունարեն՝ մեզոլիթ. նախնադարի պատմության երկրորդ շրջանը:
Նոր քարի դար	Հունարեն՝ նեոլիթ. նախնադարի պատմության երրորդ շրջանը:
Չինական մեծ պարիսպ	Հին աշխարհի նշանավոր կառույցներից մեկը: Այն Չինաստանը հյուսիսից պաշտպանում էր թշնամիների հարձակումներից: Երկարությունը 5000 կմ է:
Պապիրուս	Գրանյութ, որը պատրաստվում էր եղեգնի մի տեսակից: Ցողունից ստանում էին հատուկ նյութ, չորացնում էին, հարթեցնում և վրան գրում:
Պատրիկ	Հին Հռոմի ավանդական ընտանիքի (տոհմի) անդամ. նշանակում է հայր ունեցող:
Պլեբեյ	Բառացի նշանակում է դրսից լցվածներ. Հին Հռոմում այդպես էին կոչվում ներգաղթած բնակիչները, որոնք երկար ժամանակ զրկված էին քաղաքացիությունից:

Պղնձի–քարի դար	Հունարեն՝ էնեոլիթ. նախնադարի պատմության նեոլիթին հաջորդող շրջանը:
Պյուռհոսյան հաղթանակ	Նշանակում է հաղթանակ, հաջողություն, որը համարժեք չէ դրա ձեռքբերման համար արված զոհողություններին: Առաջացել է Էպիրուսի արքա Պյուռհոսի անունից, որը Ք.ա. III դարի առաջին կեսին հռոմեացիների դեմ տարավ հաղթանակ՝ չափից ավելի մեծ զոհերի գնով:
Պրինցիպատ *(լատ.՝ առաջին բառից)*	Հռոմեական վաղ կայսրության դարաշրջանում ձևավորված կառավարման ձև՝ «քողարկված միապետություն»:
Պրովինցիա *(նահանգ)*	Հռոմեական տերության վարչական մեծ միավոր. լատիներեն բառացի նշանակում է պարտված երկիր:
Սատրապություն	Աքեմենյան Իրանի վարչական միավոր:
Սեպագիր	Գրային համակարգ, որն առաջացել է Ք.ա. III հազարամյակի սկզբին Շումերում: Անվանումն առաջացել է կավի կամ քարի վրա արվող գրային նշանների ձևից, որոնք նման էին սեպիկների:
Վարնա *(հասարակական խումբ)*	Հին Հնդկաստանի բնակչության չորս խմբերի ընդհանուր անվանումը:
Տիրան *(բռնակալ)*	Հին Հունաստանում բռնի ուժով իշխանությունը գրաված և միանձնյա կառավարող անձ:
Փարավոն	Բառացի նշանակում է մեծ տան՝ պալատի տեր. այդպես էին կոչվում Հին Եգիպտոսի արքաները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԲԱԺԻՆ I. ՆԱԽՆԱԴԱՐ

§1. ՀԻՆ ՔԱՐԻ ԴԱՐ (ՊԱԼԵՈԼԻԹ) 5
§2. ՄԻՋԻՆ ԵՎ ՆՈՐ ՔԱՐԻ ԴԱՐԵՐ. ԱՆՑՈՒՄ ՆՍՏԱԿԵՑՈՒԹՅԱՆ 9
§3. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ 14
I ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ 18

ԲԱԺԻՆ II. ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔ

§4. ԵԳԻՊՏՈՍ 21
§5. ՄԻՋԱԳԵՏՔԻ ԱՌԱՋԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 25
§6. ՄԻՋԱԳԵՏՔԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 29
§7. ՀԻՆ ՓՈՔՐ ԱՍԻԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԸ 33
§8. ՀՆԴԿԱՍՏԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆ 37
§9. ԱՔԵՄԵՆՅԱՆ ԻՐԱՆԸ 41
§10. ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԿՐՈՆՆԵՐԸ 45
§11. ԳԻՐ ԵՎ ԱՐՎԵՍՏ 48
§12. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ 54
II ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ 58

ԲԱԺԻՆ III. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

§13. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԸ 61
§14. ԱՐԽԱՒԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԱՍՏԱՆԸ (Ք. Ա. VIII–VI ԴԱՐԵՐ) 67
§15. ՀԻՆ ՍՊԱՐՏԱՆ ԵՎ ԱԹԵՆՔԸ 72
§16. ՀՈՒՆԱՍՏԱՆԸ Ք. Ա. V ԴԱՐՈՒՄ 78
§17. ԴԱՍԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 84
III ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ 89

ԲԱԺԻՆ IV. ՀԵԼԼԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

§18. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑԻ 91
§19. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ 97
IV ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ 103

ԲԱԺԻՆ V. ՀԻՆ ՀՌՈՄ

§20. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԸ 105
§21. ՀՌՈՄԵԱԿԱՆ ՔԱՂԱՔ–ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ Ք. Ա. V–III ԴԱՐԵՐՈՒՄ 110
§22. ՀՌՈՄԵԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ 115
§23. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՃԳՆԱԺԱՄԸ 120
§24. ԱՆՑՈՒՄ ՊՐԻՆՑԻՊԱՏԻՆ 125
§25. ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԾԱՂԿՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ 130
§26. ԿՐՈՆԸ 135
§27. ՀՌՈՄԵԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 139
V ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ 144

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 147
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵԶՐԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ 154

ԱԼԲԵՐՏ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ, ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ԱՐԱՄ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՔՈՍՅԱՆ

ՀԱՄԱՀԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. ՀԻՆ ԱՀԱՐՀ

6–ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար

АЛЬБЕРТ АНДРАНИКОВИЧ СТЕПАНЯН, ГАЙК ГРИГОРЬЕВИЧ АВЕТИСЯН, АРАМ ВАГАРШАКОВИЧ КОСЯН

ВСЕМИРНАЯ ИСТОРИЯ. ДРЕВНИЙ МИР

6–ОЙ КЛАСС

Учебник для общеобразовательной основной школы
(на армянском языке)

Издательство “Зангак“, Ереван, 2013

Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

Գրքում օգտագործված նկարներ *(հապավումներ՝ ն — ներքև, վ — վերև, ա — աջ, ձ — ձախ)*

էջ 1՝ © Marie-Lan Nguyen, էջ 12 (վ)՝ © Jon Sullivan, էջ 15 (վ)՝ © Lewis MacDonald, էջ 15 (ն)՝ © Andreas Praefcke, էջ 25՝ © Iraqi Directorate General of Antiquities, էջ 31 (վ)՝ Պիտեր Բրյուգել Ավագ. *«Բաբելոնի աշտարակը»,* էջ 31 (ն)՝ Կոստանդին Ավագյան. *«Շամիրամի կախովի այգիները»,* էջ 39՝ © airunp, էջ 44՝ © Roozbeh Taassob, էջ 48՝ © Jon Bodsworth, էջ 49 (ն)՝ Լեոն Կոնյե. *«Շամպոլյանի դիմանկարը»,* էջ 51՝ © Rictor Norton, էջ 55՝ © Jeff Dahl, էջ 62՝ © Leonard G., էջ 65՝ ժան Ավգուստ Դոմինիկ Ինգրես. *«Հոմերոսի փառաբանումը»*, էջ 67՝ © Adam L. Clevenger, էջ 69՝ © Gunnar Bach Pedersen, էջ 72՝ © C. Paul Jennewein, էջ 73 (վ)՝ © Κούμαρης Νικόλαος, էջ 76՝ © Giovanni Dall’Orto, էջ 79՝ Վիլհելմ ֆոն Կաուլբախ. *«Սալամինի ճակատամարտը»,* էջ 85՝ Ռաֆայել Սանտի. *«Աթենքի դպրոցը»,* էջ 88՝ Միրոն. *«Սկավառականետողը»,* էջ 93՝ Շաղլ Լեբրեն. *«Ալեքսանդր Մակեդոնացու մուտքը Բաբելոն»,* էջ 94՝ © J L G Ferris, էջ 100՝ © O. Von Corven, էջ 101՝ © Raimond Spekking, էջ 106՝ © Frans Huys, էջ 112՝ Չեզարե Մակկարի. *«Կիկերոնը դատապարտում է Կատիլինային»,* էջ 125 ն՝ © Diagram Lajard, էջ 127՝ © Andreas Wahra, էջ 135՝ Ջովանի Պաոլո Պանինի. *«Պանթեոնի ներսույթը»,* էջ 136 (վ)՝ Էլիհու Վեդդեր. *«Միներվա»,* էջ 139՝ ժան–ժոզեֆ Թայլասոն. *«Վերգիլիոսն ընթերցում է իր «Էնեականը» Օգոստոսի և Օկտավիայի համար»,* էջ 140՝ Վինչենցո Ֆրոսպա. *«Մանուկ Կիկերոնն ընթերցանության պահին»:*

Հրատարակչության տնօրեն՝	Էմին Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝	Արա Բաղդասարյան
Համակարգչային ձևավորումը՝	Լալա Հովսեփյանի
Շապիկի համակարգչային ձևավորումը՝	Արևիկ Հակոբյանի
Տեխնիկական խմբագիր՝	Նվարդ Փարսադանյան
Սրբագրիչ՝	Սերժ Մելքումյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 10 տպ. մամուլ, 12,9 պայմ. մամուլ: Տառատեսակը՝ «Ասպետ»:
Պատվեր՝ 07/Հ–13: Տպաքանակը՝ 36 300:

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Հեռապատճեն՝ (+37410) 23 25 95, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am